



Հայկական գիտահետազոտական հանգույց Armenian Research & Academic Repository



Սույն աշխատանքն արտոնագրված է «Ստեղծագործական համայնքներ
ոչ առևտրային իրավասություն 3.0» արտոնագրով

**This work is licensed under a Creative Commons Attribution-NonCommercial
3.0 Unported (CC BY-NC 3.0) license.**

Դու կարող ես.

պատճենել և տարածել նյութը ցանկացած ձևաչափով կամ կրիչով
ձևափոխել կամ օգտագործել առկա նյութը ստեղծելու համար նորը

You are free to:

Share — copy and redistribute the material in any medium or format

Adapt — remix, transform, and build upon the material

W. G.

1154

Ա. Ե.
1154

Ն Ո Ւ Ա Գ Ք

Հ. ՂԵԻՈՆԴԵԱՅ Մ. ԱԼԻՇԱՆԵԱՆ


ՄԻԻԹԱՐԵԱՆ ՎԱՐԴԱՊԵՏԻ



ՎԵՆԵՏԻԿ

Ի ՍՈՒՐԲ ՂԱԶԱՐ

ՌՅԻ - 1858



ՅԻՇԱՏԱԿ ՀՈԳԻՈՅ

Մ Ա Ն Ո Ի Կ Պ Է Յ Ի

ԱՍՏՈՒԱԾԱՏԵԲԱՆ

29-1157



1154-31

ՏԷՐՈՒՆԻ

ԻՄՈՅ

ՀՈԳԵԾՄԵ ՀԱՐՑ

ՀՈԳԵԿՑՈՐԴՍ ԵՂԲԱՐՑ

ՀՈԳԵՅՈՅՍ ՀԱՆԴԵՐՁԵԼՈՅ

Յ Ի Շ Ա Տ Ա Կ



Հ. Ղ. Մ. Ա.

ՆԱԽԵՐԳԱՆ

Արք զունայնոչքիւն ծանոցեալ
 Դիւրաժախի կենցադոյս,
 Առ ի պատիր գեղոյն սարտոցեալ
 Կառտոցէք զաչս յերկնի յոյս .
 Հարեալ զհեղտակաւնս առարուչ
 Չերկրիս քաժակ մեղրարոյն,
 Յամբիժ հոգի, սիրտ ի մարուչ
 Միւրէք ըզսրացըս սիրոյն,
 Ար ի վայրարարչ կրիցս ազատ
 Ադաւնարեւ թըռչանօք՝
 Ըզհոգեխաղացն անապատ
 Ընտրե իշր կայս ըռռ ոչ անօք,
 Անհաւ հեզամբունչ հեզատոց
 Յանմարդաճայնն ամայնոց
 Ճարակել զհերքիւնըն պատուչ
 Յերկնածորան ի խոխոց .
 Օ՛ն, վերացարուչ յաշխարհե
 Թեքեւարեւն հոգիք դուք,
 Աշր դեզերեւոցն հաղք ըարե
 Իշխան օդոյս մահաշուք,
 Երբայք յանըզբաղ մեհաստան
 Յաստուածատունկ անոյր ի դրախտ,

Ոչր համօրէն բոյսք անծորան ,
 Ոչր համօրէն ինչ անաստ .
Անդ ներակրրրեալ ի հանդէս
 Յար ընդ երկին քեզակոխ ,
 Ի սրանդրիտաւայր ի հովտես
 Շարժեղ ի վեր քայրափոխ ,
Ըգյաշխունից քեզածռնե
 Յառանձնոչքեանց շրտոչիւնս
 Եւ զսիրոյ մեջնանցըն ցածռնե
 Գրուցիք զՀոգին ի քիկոչնս .
Որով վերամբարձ յանկարծոց
 Սիրտ՝ յանձկային ի կայանս ,
 Ըզճաներադանդադ մարմնոյն յոճ
 Թօրափերով ի խոյանս ,
Երբեալ հանգիցէ ի սրբոց
 Սրակայանին սիրայնոյ ,
 Որոյ հրաշայիքն անսրատոռն ,
 Ի գիրկ , ի խորս **Ա**տոռնոյ :
Անդ , զի առ հոգի եւ առ սեր
 Ոչ ինչ է ծանր առ ի գործ ,
 Մաղբեացիք եւ վասն իմ առ **Տ**եր ,
 Որ արկի զհով սիրտս ի փորձ .
Մի գրանալ փարձ ցոչրտ քաժակիս՝
 Զոր չեռոչսցէ ինքն Յիստս .
 Եւ առ ցամաք սիրտս ի շիրմիս
 Սա մաղբիցէ զարտատոռն :

ԽՕՍԻՔ

ԸՆԴ ԱՍՏՈՒԾՈՅ

Handwritten text, likely bleed-through from the reverse side of the page. The text is mostly illegible due to fading and bleed-through.

PROBATION

Handwritten text, likely bleed-through from the reverse side of the page. The text is mostly illegible due to fading and bleed-through.



ԽՕՍՔ

ԸՆԴ ԱՍՏՈՒԾՈՅ



ՏԷՐ ԵԹԷ ԶՇՐԹՈՒՆՍ ԻՄ ԲԱՆԱՍ

Աստուած իմ, լի են խորք սրբոյնս, եւ կայ լուս.
Բարբառք բազումք յարգեւանի յարամուր .
Որպէս աղբիւր հարուստ յուղիկց յորձնեաանդ՝
Եւ չունիցի հունս ափռելոյ ի մարմանդ :
Ո՛ր ապր կրբից որ գուպարին ներքս ի յիս
Աղագս ելի գաանել եւ գոլ լրանելս .
Ո՛ր ապր սրբոյնս հառաչանաց թափ ի գուրս
Վաղել վանել ըզուրջ պատուարս եւ ամուրս ,
Հորգել խաղալ դարիւ դարիւ եւ լնուլ
Ըզբարձր եւ խոր՝ յոր ժամանեն միտք անգուլ :

Փակեալ են Տէր գրուեք իմ ներքին հաղաղի
 Եւ բանալոյն առ ի վերուստ փափագի . . .
 Բայց ինձ տէր , բայց ինձ ըզբրթունըս սրբախ
 Եւ երգեսցէ հողւոյս բերան քեզ օրհնիս .
 Զի բանալով եւ ես բացի առ աշխարհ ,
 Լըսէր , եւ մերթ հաճէր մերթ տայր արհամարհ .
 Հեղի բազում անգամ ղերկրաւ բանս յօգուտ ,
 Եւ ընկալեալ՝ ապա եթող կաց անփոյթ :
 Տէր , ղինչ օգուտ սրտի խօսել յայլոց լուր
 Եւ պատասխան չտոնուլ ղիւրիչ կըրիցն իւր .
 Որ առ երկիր խօսի՝ երկրի եւ լըսէ .
 Եւ ձայն երկրի՝ ղսիրա յաւիտեան ոչ լըցցէ :
 Տէր , անգոսնեաց սիրտս այս ղաշխարհ , չէ նորա ,
 Ոչ կամի սա լսել ոչ խօսել ընդ նրմա :
 Աստուած իմ , քո է սիրտս այս , բայց ըզբրթունա .
 Եւ ընդ քեզ սա խօսեսցի ղքո օրհնութիւնս :
 Ամենալուր ականջ , բացիր առ սիրտս այս
 Եւ լուր ղոր յար անձայն հընչին ի սրմայս :

ԱՌԱՋԻՆ ՉԱՅՆ

Ս Ր Տ Ի Մ Ե Ղ Ա Պ Ա Ր Տ Ի

Յաւիտենից անսփոփոխ դու հզօր Ոգի ,
 Որ կարգելով ընդ զօրութեանդ անմաստոյց
 Ըզդիւրահօւսարն սէր՝ նեցուկ երկակի
 Անմահ գահուդ՝ եւ վերամբարձ կաս հանուրց .

Առ քեզ՝ ի գահդ յայդ բողոքեմ անասան ,
 Ուր ամենայն շնչից շրջին տարուբեր
 Դարանակալ արհաւիրք , յոյսք անիրան ,
 Ընդ որով ինքն հեծէ անհունն իսկ եթեր ,

Թէ այդչափ մեծ է զօրութեան քոյին կար
 Մինչեւ զայսքան հարթել մեղանս աննըւէր .
 Կամ թէ սէր այդչափ իջանէ ի խոնարհ
 Մինչեւ ձրգել ի դժոխոց զոք ի վեր ,

Ծղփեւոյս այս սրբաի յերկեղ եւ ի յոյս ,
 Եւ տաժանեալս հոգւոյ թափառ ընդ բաւիղ ,
 Յոր մոլորեալ՝ ի լռքանէն ըզքո լոյս՝
 Յածէր յանկոխ յանմըխիթար ի շաւիղ ,

Լէր դու աղէ ի հեռաւորդ յայդ բարձանց՝
 Ուր ցարդ յինէն ոչ ակնարկի ոչ հառաչ ,
 Այլ լոկ խիղախքն հասին տարափք եղերանց ,
 Յոր սարծէի կալ քեզ ընդդէմ քաջալանջ .

Լէր յաթոռոց քոց , խոնարհեաց յիս ունկամբ .
 Քանզ՝ իբր որդանս արզմասիրի հասցէ ձայն
 Եւ թըչնամուոյս եւ դուռղիս ապրստամբ ,
 Անդ՝ ուր հեզոց լըսին աղերսք հեղք միայն :

Լնւր տէր , հայեաց . ոչ եւս բերեմ զէն ի մարտ .
 Քեզ միայնոյ թողեալ է արդ ասպարէս .
 Զանձն իմ ինձէն զընեմ առ ոտրս քո արդ .
 Քեզ համարձակ է տալ օրէնս՝ զոր սիրես :
 Այլ . . . գիտես տէր . . . շիջո՞ զլանթիս կայծականց ,
 Ըզսոսկալի դարձո՞ սուսերդ ի սրտեան .
 Խոստովանիմ ես սարսուռթիւն կորանաց ,
 Ըստրուկ գերի՞ աւագիկ կամ յանդիման :
 Յաղթեցեր Տէր , մի եւս այլ զէնք վրիժառու ,
 Զոյց սաստ բազում անգամ ասպախտ արարի .
 Կեա նոր ու անփորձ եդ յիս ըզվէրս այս ազգու ,
 Կենաց հարուած՝ քան թէ մահու եւ չարի :
 Կարծեմ խոնջեալ ամենակալդ այդ բազուկ
 Յանդուլ ճրգման փայլահնացայտդ աղեղան ,
 Յանկարծ սիրոյն պընդեալ ի ըսր ըզբըզուկ՝
 Հասոյց կամօք իբր անկամ՝ յիմրս վահան .
 Ընդ եօթնաջիւ չարեօք կրուեալն ի թափանց
 Ընդ անըզգայ խաղացեալ ընջըս ներքին ,
 Եհաս եդէդ ի ներքուստ խուռն եղերանց (կին :
 Ըզսիրտ զըմբեալ , որ թընդայ զայս թուռդ նախ
 Ո՛հ , Տէր , հայեաց յոր հարեր սիրա՞ եւ շատ է .
 Մաշեալ եւ փուտ , այո , նեխեալ եւ զազիր ,
 Սակայն , իշխեմ ասել , սակայն մեռեալ չէ .
 Մեռեալ չէ , Տէր , զի զգայ ցաւոյն զոր եզկր :
 Զխորդ իցես յաղթող՝ թէ զիս չըստանաս .
 Կորուսա՞ հընարք իմ են , լըքումն՝ իմ է գիւտ .
 Թափել կորդէլ յարուցանել ի նոյն կայս՝
 Այս փառաւոր ըզբոյն առնէ կար եւ գուժ :
 Յայս ասպաստան՝ արդ ի խորոցս անդընդոց
 Ուր ամենայն բարւոյ կարօտ կայր թախիծ ,

Սիրա խմ իշխէ՛ նդ խաւարչրախն քօղս ամպոց
 Ամբասնալ աչս օտարացեալս ի յերկնից ։
 Եւ դու Անմահ՛ , քանզի կարես , հայեանց յիս •
 Շունչ՝ զոր թողեր ինձ , նոյն առ քեզ բողոքէ •
 Եւ իբր որ ակնարկիցես դու սրբախ
 Որ յուսագին առ սէր քոյին ողորէ ։

1844

ՈՒՒ ԵՍ

Ո՛ւր ես . . . Ո՛ւր , սիրա աստուածաստեղծ ,
 Չըքնաղ շողկապ մարմնոյ 'նդ հոգի .
 Անարատիս գործ անարխեղծ
 Յաչաց սիրոյս ընդէր ծածկի :
 Ո՛ւր ես շահապ դրախտին փափուկ
 Գեղեցկագոյն արարածոց ,
 Շնորհաց հոգւոյն պըճ'նեալ զարդուք
 Ըզբան եւ սէր կըրող ի ծոց :
 Սիրտ սիրելի Տեան եւ սիրող ,
 Չի՛նչ այդ խորոց ընդ 'նայն եւ քեզ .
 Չայն Աստուծոյ լըսի խնդրող
 Ո՛ւր դու թաքչիս , ո՛ւր թանգուղես :
 Լըսէս ըզձայն , ձայն սիրելոյ .
 Դիտէս զփայլումնրա , փայլ հեզիկ .
 Եւ ոտնաձայնս ի յերեկոյ
 Քանի՛ յուշիկ եւ խաղաղիկ :
 Քեզ ինքնին անկ է զՏէր խնդրել ,
 Յորմէ ելեր՝ փութալ առ 'նոյն .
 Եւ մինչ 'նա քեզն ի խնդիր եւ
 Խուսափիլոցէս դեռ բացագոյն : —
 Տէր իմ . . . եւ իմ կոչել իչխեմ ,
 Որ եւ անձինս այլ ոչ եմ սէր .
 Տէր , ի շնորհացն այն սրբաձեմ
 Մերկ զիս գըտի , եթող զիս սէր .

Հրապուրողին լուայ, յանցեայ,
 Չեան յանհրամանն արկի ես խայր,
 Ճաշակեցի եւ դառնացայ,
 Եւ արդ ընկճիմ ի վայր ի վայր :
 Անմեղութեանս եմ ի խընդիր
 Եւ ըստխալիմ փախչել յանձնէս •
 Խիղճ հալածէ զիս խայթակիր,
 Եւ դու Տէր՝ զիս առ քեզ կօչես : —
 Աւա՞ղ սրբախդ չուտականի
 Որ կորուսեր ընդ մին զամէն,
 Ի ստացուածոյդ զուրկ հօլանի
 Եւ ի յուսոյդ անապաւէն :
 Մեղար, եւ ոչ ի վեր դարձար,
 Չայնեմ, եւ ոչ տաս պատասխան,
 Չըլլսեղ՝ ոչ է քեզ հրնար,
 Եւ երեւել՝ չես բաւական :
 Քանի՞ անհուն է սահմանն այն
 Որ ընդ հըլուն եւ ընդ հեստող •
 Քանի՞ խորին է վիհն եւ լայն՝
 Յոր թաւալի խըղճին գրժող :
 Ըզգաստացիր գէթ սիրտ ասուշ,
 Մեղար այժ, այլ ոչ մեռար •
 Եւ հիմ չածես յուսոյ քեզ յուշ՝
 Զի սերն ըզքեւ զանց ոչ արար :
 Մեղար զի մարդ, եւ կարէիր,
 Կանգնեմ սրբեմ՝ զի եմ Աստուած •
 Արդարութեան լոցցի վըճիս,
 Այլ միթէ կայ սերն ի մտաց :
 Յոր էիրն հող՝ դարձցիս ի նոյն,
 Այլ հողիդ՝ իմ է, եւ կամիմ •

Մեզի մարմին դառող հոգւոյն ,
 Ես իմ շնչոյս կացից մտերիմ .
 Զաստուածային դու զիմ սրտիկեր
 Հարեալ սարար վայր քան զանդունդ ,
 Ես ըզհողոցդ հանեմ ի վեր ,
 Ի վեր քան զքո գուռղութիւնդ :
 Սիրով ստեղծի , սիրով ստանամ . . .
 Ո՞ւր է մարդն , ո՞ւր սիրան ապրտամբ : —
 Աւասիկ Տէր , առ քեզ դառնամ ,
 Գերի գըթոյդ վարեալ ողջամբ :

1846

ՎԵՐԱԴԱՐՁ

ԱՌ ԱՍՏՈՒԱԾ

Ա՛հ Տէր , այս ո՞րքան ժամանակք են սրտիս
 Ձի հետի՝ քէն եւ անբարբառ յածէիս .
 Եւ իցէ՞ այնքան մահացուի գրժուարին
 Մըտերմապէս գոչ խօսակից ընդ Հաստչին ,
 Ձի զայնքան նուագըս մատուցեալ գայթ ի գայթ
 Ի զբաղմանց միշտ անկանէի յորոգայթ : . . .
 Ա՛հ , ես զաւուրս խտրեմ եւ ոչ գըտանեմ
 Միշտ զիս ի քէն կորզեն պատճառք բաղմադէմ .
 Ի զիւրահուսքս բնութենէդ անխախտւս
 Օտարացեալ շքիմ խտրոցըս հարուստ :
 Ներեա Տէր , բաց պարզեա զղծիցս ըզլեզու
 Հերքեա՞ զմըթարս որ զեւ սրտիս արգելու .
 Մատիր դու ինքն ի հոգիս , տես , եւ ծանեայց .
 Մինչեւ խոնջեալ ի բանս՝ ի գիրկ քո անկայց :
 Ա՛հ , հաւաստեալ գիտեմ զիրացըս պատճառ .
 Ձի մոռացայ զբաղցըր սիրոյդ ցարդ ըզճառ ,
 Վասն այն յերկար ի քէն կացեալ մեկուսի
 Վասն այն եւ այժմ ի խօսելն անձն իմ խուսի .
 Այլ թէ լըռեմ՝ գիտակցութիւն զիս ձաղէ ,
 Թէ յանդիման լինիմ՝ բնաւ սիրտըս չիշխէ .
 Ձի՛նչ արարից , յո՞ր բուռն հարից ես հընար ,
 Իցիւ թէ գոյր առ քեզ հըպիւ հեռաբար .
 Յայնժամ , ո՛հ , յայնժամ լինէի համարձակ
 Բառնալ ըզքող սրտիս զարդարեւ սեւակ ,

45
 1754-5



Հրապարակել յայտնել զիմօք կիսամօթ
 Զաղէտս անբաւ առ դու՛թ՝ ում՝ միշտ եմ կարօտւ-
 եւ արդ զիարդ . . . եկ Տէր անսա հիգու՛թեանս ,
 Ահա՛ նկանիմ՝ ես ի խորին յայս անկեանս ,
 եւ իբր անաես քեզ սպասեցից որ ինչ յիս ,
 եւ լռիցես քո քաղցր ունկամբ եւ գթասցիս :

Առ քեզ Աստուած ծարաւի
 Սիրտս այս սիրոյն ի յաղբիւր ,
 Անցեալ ընդ դաշտս ամայի
 Ընդ ասպարէզ զբաղմանց բիւր ,

եւ չըզրտեալ համօրէն
 Ներքին տաստոյն դեզ բուժիչ՝
 Արարեալ գայ դարձ այսրէն
 Առ քեզ՝ վշտաց հանգուցիչ .

Զէ չէ նա ստոյգ եղջերուն
 Որ ընդ լերինս եւ ընդ դարս
 եւ զխորս հատեալ քան թրուչուն
 Յանձկակարօտ զիմէ վայրս ,

Ըուրթն եւ գրլուխ ընդ սրբախն
 Խառնի յալեացն ի խոխոջ ,
 Լիւղայ ի տարր իւր հեշտին ,
 Կայտուել խնդին ի գողգոջ .

Ո՛հ , չեմ ես այն . զի զմաքուր
 Վըտակ սիրոյդ սըրտատես
 Որ կարկաջայր քաղցրալուր
 Ակրն կալեալ թէ գամ ես ,

Լըքեալ անտես արարի .
 Թէպէտ եւ գոլ ի սոչոր ,
 Զխարդուպէտ սպար առի

Ընդվայրայած լեռուն եւ ձոր :
 Ամփա • զխարդ կարծէիս
 Դիւր գըտանել յարտաքոյս •
 Թէ շիջուցին կայծ մի յիս
 Ամենայն ուխք կենցաղոյս •
 Եւ երբ իցեն բաւական
 Ամենայն հեշտք աշխարհի
 Եւ զբօսանացն ովկիան՝
 Առ շիթ մ'արեան Քրիստոսի :
 Ո՛վ խարեբայդ եւ նանիրդ ,
 Որ պաճուճեալ յերփն ի սուտ
 Ըզհեա ձրգես յանձնէ զսիրտ
 Ի ջանս յերկուճս անօգուտ :
 Այլ ինձ՝ աւանդ ինձ հիգոյս ,
 Որ եւ ծանօթ եւ քարոզ
 Ունայնութեան կենցաղոյս ,
 Եւ յայն դառնամ իբրեւ խող •
 Զբաղանք ի վայր եւ ի վեր ,
 Զբաղանք ի ներքս եւ արտաքս ,
 Զբաղանք ըզտիւ եւ գիշեր
 Զբաղանք առ անձն եւ օտարս •
 Մինչ այս մինչ այն՝ եւ ահա
 Փրկչիդ խնոյ հնչէ ձայն •
 « Ո՛ւր դեգերի , էր չըգայ
 Սիրտ քո ի սուրբ դաբիրայն : »
 Եւ ես ժխտող բարեկամ ,
 Ես ուխտազանց սրբազանց ,
 Ես շատացեալ յասել՝ Գամ ,
 Ես ըզսիրոյս թողի զգանձ :
 Եւ անբաւին եւ բնաւին

Իմոց կենաց փոխանակ՝
 Ըզգուղնաբեայն ըզսնտօին
 Ընարեցի զսուտ եւ չէակ .
 Եւ այսպէս խոնջ վայրապար
 Իբր ի կենաց յուսահատ
 Իբր ի յետին ինչ զաղար՝
 Դատնամ առ սէրն իմ անջատ :

Վայ իմ անձինս անհանձար
 Որ զանձկալին տեսեալ ըյս
 Սիրեմ յածիլ ընդ խաւար ,
 Մատնեալ ըզկեանս յունայն յոյս :

Սակայն ըզգամ ինձ արգ , Տէր ,
 Եւ առ ի քէն ձրգեալ դամ՝
 Սուրբ սեղանոյդ առնթեր ,
 Յամօթ հողւոյս կորանամ .

Չայնեւ չիշխեմ , Տէր Քրիստոս ,
 Լուր լռութեանս իմ համակ .
 Լճեր արտասուացս ինքնահոս ,
 Ոյ սէր քո չէն դժկամակ :

ԱՌ ԱՍՏՈՒԱԾ

Ա՛յլ, զոր կարգալ իսկ չըդիտէ ոք բաց ի քէն .

Յոր որչափ մտք հասանին՝ նոյն գընան հեռի .

Կէտ եւ կենդրոն՝ յոր պարունակք հըպիւ չեւ
խեն . (խարհի :

Ա՛յլ, որ լոցեալ զհամայն , քո չեք մասն յաշ

Դարք հնայեալք՝ քողք են քո սքողիչք յաղօտասաց .

Յաւերթութիւն իսկ՝ յանմահից քեզ առագաստ .

Ամենալոյս , ամենահրատ , ամենատաճ , (բաստ :

Որոյ ստուերք լոյս են մեզ եւ կեանք եւ համայն

Որ ի բըբէլ սքանչելահրաշ միակդ ակին՝ (վայլ ,

Կարակնակերտ երկնից աստեղք նոր զեղուն

Անծիր եղերք ի յանասմանս անդր ընկըրկին ,

Եւ համօրէն բնութեան առ քեզ յառաջէ քայլ :

Եւ զարմազան տարող սեռիցս երկբոյս գընտակ

Պատուանդանի պատուեալ անուամբ ընդ քեւ

գայ հիւ .

Անդ զոր գիտեսըն միշտ քնընես իբր անդիտակ .

Հազիւ յարդիւնս մեք , դու յառիթսըն յար յակ

ճիւ : (խոր .

Քնընես , եւ մերթ յանդունդս ըզսա թընդես ի

հառի նըման պըղպըջակեալ յեռանդն ի հոճ՝

Ի բիւրօբիւր դիպաց մասնեալ ուսխաից ժըխոր

Խորասուղի վարեալ ի քէն եւ շանթակոճ .

Մերթ բըռնալիր սիրոյ տեղաս ցօղատարափ . (մակ՝

Սըրբեալ զարտօսր յարշալուսոյն ջինջ վարշա .

Ծիրանածայր եւ ըսպիտակ քան ըղկարափ՝
 Յանթայց ալիս նաղի նարմով երկրիս գիւմակ :
 Մեծդ՝ ի փոքուս մեծս աստ դիտես քան յամէն ուր .
 Մեծ քոց ցասմանց եւ մեծ սիրոյդ սա վայր ան-
 սահ .

Եւ հրաշալի ծոցոյդ թափուած ի սմա մաքուր ,
 Որով երկիր նոր քեզ ու երկրորդ ձուլեցաւ դահ :
 Արդ ցողեա , արդ շանթեա , խիթամ ոչ , թէ՛ւ
 անհաս (սէր .

Յիմաստու թիւնդ , ի զօրու թիւնդ եւ յանհուն
 Ըզանթ եւ ցող՝ լարեալ մի հիւս զոր դուդ ա-
 մաս ,

Խմաստնանամ , սրնդիմ , ձրկախմ առ քեզ ի վեր :

ԱՌ ՅԻՍՈՒՍ

Աստուած դօրուծեանց , դարձ հայեաց
յերկնից եւ տես . այց արա այգւոյս
այսմիկ , եւ դարման տար սմա՛ դօր
անկեաց աջ քո :

ՍԱՂՄ .

Մատիր յուսով սիրտ ցաւած ,
Մատիր առ տէր քո Աստուած ,
Որ անձկալից ի խընդիր
Կայ քեզ բաղմեալ յիւր դաբիր .
Մատիր վըստահ եւ խօսեաց ,
Ահա փրկիչ քո Աստուած : . . .
Ո՛հ , ի մերձիլ յայդ տաճար
Թըւիմ ցընցիլ սաստկաբար ,
Վէհիդ կանգնել յանդիման
Յորմէ երկնից սիւնք դողան :
Մաաչիմ առ քեզ ի յորդոր
Բեռամբ մեղաց գլխակոր .
Այլ չիք շրթմանց խնոց բան
Չիք բան հողւոյս բաւական .
Մերթ համբացեալ յամօթոյ ,
Մերթ թոթովեմ ի սիրոյ .
Եւ բուռն է , բուռն է ինձ Տէր
Տագնաալ սրբտիս կարեւիւր :
Ազէ քեզէն հայեաց տես
Յանձայն ըղձիցըս քարտէս .
Հայեաց եւ տես ի հողիս ,
Հայեաց յաղէտ վըտանդիս :

Սիրա՛ զոր դրախտին հանգուճակ
 Յարդարեցեր շնորհուճակ
 Վայր քեզ կազմեալ դբօսանայ ,
 Ոսոխ՛ յաղարա զայն վարեաց .
 Ընդ ցորենոյն՝ որումունս ,
 Եւ փուշ խառնեաց ընդ ծաղկունս ,
 Աճեալ բուսոյն փնասակար
 Հեղձ ըզբարեացըն դումար ,
 Կորդ եւ խոսրան սիրան ողջոյն
 Զուրկ ի հողոյդ կայ ցօղոյն .
 Ո՛հ , սիրելւոյն այն այգին
 Յանգով սրտեալ սերտագին ,
 Եւ ձողաբարձ ի ներքուստ
 Պըճ՛նեալ ի զարդ քո հարուստ ,
 Ուր բարունակք քաջուղէշ
 Ծածանեին գեղաղէշ
 Եւ խոտոային առատ բերս
 Քեզ խնամողիդ ի վայելս ,
 Բոլոր խամբեալ ամայի
 Եւ չեք ընդ այն որ հայի :

Դա՛րձ գըլթութեամբ քո դարձ Տէր
 Հայեաց յայգիս զոր լըբեր .
 Քո է վիճակ եւ բաժին ,
 Ընդէր մասնի ոսոխին .
 Ըզմէ՛ կոխէ զայն երէն
 Եւ հաւք վայրի խանդարեն .
 Ըզմէ՛ քակեն անցաւորք
 Եւ այսին առնեն դարձաւորք :
 Դա՛րձ գըլթութեամբ քո դարձ Տէր ,
 Հայեաց յայգիս զոր լըբեր .

Չեռայդ եւեթ ի կարկառ
 Արմատասիւ բոյսքն չար՝
 Ծըխին յարդին պէս ի հուր
 Ծիծաղին անդքըս արխուր •
 Եւ շուրջ անեալ ամբարձցին
 Կանաչ որմունք իւր նախկին ,
 Գարձցի դարուն իւր եւ վարդ
 Խունկք եւ երանգք երփնազարդ •
 Գարձեալ կրկին կակղասցի
 Եւ տոհմաբեր ծոց բացցի •
 Թաղեալ սերմանքն ի խորւոջ
 Գարձեալ բերցեն գիրդ բողբոջ •
 Զերմիկ հողւոյ քո հարաւ
 Սրբուեսցէ զթեւարն խոնաւ ,
 Ի շաղ շնորհաց ցողահոս
 Մարգրրտայեռ ի յակօս •
 Եւ ընդ ծաղկունս ի յայթիւ
 Գնայցէ դրժոյ քո զեփիւ •
 Սիրոյն արեւ ջերմաբեր
 Գալար արնկոց քաջալեր
 Զուարթացուցէ զիմ պարտեղ
 Հաճոյ աչաց քոց ի տես : . . .

Իջցէ իջցէ սիրելիդ

Ի տենչանացն իւր հովիտ ,
 Ի ճեմ ախորժ ի ծաղկունս
 Որ խունկ բուրեն լաւութիւնս •
 Տեսցէ մշակի պէս անձկօս
 Զամէն ըղձաւ եւ ծրլօտ ,
 Ծաղկեալ իցեն նուռն եւ թուղ ,
 Ծաղկեալ ինձորն իցէ դուղ •

Ծաղկեալ իցեն դիրդ, Ճապուկ
 Ալուրայնեացըն պրտուկք,
 Յորմէ սիրոյն օշարակ
 Տայ զծիրանին իւր վիժակ :
 Ի համ նոցուն եւ ի հոտ
 Յիշեա՛ զվաստակ քո խնամոտ ,
 Ի՛մ են սոքին ասասլիք
 Պրտուղք սերմանց սիրալիք ,
 Իմ անդաստանք եւ դրրախտ
 Մի արարից այլ ապախտ .
 Այլէ դարձեալ փթըթեացի
 Տոհմականօք լիուլի : . . .

ԴԱՐՉԵՍԼ ԸՆԴ ՅԻՍՈՒՄԻ

Հողի 'մ', ընդէր տրտում ես,
 Անձն իմ, ըզմէ սրգատես •
 Արի յուսով եւ խօսեաց
 Ահա փրկիչ քո Աստուած,
 Քեզ խոնարհեալ յայդ խորան •
 Հիմ կաս թըմբրեալ ու ապաբան : —

Ոչ է թըմբիր անըզգաստ
 Ոչ եմ է կիրս յուսահատ,
 Այլ պատկառանք ամօթլեած
 Ծածկէն ըզսիրտ իմ ցաւած •
 Զխորդ աչաց քոց ո՛վ Տէր՝
 Երեւեցայց կարեմէր
 Հարեալս ախտիւք բազմաբիւր
 Լըքմամբ շաւղիդ անստերիւր :
 Ըզպարստ անձին ինքս ինձէն
 Գիտեմ ըզկիրս մահաղէն,
 Բոլոր սըրտիս ասպարէզ
 Յաւիչկ խոցոյս դիզադէզ
 Արիւնեբանդ եւ կապոյտ
 Ի նախ շնորհացն իւր կապուտ,
 Իրնի անկեալ է մըթան
 Յանըցծ կապից խոր զընդան •
 Չունիմ երես Տէր իմ Տէր
 Բոլոր սըրտիւս է յերեր

Կանգնել զխմաց քոց հանդէս ,
 Բայց անկանել յերկիր դէս ,
 Երկրբարձել քեզ խոնարհ
 Խոնարհեցող սիրաբար ,
 Ընտրեալ զհանգիստ տաճարիս
 Ազատան հէզ մահացուիս .
 Զաղէս հողույս սփռել յար
 Լաց հարկանել դառնաբար .
 Ոչ ինչ խնդրեմ ոչ , Յիսուս ,
 Ու ոչ իսկ ըզլոյս արեւուս ,
 Բայց ըզբբաց քոց արեւ .
 Որ քաւութեան տան սրարդեւ .
 Լինել տեսող արժանի
 Այս բաւական ինձ լիցի ,
 Եւ յակնարկել քո սրբախ
 Սպիտակ եղեց աղատելիս .
 Ճաճանչ շնորհաց քոց մաքուր
 Բարձցէ զմեղացրս մըրուր .
 Ա իրացս ըսպիք բուժեսցին
 Յարեան կայլակդ իմ փրկչին .
 Լուծցին կապանք ցաւալի
 Յազատութիւն բերկրալի .
 Եւ յայնմ աւուր նորալոյս՝
 Յորում բարձցեն սէր եւ յոյս
 Զխմոց բարուց անըզգաստ
 Մեղտամակարդն առազաստ ,
 Իբրու մտերիմ առ մտերիմ
 Խօսեսցի նդ քեզ սիրաս այս իմ :

ԳՍՐՁԵԱԼ ԸՆԴ ՅԻՍՈՒՍԻ

Եւ արդ խօսեալ , սիրտ , յուսով ,
 Առ որ լրսէն քեզ սիրով ,
 Ի տաճարիս սրբբութեան
 Խորախորհուրդ ի լուութեան ,
 Զոր ոչ աղմուկք շքիութեն
 Ոչ յոյզք կրրից մարդկեղէն .
 Ար մահացուաց յոխորտ ճառ .
 Է անխմաստ ու անբարբառ ,
 Իբրեւ կղզեակ մի անհուպ
 Ի դբօանաց արեծուփ .
 Ահա քեզ տուն Աստուծոյ
 Անդ ի բեմին ծածկելոյ ,
 Որ ձայն արկեալ հեշտալուր
 Կարողաց հրաւէր յատեան իւր ,
 « Թէ քո չեւ եւրս ձայնեալ
 Ահա ' ո քեզ մօտ կամ հասեալ ,
 Քանի՞ թէ ինքրդ խօսիս
 Լըւայց սիրով ջերմ սրբտիս .
 Խընդրեա յինէն եւ տաց քեզ
 Զոր եւ յուսով հայցեսցես .
 Զանձն իմ ետու բովանդակ .
 Սիրոյ թէ էն քեզ կայծակք
 Դարձեալ կրկին տաց ըզսիրտ
 Սիրով առ իս դարձողիդ » : —

Ահաւասիկ փութածիր

Մատչիմ ի սուրբ քո դաբիր ,
 Երկրրպագեմ տեր Յիսուս
 Քեզ կեննք սրբախ եւ հոգւոյս •
 Որ գերեւոյս առ ի սէր
 Զանմահութիւն քո թողեր ,
 Ընդ պատկերիդ հայրենի
 Առեալ ըզձեւ հողածնի :
 Երկրրպագեմ ի խոնարհ
 Սիրով սիրոյդ քում անձառ ,
 Որ յայտնեցար մարդկապէս
 Բըժոտ աչաց մեր ի տես ,
 Երկրրպագեմ սուրբ գլխոյդ
 Հեղոյ գառին համաբնոյթ
 Հօրրդ կամաց առաջի
 Եդեալ ի բարձրն խաչի •
 Թէ սուրբ գրբես ըզբրթունս
 Ըզբիթ արեանդ արբեւոյս ,
 Յահ եւ ի սէր տաց համբոյր
 Քոյոց շրթանց քաղցրաբոյր ,
 Որ դեզ կենաց կաթեցին
 Որպէս ըզցօլն եդեմին :
 Զուգիդ աչաց տաց համբոյր
 Ի ծիր սիրոյ լուսաթոյր ,
 Որ տեղան տեղքս շնորհաց
 Ի սիրտ մեղօք խոցառած •
 Համբոյր խոնարհ տաց այտիդ
 Զոր դուդ ետուր մասնըչիդ •
 Համբոյր ձեռացդ երկնաստեղծ
 Որ կանգնեցին զհոգւոյս եղծ •

Ընդ սայրասուրբն հեղոյս
 Բեւեռեցից զիմ շքութունս ,
 Մինչեւ խապաւ ծրծեցից
 Զառ ի նոցունցրն կրակիծ :
 Մերձեցուցից եւ ի կող
 Անմահութեանց սոսոգող ,
 Զբրով ու արեամբդ արբեցայց
 Եւ ծարաւի միշտ դարձայց :
 Ոտիցդ երկիր պաղից սուրբ՝
 Որ ընդ երկիր կոխեալ նուրբ
 Սընալ յերկինս ուսուցին
 Ընդ փուշ շաւիղ զհետ քոյին :
 Մատեայց առ քեզ համարձակ
 Թէպէտ չարեօք եմ համակ ,
 Ըզչար մըթերսն ամօթով
 Եւս քո բարձից եւ լալով ,
 Որ ընդ կըշռով խիստ փայալին
 Մանրեաց ըզսերմնն չարին :
 Ապա թեւեալ սուր թեթեւ
 Արկից անդուզ գիրկ ըզքեւ .
 Եդից ըզգլուխ իմ ի ծոց ,
 Մըտից սիրոյդ ի հալոց ,
 Եւ ոչ թողից յաւիտեան
 Մինչ առից շնորհ քաւութեան .
 Եթէ ներել ծանր է քեզ՝
 Անդէն մեռայց սրբաակէզ :
 Այլ ներեցէ զիմորդ ոչ
 Սիրս՝ որ այժմէն ի թընդսջ
 Ի բարախիւն իւր յամէն
 Ըզսեր եւ շնորհրս բըղխէն .

Զիւնդ մեայց ես ի սպառ
 Յանմահութեանդ այդ գաւառ :
 Սակայն իցիւ մեռանել
 Եւ ի գիրկ անդրբ թռանել :
 Զի մահ է ինձ կեանքս աստէն ,
 Կեանք են հոչումն առ ի քէն :
 Ծոց քո միայն է հանգիստ
 Պանդրխանելոցս յայս հովիտ :
 Եւ սէր սրբախոյ է միակ
 Յաւերթութեան նրապատակ :

ԴԱՐՁՆԱԼ ԸՆԴ ՅԻՍՈՒՍԻ

Խօսեաց ո՛վ սիրա , առ Յիսուս ,
 Խօսեաց առ սէր քո եւ յոյս •
 Թըռիւր թեւօք հաւատոց
 Եւ ի փրկչիդ մերձեաց ծոց ,
 Որ տարածեալ քան զերկին
 Փարի զազամբ հողածին : —

Աւասիկ եմ , Յիսուս սէր •
 Այլ դու ի մարդ զինչ տեսեր ,
 Ո՛ր անտես սրովքէից
 Հոգեզինացն այն ամբիծ ,
 Հողեալ աչացրս յայանիս
 Աստուած եւ մարդ գաւանիս :
 Յանբաւ սիրոյդ ի խուն կայծ
 Հոգւոյս վառեալ ընկ արծարծ
 Չեմ բաւական առ քո հրաշ ,
 Յընգիւմ ցնորիմ իբր աղուաշ •
 Ա՛հ , բուռն է , բուռն է սրբախա ,
 Կուաղի շունչ , սիրտ նուաղի յիս :
 Լ՛ուր աէր Յիսուս լրուութեան
 Որ բարձրագոջ քան ըզձայն
 Խորոց ներքին ի սրբաէս
 Անգուլ հրնչէն մեծապէս :
 Ովաննամ , Տէր , ովաննա
 Երկնից ու երկրի մեծ արքայ •

Օրհնեալ եկեալ անուամբ սուրբ
 Իբրեւ հանդարտ հողմիկ նուրբ
 Սաւառնելով տաճարիս
 Լըցեալ զանկիւնս ծաղկալիս •
 Օրհնեալ եկեալ կեանքդ անշէջ
 Մահկանացուաց մեր ի մէջ :
 Ընդ բազմաչեայ ըսպտերաց
 Փողփողեալ ըյս երկնասլաց ,
 Ընդ բոյր խրնկոցն անուշից
 Եւ ծաւարման ըստաշխից :
 Ընկալ զաղերս մանկանցն այն ,
 Քեզ՝ քան թէ մեզ քաղցրաձայն :
 Տես զի՛ մաքուր են սրբաիւ
 Անօթք շնորհաց քոց ազնիւ •
 Լից ըզնոսին յորդառատ
 Որպէս զայգուն ցօղ զըւարթ •
 Ծաղկեացին մէն վարդ քընքուշ
 Անմերձք ի չար մեղաց փուշ ,
 Զի նոքիմքք դրախտ աշխարհի
 Լիցի աչացդ արժանի •
 Զուարճացի սիրտ ծընողաց ,
 Եւ օրհնեսցիս դու Աստուած :
 Տուր պառանկեաց եռանդուն
 Հրատուրանաց կալ արթուն ,
 Մի՛ նդ ճանապարհ ծաղկացան
 Գըթեւ յատակ կորըստեան :
 Զարս հաստատեա՛ շնորհաշուք
 Որ աշխարհիս են նեցուկ ,
 Օրինակաւ եւ գործով
 Ամենեցուն տալ կորով ,

Եւ ծերութեան դատափետ
 Տոբ Տէր աչկունս երկնագէտ •
 Տոբ խնամանոց, տրդիտաց
 Զխնաստութեան քոյին բաղձ •
 Տոբ իշխանաց գաւազան
 Հովուել զաղինս յուղլութեան :
 Քահանայիցդ օծելոց
 Տոբ ըզսիրոյդ շողալ բոց ,
 Անբիծ ի սիրտ եւ խորհուրդ
 Գըրգալ ի քո ժողովուրդ •
 Տոբ կուսանաց կալ աննինջ
 Կրելով զշուշանս իւրեանց ջինջ :
 Տոբ միանձանց ճըգնասուն
 Քեզ ստորապետ կեանս ի բուն
 Ղամպարափայլ յերկրի մնայլ
 Խաւար աչաց գոլ ի փայլ :
 Տըկար մարմնոց տուր աւեր ոյժ ,
 Տըկար հոգւոց՝ կենաց բոյժ •
 Տոբ անյուսից ըզքաղցր յոյս՝
 Մոլորելոց մըտաց լոյս :
 Տոբ տառապետալ տընանկին
 Յերկինս հայել ի վտանկին ,
 Եւ մեծատան բաղմաճոխ
 Յիշել ըզմահն եւ զբժոխ •
 Որբոց այրեաց քեզ վըստահ
 Տոբ յանձկութեան կալ անահ •
 Տոբ բանտելոց քաջալեր
 Սպանման կրրից մեղաստեր :
 Տոբ ծովաչուաց ալեծուփ
 Ըղնաւակայս իւրեանց հուպ ,

Ի ի ծով կենաց ծրփեաց
 Զերկնից կայանս զերծ հոգոց :
 Տուր եւ նոցա Տէր խմ Տէր
 Որոց մահուն ի հրաւեր՝
 Ի պաղ զրանէ այսց կենաց
 Հային յանձայր յաւիտեանս ,
 Զհաւատ եւ յոյս յօգն անուռ :
 Նընջել ի սէր եւ զարթնուռ :
 Տուր տրամեաց մըխիթար
 Որք ի դամբանս լան խոնարհ ,
 Յիշել զվերինն Սինն
 Ուր սուրբ ժողովքն են եւ աօն :
 Ուր մայրն անձկոտ առ որդին
 Հարսն մընաց փեսային ,
 Ուր ըսպասեն քորք եղբարց
 Մատաղ որդեաց՝ բազուկք հարց :
 Հան քաւութեան ի բանտէն
 Զողկան ի յարկ լուսեղէն
 Բազմացո՞ զքոյդ երախան
 Ըղբարձակից մեր յապայն :
 Ո՛հ , զամենայն ուխտ սրբակց
 Սըրբեա ի սէր քո ամբիւծ ,
 Եւ տըպասցի յանձինս մեր
 Արքայութեան քո պատկեր :

ԱՌ ՅԻՍՈՒՍ Ի ՄԱՏՐԱՆ

Մեծ երբք են սիբա , զի կաս ,
 Հիմ ի թընդոջ լուռ խաղաս .
 Յո՞ր խորս հրաշից թանգուղեալ
 Չիշխես ի վեր ամբառնալ .
 Ո՞չ լուար ձայն ո՞չ լուար
 Որ զաւեախս մեծ կարգայր ,
 Եթէ բարձրեալն Աստուած Տէր
 Պարայածեալ ընդ եթեր՝
 Ըզհաճուեթեանցն ակնարկի
 Արկ ի դուխ այսր յարկի :
 Արդ հիմ արխն յերակունս
 Ծըփի արասար ի յաշկունս .
 Յանկարծ վաղես ի խորոց
 Յանկարծ դառնաս ի քո ծոց .
 Եւ առաջի գաբիրայն
 Կուաղեալ դընխս ընդ երկայն :
 Մեծ են սրբախ մեծ զարմանիք
 Եւ արհաւրաց կուռ փաղանիք .
 Դու ինքն Աստուած աստուծոց
 Որոյ պատկեր ծովուն ծոց ,
 Եւ գործք ձեռացդ են երկինք
 Յորմէ սարսեն ալք ներքինք .
 Խօսեաց Տէր ինքն աղաչեմ ,
 Զխորդ սախք լուսաճեմ

Անձայն կոխես զմուտ յարկիս
 Եւ անցեալ բարձրբ բազմիս •
 Ում ոչ երկինք երկնայնովք
 Ու ոչ տիեզերք բիւրք յորովք
 Չեն բաւական զիր ոտին ,
 Զորով մահունք կեանք պատին •
 Անբաւելիդ այդ ըստոյդ
 Յայն պարուրիս վայր անշուք :
 Եւ զինչ տեսեր աստ , ս՛վ Տէր ,
 Բայց շիժ՝ զոր քոյ կաթեաց սէր •
 Եւ արեւուն պէս ի ջուրս
 Որ դիտէ զդէմնն անդ մտքուրս ,
 Ի կայլակի անդ սրբում
 Ծաւալական սիրոյ քում ,
 Ըզքոց դիմաց վեհափայլ
 Տեսեր շնորհս պատկերեալ :
 Ո՛հ , որ ի շիժն այն եւեթ
 Բիւր դիտեաք սեթեւեթ ,
 Արդ քանի՞ն ի ճոխն իւր
 Տեսցուք մէք հրաշս ի յաղբիւր :
 Սահայն չուժէ բիք բըժոտ
 Հայել ի լոյս անաղօտ •
 Աղէ զմըթարս դու ի բաց
 Վարեա՛ յիմոց նախ բըբաց ,
 Ապա տեսից ակներեւ
 Ըզսիրոյդ նոր աստ զարեւ : • • •
 Հապա սրովբէք , թեւս ի վեր ,
 Զի դայ , հասեալ իսկ է տէր ,
 Ծայրիւ փեարոց շափիւղայ
 Յարդարեցէք դաբիրայ •

Վառեցարուք բոցագոյն
 Շուրջ ջահեցի կայծ սիրոյն : . . .
 Յարեցէ՛ Տէր մեր Աստուած
 Ի տաճարս յայս զոր ընարեաց ,
 Որ ընտրութեամբն արժանի
 Եւ այլ ինչ պերճ ոչ ունի .
 Չըկան ոսկի աստ պահանգք
 Ոչ մարդարիտ ոչ ականք ,
 Եւ ոչ բեհեզ ծիրանի
 Աստ ծալ ի ծալ ծածանի .
 Այլ պարզութիւն բարեբիկ
 Չոր սրբեցին սիրաք ջերմիկ .
 Երկու զուարթունք կան անշարժ
 Չպաշտօնդ ի մեզ աղգեւ լարժ .
 Եւ լարս ունին ոսկեթել
 Ըջսիրտս ընդ քեզ հաղորդել .
 Երկու են անդ լապտերք խուն
 Ծիրանեծայր փողփողուն
 Իբրեւ սիրոյ նոր արծարծ
 Ի սիրտ մատաղ կեղակարծ .
 Շիթ դեղնորակ Ասուրայ
 Անդ ի ձեզուն ամբառնայ ,
 Ի թեւս ամպոցն թեթեւ
 Չըգեւ զտենչանս սիրաթեւ .
 Անք առկայուն կարմրաթոյր
 Պարկեշտ ձրգեալ վարագոյր
 Բարեխառնէ զուսոյն շող ,
 Ամփոփ գործել միտս հրակող .
 Չիւնակերպիկք բոցածին
 Անդ կանգնին բուհք մեզուածին՝

Ուղիղ ըղձից նըշանակ
 Եւ վառ սիրոյ օրինակ .
 Անպ փունջք ծաղկանց երփենից
 Յոյց մանկըտուոյս գիրգ սըրտից .
 Երանգք եւ բոյրք ամենայն
 Ի սպարտիզաց հեռաստան
 Հաւաքեսցին ի յարկիս
 Ի սաղատանս փարելիս : . . .
 Է՛ջ առ մեզ , է՛ջ Տէր Յիսուս ,
 Որք քեզ մընամքս ի սէր , յոյս .
 Ե՛կ բիւր բարեօքդ եկ եւ է՛ջ ,
 Ոչ բազմոցին այն ի մէջ
 Այլ նախ սըրտից եւ գեղձմանց
 Քոց ծառայից հեզ անձանց .
 Զամենազօր աջոյդ ոյժ
 Տո՛ւր որք ջանիւ եւ ըզգոյշ
 Պատրաստեցին քեզ կազմած
 Որչափ նոցին ձեռն իշխեսաց .
 Եւ խուն մերոց վաստակոց
 Ո՛վ առատ , տո՛ւր վարձ հոգւոց ,
 Զի Անմահիդ տալ զանմահ
 Գիտեմք ախորժ գոլ եւ ճահ .
 Եւ զմատաղ սիրտ մանկըտուոյս
 Տաճարացո՛ քեզ մաքուրս ,
 Որք դեռ ունայիք եւ կարօտք
 Են անձածուկ նուրբ անօթք .
 Փութա՛ Յիսուս փութա՛ լից
 Սերմամբ շնորհաց բարելից .
 Զի մի մըշակք անօրէն
 Դաղտագոյլի անգր հասցեն

Եւ թօթափեալ զորումնս
 Խուսափիցեն երագունս :
 Տուր Տէր տուր հարց եւ սրգաց
 Ի նոյն հանգչել սիրոյդ ծոց •
 Աշակերտաց ւ ուսուցչաց
 Բանիցդ անասլ կեցուցչաց :
 Տասաճակին գերազանց
 Իւ գեթացւոյն մեծագանձ
 Լըցան ամբարք եւ կտրաս ,
 Լըցո՛ դմեր տունս անսրահաս •
 Բողբոջեսցին բոյսք բարեաց
 Զոր աջ քոյն սերմանեաց •
 Եւ ձեռամբ սուրբ զըւարթնոց
 Կըթեսցին կուժք ճոխ սլաղոց •
 Ճաշակեսցեն աղգք լուսոյ ,
 Եւ ասացեն , Տէր , շնորհք քոյ
 Պաղաբերեն զարգասիս
 Ի յօթեվանս յոր հանգչես •
 Օրհնեսցի՛ն՝ որք ի ամս
 Ըղբեղ սրտանն Տէր արբայ •
 Ուղիղ ելլեն իղձք մրմունջ
 Եւ ձայն սրբափ անմըուունջ •
 Եւ հայցուածոց զայցէ զհեռ
 Պարգեւ յառատ ի Տեառնեդ •
 Եւ որք գիտեն քաջապիշ
 Հեռուստ ցուցցեն մասնանիշ ,
 Թէ ահա տուն՝ ուր Յիսուս
 Կըտափ բաշխել անանց տուրս :

ԱՌ ՕԹՍԿԻՅՆ ԻՄ ՅԻՍՈՒՍ

Ի բայց գնա յինէն Տէր, զի այլ
մեղաւոր եմ ես :

Ո՛վ եմ ես Տէր, կամ դու ո՛վ,
Որ ընդ յարկաւս ընդ միով
Իբր անծանօթ բարեկամք
Հեռուստ եկեալ օթանամք .
Եւ չեք որ այլ ի միջի
Կամ մերձաւոր դըրացի :
Ճանաչիցիմք արդարեւ
Թէ անկան խաբք ինչ զինեւ : . . .
Երկու նըրբին որմունքն այն
Եւ սըրահակ մի ունայն
Իցէն միայն անջորպետ
Ընդ սիրտ մի հէգ դատափետ ,
Եւ ընդ մեծն այն՝ որ լընու
Ձերկին , զերկիր , զխոր ծովու :

Այլ իցէս դու ինքն ըստոյդ
Ամենակալ Հօրըդ զոյդ ,
Որ յաւիտեանց բազմեալ ծայր
Եւ զամանակն ընթադրեալ՝
Ձանմահդ ըզոյս ծածանես
Ձեզանութեամք՝ իբր հիւլէս ,
Եւ մահացուաց ու անմահից
Խաղաս ընդ կեանս հոգելից ,

Ուրք ընդ օտաւքդ իբր ի ծով
 յամէ ի ժամ սուրալով
 Գան թաւալին տեղի տան
 Ըստ քթըթեւոյ քում ահան :
 Դու իցես այն արդարեւ
 Որոյ քարոզ է արեւ ,
 Յորոյ շնչոյ տիեզերք
 Պատգամս առնուն եւ սրովքէք :
 Դու այն որոյ աթոռ խուն
 Եթերահան վայրն անհուն ,
 Եւ հազիւ հազ պատուանդան
 Երկիրս՝ յահէդ ի տառան .
 Յորմէ հրեշտակն ի փախուստ
 Թեւապօղեալ կայ հեռուստ .
 Եւ թէ սիրոյդ քաղցրութիւն
 Չունէր ըզքո զօրութիւն՝
 Իբրեւ կաթիլ մի սառին
 Երկինք լերկիր հալէին ,
 Եւ դու միայն անուրէք
 Կայիր ի քեզ միշտ երբէք :
 Արդ ընդ յարկաւս ընդ այսու
 Զխաւրդ բնակիմք ես եւ դու : —
 Ո՛հ աէր , իցեմ թէտէտ կոյր ,
 Թէ անըզգայ , խեռ , պանդոյր ,
 Սահայն դու այնքան ես մեծ
 Զի քան զարեւ լուսայեղոյ
 Յողթեալ աչացս եւ սրբախ
 Աստուած ինձ քաջ ճանաչիս :
 Այլ գիտիցես եւ դուն , ա՛հ ,
 Գիտիցես տէրդ իմ անմահ

Ո՞վ է ո՞նց քեզ բընակին ,
 Ո՞վ անարժան քո դրացին :
 Մի՛թէ ձրդեաց սէրն այնչափ
 Զաստուածութեամբըդ տարափ՝
 Զի զլծանձրախուռն ակախւք լիս
 Զբանկանէս ըզհոգիս .
 Կամ թէ զուարթնոց շուրջ ըզքեւ
 Խորանաատիս սրբութեալ թեւ՝
 Ո՞չ թողուցուն ընդ փեռուքս
 Զանմահ բըբաց շողի ի դուքս .
 Կամ թէ մարդո՞յ ինչ նրման
 Մարմնով առեալ լոկ կայան՝
 Հոգիդ յերկինս լոկ բերի .
 Քա՛ն այդ ի քէն եւ հեռի :
 Ալեհեւին Աստուած ես ,
 Նոյն աստ՝ որ անդ ի բրովքէս :
 Եւ արդ զկարդ ընդ այսու
 Բնակեմք յարկաւ ես եւ դու :
 Ո՛հ , Տէր , դիտեմ՝ ես ըզքեզ
 Եւ դու իսկ քաջ զիս դիտես : . .
 Խնայեա՛ յիս Տէր իմ խնայեա ,
 Քանզի անմարթ ի բացեաց
 Անմարթ՝ երթալ ինձ ի քէն ,
 Զի տիեզերք քեւ լի են .
 Ի զուր յերկինս ես թաքեաց ,
 Ի զուր յերկրի ստուերամած .
 Եւ թէ ի խորս իսկ ծովու ,
 Աստուած իմ , անդր իսկ կաս դու .
 Եւ դրժոխոց թէ մատչիմ
 Ի քէն ի սղառ ոչ փախչիմ :

Այլ դու յինէն ի բաց երթ ,
 Քո չապկասի տիեզերդ
 Ամենազօր ես , թաքո
 Յիմոց աչաց զանձըն քո :
 Ի բաց դընա յինէն Տէր
 Զի սիրտ ունիմ վառչուէր .
 Ամաբթ է մեզ երկոցուն
 Կալ ի յարկի յայամ ի սոյն .
 Ո՞ր բնաւ ետես թէ փարի
 Լոյս ընդ տըխուր խաւարի ,
 Թէ ընդ հըրոյ բնակիցէն
 Հիւսօի լերինք ձիւնեղէն .
 Եւ թեւիցէն ընդ այերս
 Հեզ աղաւնեակք ընդ անդեզս :
 Ապա զիարդ մի ձեզուն
 Մեզ ամբարձցի երկոցուն .
 Մեզաւորս անդ ձեմիցեմ
 Ուր դուդ բազմիս սրբաձեմ ,
 Զիարդ ո՛վ Տէր բընակես
 Յիմոց կըրիցս ասպարէս .
 Զիարդ օգով բոլորիս
 Զոր սրդժեցի աղտեղիս .
 Զիարդ չարեացս առնթեր
 Ղիցես բարեացդ ըզմթեր .
 Զիարդ ի նոյն ագարակ
 Սփռեսցուք սերմն հակառակ :
 Դարձիր գարձիր յինէն Տէր
 Լի եմ մեզօք կարեւիւր .
 Ա՛հ , բաւական չեմ ես չեմ
 Զի նդ յարկաւս սյս ուր շընչեմ ,

Մըտեալ կայցես օթեան ,
 Ո՛հ տէր , քեզ չեմ բաւական .
 Բայց թէ արգեօք զայն կամիս
 Զի սպառ ցնորիմ եղկելիս ,
 Եւ ծրփեալ սիրտըս նըկուն
 Որպէս ալեակ մի ծովուն
 Փըշրեացի յօտըս քոյին
 Ոչ եւս իցէ հեռ նորին .
 Կամ թէ տերեւ հողմակոծ
 Ի սաւառնման քոյ թեւոյ
 Վայրաբերցի անխըլիբա
 Մառախլապատ ի հովիս .
 Եւ շունչ շըրթանցս հագադին
 Իբր յեաին կայծ պատրուզին
 Շարժեալ երկիցս՝ եւ անցցէ
 Ծուխ անհաճոյ զհեռ ածցէ ,
 Եւ իմ դիակն անկենդան
 Թողցի քեզ լոկ պատուանդան : . . .

Այլ զի խօսիմ ես այլ եւս
 Ուր դու լուծեամբ զիս կօչես ,
 Գու կացեալ այդր անսասան ,
 Պընդես ըզսիրտս ի տատան ,
 Եւ զհեռացեալս առ ի քէն
 Զըզես սիրով միեղէն ,
 Եւ թըլիս ոչ առ այլ աստ
 Բազմեալ յիս մերձ յառագաստ
 Բայց զի զաւարս ի գեհեն
 Որսայցես զիս ի դիւէն :
 Ո՛հ , որպէս հէզս եւ տընանկ
 Եւ իմ բարեոյս անդխտակ

Ըզտէր , ըզգանձ , զիմ բըժիշկ
 Հալածէի մոռացիկ :
 Ո՛հ , մի Տէր , մի , ես չէի
 Որ զայն բարբառս յօղէի ,
 Չէր այն սըրտիկն որ առ քեզ
 Ձըկտի զօղիլ անձկապէս ,
 Այլ մեղք իմ մեղք իմ խաւար
 Ձայն հալածանս քեզ արար •
 Նոյն ինքըն մեղք՝ թէպէտ հուս
 Կայի մարմնովս յարածուի ,
 Անհուն հեռի զսիրտս ունէր՝
 Իբր ի վըհէն բարձր եթեր :
 Գարձիր դարձիր Տէր իմ արդ •
 Չեռն ի հոգի մեղապարտ
 Լալահառաջ բոլորով
 Առ քեզ գոչեմ Տէր հոգւով •
 Գարձ առ իս Տէր սիրով յայց
 Չի մի կորուստ մեծ կորեայց •
 Քանզի հըզօր ես արիդ
 Կըրիցս յաղթեա մեղսառիթ •
 Եւ սըրբութեամբ բովանդակ
 Լըցո՞ զսահմանս զայս եւ յարկ ,
 Չի համարձակ անարգել
 Անեմք միմեանց մուտ եւ ել :
 Այլ դու անմահ ես որ էն ,
 Ես գըծուծ որդն հողեղէն ,
 Եկից սիրով գեանասող
 Յոտսըդ քըծնիլ լուսակոխ •
 Գարչապարացդ հովանի
 Մեծ է ինձ տուն թէ լինի ,

Եւ թէ կամիս զերդ սրահնակ
 Կացից արթուն սա զըրամբ •
 Եղէց համայն վասըն քո
 Որ ի վերկանա խմ հողոց
 Յերկնից յերկիր ի խոնարհ
 Եղեր բնաւից արհամարհ •
 Յսչնչութիւն իսկ դառնալ՝
 Թէ ոչէին գոյր ըզպալ
 Ըզքո անձառդ էութիւն ,
 Անուի յանձն եւ ըզնոյն • • •
 Այլ վայրասպար զն խօսիմս •
 Կեցից Տէր՝ որպէս կամիս :

ԱՌ ԽԱՉԵԱԼՆ ՅԻՍՈՒՍ

Քաղցր է ինձ տէր առաջի
 Անկեալ սրբոյ քում խաչի
 Պատուանդանին տալ համբոյր,
 Փարեալ ի թեւս արջնաթոյր՝
 Յոր դիրկս արկեր փարելի
 Տէր իմ Յիսուս անձկալի •
 Եւ առ ամէն շիթ բոսոր
 Յարեան մարմնոյդ քրսնաթոր՝
 Արտասուաց դառնն կայլակ
 Կըշուէլ զըղման պատարագ •
 Առ մէն հարուած քստմնափուշ
 Զոր էառ գլուխ քո քրնքուշ՝
 Քաղցր է խայթոցս ինձ հաղար
 Անուէլ յոգիս անգագար :
 Առ մէն մի խոց կարեւէր
 Զոր եղկեւոյս վասն առեր՝
 Ըզարչարանս դառնագին
 Համարիմ դիւր եւ հեշտին •
 Եւ ընդ մահու անմահիդ
 Ինձ մեռանեւ բիւրս է խինդ :
 Հայեաց Տէր բարձր ի խաչէդ
 Որ գերագոյն սիրոյ գէտ,
 Տես տանջանաց քոց զիս պարտ
 Ընդ որ մեռարդ իսկ անպարտ •

Յիշեա , զի զմեզս զոր ատեաա
 Ըստաանոցեալ պատուհաս՝
 Անդ գըթութեամբ քաւեցեր ,
 Եւ մի՛ քէն բաց զիս քեցեր ,
 Որ զերկիւղին մերժեալ խէթ
 Գարշապարիդ սընդեալ զհեա
 Յօժար գխմամ ի Գողգոթ
 Ի յոյս ու ի սէր անամօթ :
 Անմահ են շիթք քո արեան
 Անմահ քո գութք աստուածեան .
 Հըպեալ նոցուն ի հոգիս
 Սըրբի բոլոր աղակզիս : . . .
 Ո՛հ , թէ յանկարծ համարձակ
 Քեզ կանգնէի նըպատակ՝
 Ի նոյն ցամաք կիսարին
 Խաչակցելով զիմ մարմին ,
 Կապեալ անըցծ զոտս իմ անդ
 Ի հեզ սիրոյդ պարաւանդ ,
 Ձեռացդ ըզձեան կընքեալ գէմ
 Ի նոյն բեւեռս սեւադէմ ,
 Տըւեալ ըզգլուխըս բոլոր
 Ի վըշանխութ քոյն ոլոր ,
 Ձաչս այս բանալ առ աշխունս
 Շնորհաց շարժող արեգունս ,
 Հըպել ըզուրթն իմ շըրթան
 Որ հընչէ ձայն թողութեան ,
 Սըրտիւս ըզսիրտ շօշափել
 Ուր հուր սիրոյն մուտ եւ ել ,
 Անուլ ի կողս ըզպատառ
 Կրկին աղբերցն ի վրատա ,

Մըխիւ ցաւոցդ յասպարէզ
 Խաղալ կըրիցդ Է հանգէս .
 Իցիւ տալ անդ զուռնչ յեաին
 Վալով Է քէն անմեկին ,
 Այդը Է խաչիդ մահակից
 Քան անդը յերկինս գահակից :

1843

ԱՌ ԽՍՁՆ ՍՈՒՐԲ

Երկրորդադեմ աստուածակիր քեզ սուրբ խաչ,
 Սիրատարած փարեալ գրրիօք ձախ եւ յաջ.
 Պատուանդանիդ գընեմ խոնարհ ըղձակատ,
 Եւ յուսաբեր գըլխոյդ տամ աչս անընդհատ :
 Ո՛վ առադաստ ցանկալի, ո՛վ սուրբ սեղան,
 Ո՛վ ինձ տեղի, քան զոր չեք վայր պատուական.
 Թէպէտ մահու ձայնիս գործի, թէ սեաւ ես,
 Այլ կեանս եւ լոյս ի քեզ միայն դիտեմ ես.
 Շող աշխարհիս՝ ճաճանչ է ինձ խաւարչուտ,
 Ոսկի մականք չեն ապաւէնք առ անութ.
 Նրսեմ բրբացս ի քէն ծագէ լուսոյ շուք,
 Դու ես միայն կըթոտ բազկացրս նեցուկ :
 Ըզբազմակոծ տարեալ գըլուխս ես ի վեր՝
 Ընդ այս եւ այն շատ հայեցայ տարուբեր.
 Ի կենցաղոյս հովտի անձուկ եւ վախուտ
 Ըզքեզ միայն գըտի շինած անխախտուտ :
 Ո՛հ, ես արկար եմ եւ դըթոտ զաչացու
 Եւ դարշապար կարթեալ ի ցանց մահացու.
 Եւ շուրջ ոսոխք որպէս սարիկք ի կաքաւ
 Հմայելով զիս տանին ընդ տիղմն եւ ընդ կաւ.
 Ո՛վ դաւազան դու յուսոյ, խաչ իմ փրկչին
 Դու ի բազկաց ու ի սրբաէս կայ անմեկին.
 Ահա հոգիս հիւծեալ ի հոյլ վրտանգաց
 Զոր յեղեղուկ զովող մարմինըն նիւթեաց,

Հեղձու, հեծէ, հառաչէ, զքեզ կոչէ յաջ •
 Ե՛կ օժընդակ իմ յերկինս, Եկ Եկ սուրբ խաչ •
 Ահա ի քեզ հաւատամ զանձն իմ համակ,
 Ո՛վ վեհագոյն քան մովսիսեանդ ինձ մահակ •
 Անց, պատառեա զծով վըշտաց, բաց հուն սրբախ
 Յամուլ վիմացս՝ արբո՛ զպարբեալ զիմ հոգիս •
 Ո՛հ, Եկ Եկ կա՛լ պրնդեա սիտիեա զօրացո՛,
 Եւ ուր քո ծայրն է շեշտեալ՝ զիս անդր հասո՛ :

ԱՌ Ս • ՍԻՐՏՆ ՅԻՍՈՒՍԻ

Ի բաց կացէք յինէն սնտաի հրապոյրք աշխարհի ,
 Ոյց՝ աւանդ , այնքան զակատեալ ըզհետ երթայի .
 Ահա գըտի զմիակ բարւոյն իմ՝ գանձ ցանկալի ,
 ԸզՅիսուսին իմոյ սիրտ սուրբ ու երկրրպագելի :
 Երկրրպագեմ՝ քեզ սիրտ անձառ Աստուծոյ իմոյ ,
 Քեզ ակնաղբերդ եւ վերընկալ ամենայն սիրոյ .
 Ո՛վ դու սատածառք կենացս , յուսոյ եւ հանուրց
 բարւոյ ,
 Ի հրեշտակաց ծածկեալ՝ տըւեալ ինձ յագուրդ
 հոգւոյ :
 Գու համօրէն իմոց ըզձից բաղձալի ծըրար ,
 Քան զոր յերկինս ու երկրի չեք մեծ չեք ինչ հա-
 ւասար .
 Որ առ իմ սէր ի Գողգոթա փեռեկեալ յօժար՝
 Յարինաճեմ շաւիղ ծոցոյդ զիս ի ներս տարար :
 Ո՛հ , թէ մոլեալ երբեք կրրիւք օցտեայ ես ի բաց
 Յանմահունակ յայդքան սըրտիդ սիրոյ գըգուա-
 նաց ,
 Թող ինձ , դառնամ ահա նձնապուրծ ի նոյն
 բոյն կենաց ,
 Եւ անդ կամիմ կեալ յաւիտեանրս ժամանակաց :

ԻՂԶՔ ՀՈԳԻՈՅ

Աստուած աստուծոց
 Անձառ բարեաց ծոց ,
 Ահն արկ յերկնից քոց .
 Բաց զհոգւոյս բերան
 Բարբառել զարժան
 Բան քեզ ըղձական .
 Գերագոյակ տէր
 Գոյիցս համասեր ,
 Գիրկս արկ մեզ ի սէր .
 Դատաւոր արդար
 Դատելոցս ես հայր ,
 Դատեա գրժաբար :
 Երկինք եւ երկիր
 Եղեալ զուգակիր
 Երգեն ըզքս ձիր .
 Զուարթնոց բիւրուց պար
 Զմայլեալք միաբար
 Զանուշդ հընչեն յար :
 Ի՛ եւ յիս զգացուած
 Ինդ պարգեւաց
 Ինա տալ ըզդարձ :
 Ընկալուչ իմ՛ յոյս
 Ընկալ զիղձս հոգւոյս
 Ըզքոյս ի քոյոյս :

Թագաւոր բնաւիս
 Թողեալ զիմ սրարտիս
 Թագ կապեա եւ յիս :
 Ժամանակաց հայր
 Ժամադիրդ ի վայր
 Ժամանեալ զիս տար :
 Իմաստից աղբիւր
 Իմոյս անձին տուր
 Իմանալ զսէտս իւր :
 Լոյս հանուրց աչաց
 Լից յիւղոյ շնորհաց
 Լատտեր զիմ առկայծ :
 Խաւար դաւողին
 Խարխափող դիւին
 Խուսեսցի բնաւին :
 Ծագեսցէ Թափանց
 Ծաւալ ի բարձանց
 Ծիածանդ անանց :
 Կուսիցն իմաստուն
 Կացից զոյգ արթուն
 Կենացդ իմ ի տուն :
 Հայր , Որդւոյդ միակ
 Հարսնացեալս հոգեակ
 Հառաչէ անյադ :
 Չայն արկեալ զանխուլ
 Չայնէ սիրտս անդուլ
 Չեն յոգի հարուլ :
 Ղեկօք հաւատոյ
 Ղերձմամբ ջերմ յուսոյ
 Ղամարամամբ սիրոյ ,

Ճըգնի սիրտս Աստուած՝

Ճեպեւ յանկասկած

Ճանապարհդ կենայ :

Մահուն մեքենայ

Մարմնոյս մերձենայ

Մուսս յերկին բանայ .

Յիսուսիդ ընկեր

Յերկիր խոնարհել

Յառնել անդր ի վեր :

Նոր ի քում յայգւոջ

Նորասունկ բողբոջ

Նորեցայց յողւոջ .

Շարժեալ հեղազին

Շընչեսցէ հողին

Շունչ յիս կաթողին :

Ո՛վ սէր , սէր անճառ ,

Ո՛վ քեզ անըսպառ

Ողջ զիս տայր ի վառ ,

Չըհայել յերկիր

Չըւել անձանձիր

Չըքնաղիդ ի ծիր .

Պատարագ խոնարհ

Պատրաստեալ զանձն յար

Պաշտմանդ ի տաճար .

Զըրովդ կողաբուղիս

Զընջել զսեւամուխ

Զողիրս մեղսամուղ .

Ռամկական ընդ վարս

Ռազմ՝ տալ անդադարս

Ռահել ի հուր կառս .

Սիրով սիրաւոյդ
 Մնանել աստ անքոյթ
 Սլանալ անդր ընդ փոյթ :
 Վեհիդ ի պաշտօամ
 Վայրն յանուշահամ
 Վայելել յարժամ .
 Տենչաւոյդ դիմաց
 Տրուիլ հոգեղկաց
 Տալ զիմ հայեցուած .
 Տամեալ ընդ սրբոց
 Տաբուեոյդ ի ծոց
 Տախճանալ անխոց .
 Յօղդ անմահ-աւիշտ
 Յնցղասցի մեզ միշտ .
 Յնծասցուք անմկնտ :
 Իւծեալքս յայս արեւ
 Իւսեցուք ըզքեւ
 Իւսակ լուսաթեւ .
 Փառս հանցուք յաւէտ
 Փրկչիդ սիրաւէտ ,
 Փափադանաց կէտ .
 Քաղցրասցին համայն
 Քընարքս հոգեձայն
 Քեզ յառագասան այն :
 Օրհնեալ հայրդ ինքնին ,
 Օրհնեալ քո Արդին ,
 Օրհնեալ սուրբ Հոգին .
 Օրհնեալ տէր ի կեանս ,
 Յ'Ա եւ յ'Օ վայրկեանս ,
 Օրհնեալ յաւիտեանս :

ՕՐՀՆՈՒԹԻՒՆ


ՏԻԵԶԵՐԱԿԱՆ ՍԻՐՈՅՆ ԱՍՏՈՒԾՈՅ

Աստուած իմ, լի է քեւ աշխարհս համօրէն ,
 Երկինք ու երկիր ըզքեզ կարգան եւ օրհնեն .
 Յարեւելից մինչեւ ի մուտս արեւուն
 Սըփուի նդ լուսոյ տուրնջեան քո սէր քո անուն :
 Թէ ի կապոյտ յաւեմ խորան զաչս ի վեր
 Շուրջ ամէլով անպարագիրն ընդ եթեր ,
 Ըզդործ մատանց քոց նրկարէ ինձ արեւ՝
 Մինչ մանկական գրնաթի հանգոյն շարժեալ քեւ
 Սահեալ երթայ զանբաւութեանն ասպարէզ ,
 Ընդ ջեր կենաց սըփուել ըզսէր քո ի մեզ :
 Եւ թէ նդ լերինս հայիմ՝ խորանս անշարժուն ,
 Թէ յ'առ նոցունց ուղիսից հոսանս կարկաջուն ,
 Եւ թէ նդ կանաչ քօղս օդոց՝ մայրս երկնուղէշ ,
 Միաբարբառ հընչեն ըզսէր քո յաւեժ :
 Եւ թէ իջից խոնարհ ի գաշա ծաղկաճեմ
 Ու ի խաղս առուաց մանուածաւալ՝ զինչ լըսեմ .
 Եւ զինչ ի թեւս սաւառնացեալս ի զեփիւռ ,
 Զինչ քարավէժ ի ծործորին բիւրեզ բիւր .
 Կամ զինչ ի վարգ ծիրանածին թագաւոր ,
 Եւ ի գըշխոյն հովտաց շուշան գեղաւոր .
 Զինչ յայնքան երփն եւ ի բուրմունս զանազան .
 Թէ ոչ ըզքո սիրոյդ հըռչակ միաբան :

Եւ զի՛նչ այլ, Տէր, ի լռութեանն հասարակ
 Յորժամ երկիր կայ յանդորրու շքամակ,
 Եւ բընութիւնք ընդ հովանեաւ քով ի քուն՝
 Եկեալ նուիրակ նոցին ի գէտ սաղարթուն
 Հաւըն ձայնեզ՝ գէմ՝ լուսնեկին արծաթի,
 Որոյ նընջեն ճաճանչք ի ջուրս ի դաշտի,
 Զի՛նչ նա նգովեալ ըզլըութիւն եւ զգիշեր
 Գեղգեղելով յապուշ կրթէ զտիեզերս,
 Մինչ ոչ հողմիկ շքրջի ոչ ջուր խոխոջէ,
 Եւ ըստուերաց անգամ շարժիլ կամք ոչ է •
 Եւ թէ զարթնուն սարերք՝ հաճին կալ անշարժ
 Յորչափ սիրոյդ գործեակն երգէ գերահրաշ •
 Լուսին ու աստեղք կապեն զանիւս արծաթեայ
 Եւ ոչ ճւրնչէ սայլն եթերին լուսակայ,
 Յորչափ հաւուն ծաւալացեալ շունչ անզուսպ
 Թարգման սրբափց մարդկան առ քեզ թրուշի
 Ի նըմին՝ իմ ու ամէն սրբափ սիրոյ ձայնք, (հուս)
 Եւ լռութիւն՝ իմաստնագոյն արձագանդք,
 Միարարբառ գոչեն ըղձիւք որ առ քեզ,
 Եւ բընութիւն համայն խայտայ սիրակէզ :
 Նա եւ յաշխարհն այն լոյժ յանհուն եւ վըսեմ
 Եւ ի շաւիղան ահաւորս զայն սէր լըսեմ,
 Հըսկայածին յորժամ կոհակք նիւս առ նիւս
 Լայնահառաչ մըրնչմամբ խուժեալ ընդ հիւսիւս,
 Ճօճեն ճակատ վըսեր գուռոզ պաղպաջուն (ջուն,
 Գան խրոխաք, բաղխին հըզօրք, վանին գողգո •
 Եւ յաւազին գրոշմեալ սրայժառ ըզփրփուր
 Քան առ զայրուցս՝ յայանեն եկեալս ի համբոյր •
 Նոյնք՝ թէ ի գիւր յուսոյ շահու մահացուաց
 Ուս մատուցեալ անգրուվարիցն եղևնեաց,

Եւ թէ անլուրք զեռան յիւրեանց ըլբօսանա
 Հողմալարեալ սուրալ ընդ բիւր վըտաւանս ,
 Կամ օժանդակ թէ նդ փոթորկաց սէդ գուամար
 Որոտալով դայցեն ընդ վիհս ի գուպար ,
 Մահունս աւերս ըսպառնալով բազմագէմ ,
 Խուն մի չիչխեն եւ անդ սիրոյդ կալ ընդգէմ :
 Յնւմ ի քոյոյրդ չրդուցէ սիրոյ կնիք ,
 Ո՞ր այն հաստուած դաժան՝ ոյր ձայն սիրոյ չիք :
 Հաղն հանդարտիկ որ հեղանի զգիշերայն
 Եւ մատրուակ սարտիղաց ցող մարգարտայն՝
 Ոչ առաւել ինչ սէր ծարրեն ի ծաղկունս՝
 Քան որ յայերս ընդ ամպրոպաց մոլթ դրրունս՝
 Բնութի սոսկումն եւ զօրութեդ արձագանդք ,
 Հրածին կայծից ճայթօսին շոփնդք շանթե-
 աանդք .
 Զի այնքանեալ զինեալ թընդամամբ եւ բոցով
 Անասն յունիցդ՝ իբր ուղղեկին նաւ ի ծով ,
 Որպէս զի նոր թէ տաս հրաման՝ յօդոյն մեջ
 Արձանացեալք եւ կամ լուծցին դիւրաշէջ :
 Զի դո՛ւ տէր , դու զգազանութիւն իսկ գիտես
 Սանձել սիրով , զառիւծ ի գառնն փոխես ,
 Եւ յոտ մայրւոյ՝ նդ որով յովազք որջանան՝
 Դու զտատրակաց խաղաղես քուն սիրական .
 Եւ դէմ ծովուն լեռնակուտակ անդընդոց
 Զալկիտիլի դրնես բունիկ՝ զերծ հոգոց :
 Դու ի ներքուստ սառամանեաց ձրմերանց
 Զարթուցանես զ՛ի հող թըմբրեալ զարմ սեր-
 մանց ,
 Եւ թօթափեալ զասրաքատակ սգամօւճանն
 Զգեցուցանես զերկիր յերանդ բազմազան :

Ի սէր ծոցոյդ բնութիւն յիւրոյ սկըզբանէ՝
 Ըղիտաղաղիկ օրինօքն ոչ անցանէ .
 Հոյլք աշխարհաց անդուլ յառանցս հաստաբեատ
 Անշեղ շքրջին սիրահոլով յուզն անհետ ,
 Եւ քառագէմ միշտ յեղանակք ձեռն ի ձեռն
 Քաղցրաժըպիտ առնեն ըզցուրան իսկ ձըմեռն ,
 Յորժամ դարուն իբրեւ զմանկիկըն յետին
 Ծաղը արձակէ ի դիրկ զառամ մօր ցըրաին ,
 Ամարայնի միրգս ընդ ծաղկանց յերիւրէլ ,
 Ածել աշուն աղուրայնեօք ոսկեթել ,
 Իւ անկորուստ երկիր պահէ զսերմ նախկին
 Զոր սըփուեաց սէր քո յերջանիկն ի դրախտին :



Որքան արարք սքանչելարուեստ են քոյին ,
 Աստուած իմ , նոյնք սիրահարուսաք երեւին .
 Այլ ոչ ուրեք այնպէս փայլեն անպատում
 Որպէս ի ծայր ճարտարութեանդ՝ ի մարդում .
 Եւ հող երկրի , հող՝ լեալ հոգւոյ զուգակից
 Զի է մատանցդ հիւսած՝ պատմէ զսէրն անբլծ .
 Եւ իբրու թագ չըքնաղ ի մէն մի ահանս
 Ամենեւին չըքնաղք են կերպք մարդկութեանս .
 Տըղայ փափուկ սընեալ ի մօրն օշարակ
 Ի ջերմ ծոցոյն մինչ շարժէ զաչք սեւորակ՝
 Ո՛չ քո սիրոյդ՝ քան հօրն ասէ զինք ծընունդ ,
 Ո՛չ անխմայ պապաջքն օրհնեն զսուրբ անունդ :
 Կոյսն ի պարզել զկամարապեղ յունից լար
 Եւ զկարմրութիւն այախցն ածել ի խոնարհ ,
 Կամ յորժամ բուռն երխտասարդ՝ օրինաց

Իբր աւազին գրժեւ չիշխէ հրոս ալեաց ,
 Եւ կորացեալ ժրաի յերկրէ զիւր պարէն՝
 Ո՛չ հեղաբար եւ այնք ըզսէրդ համբուրեն .
 Եւ ծեր ճահատ երբ ի վարսից տարազերծ
 Կայ մըտայոյզ արքուն հանդէպ լուռ աստեղց
 Բաժանեալ զաչս ի նոյնս ու ի հող իւր յեաին ,
 Զի՛նչ քան ըզսէր կարգայ նեցուկ թոյլ ոտին :
 Ո՛հ , եւ պրճ՛նեալն ի թագ մահան ու ի գահոյս
 Իշխան ազանց հրամանահան յընդհանուրս՝
 Քեզ վերակնեալ մաղթէ պատգամ ի յերկնուսս ,
 Եւ ոչ իւիք բայց քեւ պարծի գոլ հարուստ :
 Ազքատն ի մոյր պատառոյ դուռն ի դրանէ
 Եւ յարտասուացն անգամ սիրոյդ մասն հանէ .
 Եւ թէ լըբցի երբէք նօթի եւ ծարաւ ,
 Երթեալ նըսաի՝ նդ ողորմութեանցըն յարկաւ ,
 Գիտէ՛ զի անդ ուր հաստատեացըն զիւր բոյն՝
 Ոչ կարէ սէրն ի սպառ առնել չքտեսոյն : . . .
 Ո՛վ յիշատակ մեծ , յիշատակ աստուածեան .
 Եւ տակաւին դանդաղիցիմ յայդ խորան
 Մառչել ընդ խումբ բազմաժողով մարդկութեա
 Եւ գրլսովին ընդ սէր չըգալ ի սքանչանս .
 Զի ո՛ւր սաստիկ այնպէս , ո՛ւր վեհ եւ չըքնաղ ,
 Յայտնիցի սէր՝ քան ի կրօնից սուրբ փարախ :
 Հեզ լըռութիւնն առ դուրս հընչէ զնեբքին շնորհ
 Անմահութեան նախաշաւիղ լուսաւոր ,
 Ուր քան ջահից՝ ակն հաւատոյ՝ զփայլ սիրոյն
 Եւ քան ծաղկանց ըզգայ բուրման սեղանոյն :
 Զամէն հասակ անդ տեսանեմ յելս այգուն
 Ի հողամած ծերոյ ցմանուկ կաթնասուն ,
 Ամենեցուն մի շունչ , մի ուխտ եւ մի սէր ,

Ուղղեալ ըզսիրտ եւ ըզնայեաց առ նոյն տէր . . .
 Եւ տէրն . ո՛վ հրաշք , ո՛վ մեծ սիրոյն զօրութեան
 Որ զինքն Աստուած առեալ ձրգէ ի սեղան .
 Թողեալ ըզփառս , ըզլոյս , ըզծոց հայրենի
 Զմահուս լալեաց փոխէ հովիտ ընդ երկնի .
 Սէրդ անըսկիզբն , ինքնին յըզձից մեր խարոյկ
 Ճենճերելով՝ գործես զոգիս մեր առոյգ .
 Ըզգինս հոգւոց՝ ցօլես զարիւնդ վերլասին
 Եւ սրբտաբախ շրթմանցս ըզքեզ տաս ինքնին .
 Ամիսփիս մեծդ ի գոյզն հոգւոջ ասպարէզ ,
 Դիմակալել աստուածութեանըդ տաս մեզ .
 Այդքան հրգօր է սէր . ըզտէր եւ ծառայ
 Ի մի ձուլեալ թագաւորէ դերակայ : . . .

Ի սուրբ ասնէն դառնան հոգիք զուարթագոյնս
 Եւ մոռանան թաղծեալք ըզվիշտըս թագունս .
 Բոլոր մարդոյս հանդէսք , կենաց մուտք եւ ելք ,
 Սուրբ օծութիք , հարսն եւ փեսայ դիւրընտելք ,
 Անդր ընթանան առ օրհնութիւն քաղցրացօղ՝
 Որով դիւրին ցաւք , քաղցրանայ քունն ի հող :
 Ո՛հ , ես քաննցս ըզքեզ տեսի , զքեզ որբիկ ,
 Ըզծերդ անկար , մատաղամայրդ եւ զաղջիկ ,
 Զի զհետ կիսոյ սրբաիցդ որ անդ վեր թրսեան
 Քաղցր արտասուօք լըցեալ լալեացրդ զաման ,
 Եւ զողբաձայն ուխտ ի սրբաի մընչելով
 Իբր ըզբուրվան երեկորին լի խընկով ,
 Գալով գայիք տալ զկէս յերկին , կէս ի վե՛մ
 Ուր սէրն յետին ձրգէ կընիք երկնաճեմ ,
 Զանմահութիւն ի մահու , հուր ի մոխրոց
 Գանձեալ յուսով եւ դառնայիք յետս անկած :
 Տեսի յաճախ եւ զմիջօրեաւ տօթակէզ

Ընդ վարսադեղ ուռեալ ջրնջան սուռին հեղ,
 Անն ըղձօտիւ հովուեակ փոքրիկ ընկողնեալ,
 Դառնայր դառնայր ապա նոգ երկին լուսափայլ.
 Եւ հեռագոյն ի գուճս անկեալ հովուհի
 Պաշտօն ծառայն ի ծոց ամեւ սուրբ կուսի.
 Եւ անդ զուարթուն վայրենայած՝ ըզարրափոյ
 Ի վեր ուղղէր սիրասրատար տենչ եւ իղձ:
 Եւ յորժամ հայրն աւուր քաղեալ ըղձաճանչ
 Երթայր յովտէն յովկիանու դէմ նահանջ,
 Տեսանէի զքաղաքորդի եւ զգեղջուկ՝
 Ի կրրպակաց, յանդից ի դարձ միաչուք
 Զհեա հանդարտիկ գիշերաձայն պրղընձոյն
 Դիմէլ առ տէր՝ յաւուրն յետին ի յողջոյն.
 Իսկ ինքդ Աստուած ամենեւին սէր եւ գութ
 Որ անդ այգուն ըզքեզ ի կեր մեզ ետուրդ,
 Իբր հայր զորդիս յերեկորին օրհնութիւն
 Զայնեալ ի սուրբ քո կոչէիր սեղանոյն.
 « Եկայք որդեակք իմ տաժանեալք բեանաւորք,
 Ես հանգուցից ըղձեզ գրթածըս ձեռօք.
 Ու որ գրթեցէք տրկարութեան դիւրանսաց
 Ըզլուծ իմ քաղցր առէք դարձեալ ձեզ ի սանձ.
 Գրաջիք ներուամբն, տուք միայն զարտասուս
 Յուցէք հաւատս, ի սէր լոցջիք եւ ի յոյս »:
 Աւասիկ տէր, ահա որդիքդ յտարս քո,
 Երաստասպարտ անկեալք յամօթ սուրբ սիրոյ.
 Յառնեն շնորհօքդ ի սիրտ, անուամբդ ի շըր-
 Թունս,
 Եւ խընդութեամբ յիւրաքանչիւր խաղան տունս:
 Ո՛վ, քանի՛ քաղցր է նոցա հրատն ընտանի,
 Պարզ խընջուք, սէր լըծակից, գութ մայրենի.

Եւ թէ գիշերք զըւարձախօսք երկայնին՝
 Ժամք քրիստոնեայք ի ըսր սիրոյդ սարուրին .
 Եւ մինչ յոգիան հանգարա՝ հանգարա փարի
 քուն՝

Ո՛չ ապաքէն սիրաք սիրով կան դեռ արթուն : . . .
 Այո՛ անքուն է սէր . սրտաբէ զկիրս համայն
 Ամաճիդ կայ հանգէս միայն ընդ միայն .
 Սէր ոչ նընջէ . յաճախ ի սրահն այն խորին
 Մինչ լուռ գիշեր եդեալ է զթագ եթերին ,
 Յանկարծ հերձեալ զոսկեակ քրնոյ վարագոյր
 Սիրոյ վանդին արձակեն սիրաք քեզ մաքուր .
 Ի մէջ գիշեր յաշտարակէն հընչէ զանդ ,
 Եւ զարթուցեալ սլանան հեզոց քեզ մաղթանք .
 Յոգւոց հանեն սրբակենցաղ ծերունիք
 Եւ միանձունք եւ կուսանք քեզ ընտանիք ,
 Կամ ի բացուստ ուստեք կրողեաց ծովամոյն
 Կամ ի ծայրից շինի , կամ խոր յամայւոյն : . . .
 Ո՛հ , իցիւ սիրտս այս՝ ոչ եւս յիղձ տարուբերս ,
 Այլ սրբէր լիկ ի քոյին սէր եւ յեթերս :

Ս.ՂԵՐՍ ԾԵՐՈՅ

Յոյս իմ ի ժամանակի ծերութեան իմոյ ,
մի թողուր զիս տէր Աստուած իմ :

Յոյս իմ ի տիոցրս մանկութեան
Առ քեզ կարգամ ես հանապազ ,
Ո՛վ այցելու հանուրց մարդկան ,
Որ գութ ումեք ոչ զըլանաս .
Յոյս իմ յաւուրըս ծերութեան
Տէր , մի թողուր զիս յաւիտեան :
Անցին գնացին հասակք զինեւ
Իբր հովանիք ի սահ ամպոյն ,
Իբրեւ ծառոյ գօսի տերեւ
Որ չըդառնայ երբեք ի նոյն .
Յոյս իմ յաւուրըս ծերութեան
Տէր , մի թողուր զիս յաւիտեան :
Մանուկ էի եւ ծերացայ ,
Բազում անգամ յայլոց ու անձնէ՛
Այլ բնաւ ի քէն ոչ խաբեցայ ,
Զի ստուգութեան ակն ի քէն է .
Յոյս իմ յաւուրըս ծերութեան
Տէր , մի թողուր զիս յաւիտեան :
Յոյս իմ , յաճախ յուսախընդիր
Վարկառեցի ձեռն աս օտար ,
Եւ դարձուցի զուր եւ նանիր ,
Զի բաց ի քէն չիք բարերար .

Յոյս իմ՝ յաւուրըս ծերութեան
 Տէր, մի թողուր զիս յաւիտեան :
 Ի վերանալ արդ խոննս ամաց
 Ի ձիւնանալ արեաց գըլխոյս
 Յերկիր կըքել հիւժ իրանաց
 Ի միտ առնում ըզքեզ լուկ յոյս :
 Յոյս իմ՝ յաւուրըս ծերութեան
 Տէր, մի թողուր զիս յաւիտեան :
 Անցեալ եկի նոք բիւր ես փորձանս
 Տեսի զբարի եւ չար երկրիս :
 Ահա նոդունայն էր ամենայնս
 Կորեաւ համայն, յոյս քո կայ յիս :
 Յոյս իմ՝ յաւուրըս ծերութեան
 Տէր, մի թողուր զիս յաւիտեան :
 Արդ ի կենաց հասեալ վայրէջ
 Յորմէ կապալին յոյսք երկրաւոր,
 Ի տապանին հովանեաց մէջ
 Ըզքեզ առնում ցուպ անձին կոր :
 Յոյս իմ՝ յաւուրըս ծերութեան
 Տէր, մի թողուր զիս յաւիտեան :
 Զանիւ կենաց շըրջել ընդդէմ
 Ի մանկութիւն նախկին դառնալ,
 Կեալ կեանքս նոր, ես ոչ կարեմ :
 Չիք այլ յամել, ինձ ժամ է գնալ :
 Յոյս իմ՝ յաւուրըս ծերութեան
 Տէր, մի թողուր զիս յաւիտեան :
 Եդեալ ըզմեզս իմ առաջի
 Առ քեզ դառնամ, Տէր, սրբաբեկ
 Յոյս իմ, սրբեա՛ս սրբեա՛ս զհոգի
 Զոր հաստեցեր ի քո սպառկեր :

Յոյս իմ յաւուրըս ծերութեան
 Տէր, մի թողուր զիս յաւիտեան :
 Արչափ սահի նոյ ստիւքս երկիր
 Եւ կենցաղոյս յոյսք հեռանան ,
 Արչափ մահուն մերձի թըմբիր
 Զօրացն զսիրտ իմ դու այնքան .
 Յոյս իմ յաւուրըս ծերութեան
 Տէր, մի թողուր զիս յաւիտեան :
 Յեղը ի կենաց հասեալ կամ ես
 Բառնալ ըզգործս ի նաւ մահուն ,
 Եւ ծովածուփ ի յաշխարհէս
 Յաւիտենից դիմել յափունս .
 Յոյս իմ յաւուրըս ծերութեան
 Տէր, մի թողուր զիս յաւիտեան :
 Յոյս իմ ի տխոցրս մանկութեան
 Ե՛կ կա՛լ ըզձեռքրս դողդոջուն ,
 Մոյժ ի մակոյկ անդրը մահուան ,
 Վառեա՛ զսաստեր քո սպաղսաջուն ,
 Աւ անցն՛ զհոգիս յայն յաւիտեան
 Յոյս իմ յաւուրըս ծերութեան :

ՄՍ.Գ.Թ.Ա.Ն.Բ ՄՍ.ՀՈՒ

Յոյս իմ ի միւսանդամ գալստեանն քում,
մի անտես առներ զիս տէր Աստուած իմ:

Յոյս իմ յիմոյ մանկութենէ
Յոյս իմ յաւուրբս ծերութեան,
Որ կեանք եւ մահ իմ ի քէն է
Եւ քո թրեալ է զընչս համայն •
Յոյս իմ ի ժամ օրհասիս
Տէր, մի անտես առներ զիս:

Մեռելութեամբ ըստացայ կեանս
Ի մահ ծընեալ անալուրծ անվրէպ
Եւ ամենայն կենաց վայրկեանս
է ոտընիտիս շիրմին ի դէպ •
Յոյս իմ ի ժամ օրհասիս
Տէր, մի անտես առներ զիս:

Անցից ընդ հուպ ի յաշխարհէ
Ընդ որս յառաջ քան զիս անցին,
Եւ զիս ընդ հուպ հող ծածկեսցէ
Յօրմէ հանայ խոռն մի նախկին •
Յոյս իմ ի ժամ օրհասիս
Տէր, մի անտես առներ զիս:

Յոյս իմ եւ կեանք, որ իմ փոխան
Ինքրդ մեռեալ ի չոր փայտին
Եւ փշրեցեր ըզխայթ մահուան,
Անց՛ յինէն զերկիւղ նորին •

Յոյս իմ ի ժամ օրհասիս
 Տէր , մի անտես առներ զիս :
 Յորժամ յիշեալ զկենացս աւարտ
 Սարսուռ ի սիրտ իմ ընթանայ ,
 Յիշատակաւ տեսոյդ զըւարթ
 Զըւարձացո՛ յայնժամ ըզսա •
 Յոյս իմ ի ժամ օրհասիս
 Տէր , մի անտես առներ զիս :
 Յորժամ հասակ կամ աստ մարմնոյ
 Ըզմտաարուան աղղէ ինձ մահ ,
 Զհաւատ հողոյս իմ զօրացո՛
 Եւ զաչս սղղեա՛ յերկինս անահ •
 Յոյս իմ ի ժամ օրհասիս
 Տէր , մի անտես առներ զիս :
 Յորժամ կասին եղծեալ անդամք
 Ըզգայութիւնք ոչ եւս ըզգան ,
 Ոչ եւս օգնեն ինձ բարեկամք
 Եւ երկրաւոր չիք այլ օճան ,
 Յոյս իմ ի ժամ օրհասիս
 Տէր , մի անտես առներ զիս :
 Յորժամ ըզտուն մարմնոյն խանգար
 Լըքանելով նեղեալ հողի
 Ի սրբսկասարան իւր վըշտահար
 Հուսկ ի սիրտ այսր ապաւինի ,
 Յոյս իմ ի ժամ օրհասիս
 Տէր , մի անտես առներ զիս :
 Եւ յորժամ սիրտս այս յարաշարժ
 Բարախեսցէ զյետին իւր թինդ ,
 Եւ իբր հիւսած ձեռին անվարժ
 Կըտրեսցի ըսր իւր կենսապինդ ,

Յոյս իմ ի ժամ օրհասիս
 Տէր , մի անտես աններ զիս :
 Յորժամ ոչ եւս իցէ այլ ժամ ,
 Առնչ ընդ շրթունս ելցէ կապոյտ ,
 Եւ ջերմութիւն թողցէ զանդամ ,
 Եւ ես եղէց մահու կապուտ ,
 Յոյս իմ ի ժամ օրհասիս ,
 Տէր , մի անտես աններ զիս :
 Եւ յորժամ չեմ այլ աշխարհի ,
 Դու յաւիտեան լեր իմ բաժին ,
 Անցս 'նդ կամուրջն երկիւղալի .
 Ընկալ ըզքս ստեղծեալ հողին ,
 Եւ հասն զիս , Յոյս իմ , յայն վայր
 Ուր փոխի յոյսդ ի Սէր յամայր :

ՊԱՏՐԱՍՏՈՒԹԻՒՆ ՅՕՐՀԱՍ

ԵՒ Ի ՀԱՆԳԵՐՁԵԱԼ ԿԵԱՆՍ

Ա.

Տէր հոփոռնացի զիս, եւ ինձ ինչ ոչ
պակասնացի :

Ահա մերձեալ, ահա հասեալ ինձ ժամն այն
Յորում լուծեալ զկենցաղականս ամենայն
Խնդրէ հոգի զհովուին քաջի փարախ լայն :
Որպէս երազ ցայգասրատիր մըտախաբ,
Որպէս ըստուեր սնտոի սիռեալ յափոյ յափ
Անցին աւուրք իմ եւ աշխարհս հապըշտապ :
Ոչ եւս յաչս յայս լոյս արեւու ամանի •
Տօթ միջօրեայ է ինձ ցըրաին հովանի •
Ոչ կաղզուրէ զցայգուն ցաւս այդ ծիրանի •
Ոչ դարձուսցեն արմատք եւ հիւթք ըզկորով,
Եւ ոչ բրժիշկ ըզժամանակ՝ ողորով,
Եւ սիրելեաց զուր զինեւ լաց եւ գորով •
Եղբայր՝ եղբօրս ինչ օգնէ ոչ յայամ աւուր •
Համայն հընարք են անհընարք ինձ եւ զուր • • •
Ի փարախ Տեառն անդրբ փութա՛րդ հոգիդ սուր :

Բ.

Ի վայրի դարարեոյ անոյ բնակեցոյց զիս ,
 և ևս չորս հանգստեանս սնոյց զիս :

Տէր , դու հովիւ իմ ճշմարիտ , հովիւ քաջ ,
 Որ ի սրբնդիդ մահադեկոյց մեզմ յաւաջ
 Յայն երկնաւոր կոչես եւ գաս ինքդ յառաջ .
 Ուր հովանիքն են յանթառամ դալարւոջ
 Խաղաղական ջրոյն կենաց ի խոխոջ
 Եւ հոգեսուն շառաւեղաց թարմ բողբոջ .
 Յոր անկասկած ի վոհմակաց չարժանի
 Եւ յանըզոյշ յանխոյթ յաջաց վարձկանի ,
 Քո լուսակիզն հօմ՝ խաղայ զհետ քում ձայնի .
 Յերանաւէտ արօտն՝ ուր դուն լոկ հովուես
 Ի շուշանաց հոյս եւ յառուս մաքրատես ,
 Յանքոյթ գաւիթն յայն փափագեմ գալ եւ ես :

Գ.

Դարձոյց գանձն իմ ևս իս ևս առաջնորդեսց
 Ինձ ի անուայարնս արդարոտքեանս փասն
 անուանս իշրոյ :

Ո՛հ , էր երբեմն եւ մուտրեալ իբր ոչխար
 Աւանդ ժամուան , յանձին կորուստ եւ ի չար
 Անխոյթ զհոգւոյս ընթանայի հեզ յիմար .

Աջ անդիտակ վտանդիս՝ այլ մասն ի հրատոյր
 Ի հեշապին եւեթ դրաւեալ զանձն ի դոյր՝
 Վրստահ ի տիս՝ յառաջէի թաքթաքութի :
 Այլ որ կամիսդ անթերի զհօտ քո սիրուն՝
 Թողեալ յարօտ զանմոլար ինն ու իննըսուն ,
 Զկորուսելոյս մենոյս ելեր զհետ համբուն .
 Եւ յուս բարձեալ համբերակիր գրթութեանդ՝
 Լընուլ ինեւ զհարիւրն յերկնիցն մարմանդ .
 Ածեալ մուծեր ի ճանապարհս անլրկանդ .
 Զարդարութեան ցուցեր շաւղ եւ սահմանս ,
 Եւ զապաշաւ՝ մեղուցելոց հեթեթանս ,
 Ըջոյսն անզեղջ, զանգին արեաներդ փրկանս :

Գ .

Թեպետ եւ գնացից ես ի մեջ ստուերաց
 մահո՛ւ՝ ոչ երկեայց ի չարե, զի դու
 տեր ընդ իս ես :

Եւ թէ զինեւ արդ մահու ստուերք անկանին ,
 Թէ ամենայն ծանօթ ինձ դէմք խափանին ,
 Թէ մառախուղ ծածկէ զաշխարհս գլխովին ,
 Սակայն եւ այնպէս ոչ երկեայց ի չարե
 Որ ամենուստ յահեղ պահուս պաշարե ,
 Զինչ դատափեա զիս վարելով յաշխարհէ .
 Իող եւ սարսուռ արդ զիս ունի սրգատես ,
 Այլ համարձակ մըխիմ մահուն յասպարէս ,
 Քանզի անքակ յոյս իմ դու Տէր ընդ իս ես :

Թող ծանրասցին տագնապք թէ զայդ դու կամիս,
 Խոստմունքք քո քաղցր ինձ հերքեսցեն զարհա-
 շիրս .

Տէր, քո ստացուած եմ ես, չար մի մերձի յիս :

Ե .

Յուպ քո եւ գառագան խորս մխիթարեսցնե
 զիս :

Ա. յԼ ի յիշել հոգւոյս զանձին անկղիտանս,
 Զանսանձ աւիւն եւ զխամութիւն մանկութեւս,
 Զամէն տիտց զկամայն ու անկամըն յանցանս,
 Երբ զարհուրեալ յիւրըն մնասուէ քան յօտար
 Զանգիտիցէ յանդառնալին ճանապարհ՝
 Զիտորդ մատչել առ դատաւորդ անաչառ,
 Ո՛վ գրթութեանց եւ շնորհաց հայր բարեսէր,
 Զարդարութեանդ ի բաց թողեալ անդ սուսեր՝
 Ի ու զկենսատիժ կարկան մական քաջալեր,
 Յուպ ընդ անութ կորակնելոյս ու ի դանդաջ
 Ըզգաւազան քո սքանչելի դիր ըզխաջ,
 Եւ հրամայեա՛նք քեզ դալ նովաւ անամաջ .
 Ի նմա մեռար եւ մեռուցեր դուն ըզմահ,
 Եւ զմահացուացս ի նմա ջրբեր ըզծանր ահ .
 Զապաւինեալս ի նմա անցո՛ղ զիս վրատահ :

9.

Պատրաստ արարերս առաջի իմ՝ զսեղան ,
 ակն յանդիմանն եկողաց իմոց :

Ո՛վ , քանի՛ մեծ եղև սէր քո յիս , Աստուած .
 Ոչ շատացեալ նախկինն արբօք պարզեաց՝
 Եւ զհիահարաչ սեղանս յեաինն յարդարեաց .
 Սեղանն կենաց , արդարութեան համադամ ,
 Յօր ինքդ Աստուած գառըն զենեալ ողջանդամ ,
 Բաշխիս ի կեր այնմ՝ որ չըզգայն արդ այլ համ .
 Պաշտեմ զհաւատս՝ որ կանգնեցին զայդ սեղանն ,
 Հողեխառնիմ սիրոյդ՝ յորմէ յիս տեղան
 Ը ի թք անապակք՝ յորոց ոստխքն իմ գողան :
 Պատրաստ է սիրտ իմ առ քեզ տէր , եւ անձուկ ,
 Թ՛ եւ չեմ արժան այդքան լինուլ գեր գանձուք .
 Սակայն դովաւ միայն փրկին մահացուք :
 Դու լոկ մընաս ինձ յայսմհետէ ինչ համայն ,
 Իղձ , յոյս եւ կեանք , անմահութիւն դու միայն ,
 Անուլ ըզքեզ եւ զիս տալ կամիմ զամենայն .
 Ե՛կ Յիսուս , եկ ի սառապեալ սիրտս հանգիր ,
 Ե՛կ , փարատեա զմահու մըլթարքս եւ ոճիր ,
 Ե՛կ հուսկ անդամ եւ յաւիտեան զիս ստացիր :

Է.

Օձեր իշոյով զգրուիս իմ . բաժակ քո որպէս
անասպակ արբեցոյց զիս :

Գոհանամ Տէր եւ օրհնեմ զգութ քո անձառ ,
Որ սրբբեալ զկեանս յաւազանիդ ջուր պայծառ ,
Օձեր իւզով այն ինչ մուծեալ զիս յաշխարհ ,
Ընդ թըշնամիս հոգւոյ տալ մարտ անասյթաք
Ընդ զօրութիւն դժոխոց , ընդ իլձ երկրահակ
Եւ ընդ անձին հրապոյրս երկնից հակառակ .
Եւ արդ ի հուսկ ի պատերազմ ահաւոր ,
Յորում հանուրք խըմբին ոսոխք հին եւ նոր ,
Դարձեալ պընդէս նովին զանդամս մեղսակոր :
Ձէթս օրհնութեան զոր ընդունիմս հաւատով
Սրբբեացէ զչարս՝ զոր զգայութեանցըս դրըրգով
Գործեցի նդդէմ քո , եւ զյանցուածըս սրտով .
Օձումնըս սուրբ ու անասպական քո բաժակ
Զինեալ հանցեն զիս առ ոսոխն այն բանակ ,
Որ ի նանիր սպասէ հոգւոյս յորս անցաք :

Ը.

Ողորմութիւն քո տեր զնեո իմ եկեացէ
զամենայն առաքս կենաց իմաց :

Արդ ողջոյն ձեզ ամենայն հետք մահացու
Զոր թօթափեմ յանձնէ յօրհասըս պահու .
Ողջոյն քեզ վայր պանդրխտութեան երկնաչու .

Աղջոյն ձեզ հարբ, եղբարբ, որդեք հարազատք,
 Արոյ հարկ Տեառն է կալ յինէն տարանջատք,
 Զիս աղօթիւք յուղարկեցէք եւ մի լայք:
 Ընտրհա խնդրէ հոգիս այս՝ ոչ արատաւուս,
 Եւ թ' արտասուէք՝ իբր արտասուեաց ինքն Յս
 Տալ յարութիւն ի մեղանաց ու ի մահուս:
 Հրաժարիմ սուրբ եկեղեցի արդ յերկրիս՝
 Հանդերձեալ հուս հանդիպել քեզ յանախ
 Ընդ փեսայիդ՝ յանապահանն հարսանիս:
 Աւր կոչեն զիս ողորմութիւնք Տեառն անդեղջ,
 Տառապանացրս գործելով աստէն վերջ,
 Օրհնել յամայր կեանս ի սրբբոցն ըզնա մէջ:

Թ.

Յոյց ինձ անկապարհ յոր զնացից. զի առ
 քեզ տեր ամբարձի գալս իմ:

Եւ արդ հատեալ իմ Տէր՝ ի բնաւ աշխարհէս
 Բոպէիւ լոկ միով մինչ գեռ կապեալ եւս,
 Աւ ահա մըխիմ ի հանդերձեալն տապարհս,
 Յուշոյս շուարեալ ի մէջ կենաց եւ մահուս՝
 Ի հասանել խաւարին յելլս շնչոյս,
 Ըզճանապարհ գնալոյ ինձ ցոյց տէր Յիսուս:
 Ի դագարել ըզգայութեանցս եւ սրբաի,
 Յորժամ չառնու չազդի յերկրէ ինչ ասաի,
 Պընդեա՛ զմբտացս յեաին շարժուած վտարանդի:
 Ար աւասիկ հուսկ զայս բարձեալ քեզ զաշկուս
 Կը որ ասեղծիչդ ես իւր՝ մայլթէ ի լութիւնս,
 Յոյց զոր առ քեզն հանէ շաւիղ ի բարձունս:

Ժ.

Փրկեա զիս ի բշխամեաց խնոց տեր, զի զքեզ
ապառեկն ինձ արարի:

Քանզի ահա հոգւոյ խնոց թշնամիք

Իբրեւ անհաշտ օրհասական գոռ մարտիկք

Ձ յեախն շարժեն ինձ ընդդէմ զէն բըռնածիդ.

Ձամենայն հէնա յարուցանէ սատանայ

Իրժոխք ի ճիգն յեախն կորուսա ըսպանայ,

Եւ արհաւիրք դարնչին անվերջ զինչ շրջծայ.

Այնքան խիզախք եւ քինալիցք շուրջ զեռան.

Մինչեւ կորզել ի քոց ձեռաց իսկ յողան,

Ի մի հարուած կրկնել ըզվէրս ամենայն:

Տէր, որ զՊետրէ ի ջուրց սատան որկորուսա

Յընկրուզանելն եւ թափեցեր յանկարծուսա,

Փրկեա՛ եւ զիս յայսքան ալեաց անխախուսա:

Ձի զքեզ ծանեայ ի կեանս իմ Տէր ապաւէն,

Մինչ յայլ յայլմէ լեալ միտքս յիշել արդ չբաւեն,

Դու Տէր յիշեա՛ զիս յանտուայ քո զխտէն:

ԺԱ.

Ոչսո ինձ առնել զկամս քո. զի դու ես

Ստորած իմ:

Ի սեամ՝ սահուն եւ խուն երկուցն անդ կենաց

Կալով հոգւոյս յերեք ի յոյս ու ի կասկած

Ըզքեզ միայն ունի յուսոյ կէա՛ Ստորած.

Տագնապ մահու զոր հեղեր յաղգս Ազամայ
 Թէպէտ գիւրեալ մահուամբ փրկչիդ իմ կամայ՝
 Այլ տակաւին յօրէնք բնութեանս բրնանայ .
 Տէր , զարհուրեալ զըզուլս ի դառն ըմպակէդ
 Թէպէտ ինքնին դառնացուցի զայնրը խէթ .
 Թէ բառնալոյ զայն յինէն չէ հնար , օգնեա՛ գէթ .
 Յիշեա զտագնապ քո , զարեան քիրան օրհասին ,
 Ըզհոգս եւ զահ որ ընդ քեզ իմ վասն անցին ,
 Եւ զոր ընդ քեզ գոչեմս արդ զմե՛ծ եղիցին .
 Եղիցին կամք քո Տէր կենաց եւ մահու , (հաւ ,
 Կամքդ այդ լըցցին յիս յերկրաւորս հուսկ պաւ
 Ա՛հ , մեռանիմ . . . Յիսուս , ընկալ զհոգիս դու :

ԺԲ.

Հոգի քո սուրբ եւ բարի առաջնորդեսցէ ինձ
 ի յերկիր ուղիդ :

Եւ հոգիդ սուրբ եւ բարի , նոյն հոգեակեր՝
 Որ նորածնեալ յաւազանին զիս սրբէր
 Եւ եօթնարիփին շնորհօք ըզմեղս իմ քաւէր ,
 Կերպարանօք այսրէն իջեալ հեզագին՝
 Ի տատանեալս քան ի տապանն հեղեղին
 Նիշ հաշտութեան ինձ բերցէ յիւս ըստ մարմին .
 Հոգի քո սուրբ՝ հոգւոյս ոչ միշտ սուրբ ելոյ
 Աւաջնորդեալ հանցէ յուղիլ յերկիր քոյ
 Ի գունդագունդ գթօխոց այսոց ի միջոյ .
 Որ բարեխօսն է հեծութեանց միշտ անմուռն՝
 Եւ մինչ հատեալ սպառի յինէն օդոյս շունչ ,
 Կացցէ եւ յայնժամ չթողուլ զիս անտէրունչ :

ԺԳ.

Վասն անուան քո տեք կեցուցես զիս .
արդարաբար քոյ հանցես ի ներշնչեմ
զանձն իմ :

Եւ մինչ գլտից զիս հոգի սոսկ յերկիր նոր ,
Վայր անծանօթ , միայնակ յատեան ահաւոր ,
Եւ յանդիման մեղքս ինձ կացցեն բիւրաւոր ,
Երեւեցի արդարութիւնն անպատուակ ,
Եւ ծանեաց Տէր ըզքեզ եւ զիս բովանդակ
Եւ սարբան դատեցայ զանձն իմ ինքնեակ ,
Եւ չիշխեցից հայել ի դէմս քո Աստուած ,
Ո՛հ , յիշեա զխաչդ եւ զսէր , եւ դու յիս հայեաց .
Հայեաց յոգիս՝ եւ տես զանուագ անսոսաց :
Վասն անուան քո Տէր գրթած մարդասէր ,
Որ առաջին եւ վերջին յուշ կենացս էր ,
Քանզի կարեօ՝ քաւեա՝ եւ զմեզս մի յիշեր :
Թէ պարտիցի նձ ինչ որ՝ թողում ես կամաւ ,
Եւ դու՛ստ խոստմանդ՝ պարտուցս առ քեզ թող
անբաւ ,
Ի ներութեան բանակն զհոգիս հան շտապաւ :

ԺԳ.

Ողորմութեամբք յոյ սասակեացեալ
 գրչեամբս իմ :

Ողորմութեամբք՝ որով միայն արդ ժուժամ,
 որով պընդիւր հաւատքս երկբայ ժամէ ժամ,
 Աւանց որոյ՝ դժոխք էր ինձ կեանքս յամերամ,
 Ողորմութեամբք՝ որով զերծայ յոսոխաց
 Ընդ արհաւիրս անցեալ մահու եւ գիւաց,
 Նովին թափեա զհոգիս եւ հուսկ յայս չարեաց .
 Ոչ մարմին աստ, ոչ հրասպոյրք, չիք որ սատան .
 Արդարութիւն լոկ ու անաչառ գատաստան .
 Այլ ես ի յոյս ու ի սէր քո կամ ապաստան :
 Զոր քան զամէն սիրեա՝ ըզնոյն յիշեմ՝ գնութ .
 Ազէ Աստուած գրթած, յիշեա՛ զայն եւ դուզ .
 Շատ է հոգւոյս ցայս վայր ի քէն կալ գաղութ :
 Արբայութեան բաց են քո դրունք յարաժամ
 Սէր քո ջընջեաց զարդարութեանըն պատգամ,
 Աստուած բաժին իմ յաւիտեան, առ քեզ գամ .
 Արի Աստուած իմ, տեսեալ զիս ի հեռուս,
 Խընդա՛ ի գիւտ որդւոյդ, երբեմն ի կորուստ,
 Զպարանոցաւ հոգւոյս արկ գիրկըս հարուստ .
 Պըճ՛նեա ի զգեստ՝ զոր կազմեցերդ յաւիտեանց,
 Զաստուածութեանդ կընկք արդ հար յիս ա-
 նանց
 Կոչեա զորդիագ երեց, ինքնին ի պար անց :

Եկայք սրբոց ժողովք , լինել խրախ ի տէր ,
 Զ' ի կորստեանց ու ի մահունց զիս թափեաց
 սէր ,

Ուրախ լիցուք եւ խնդասցուք ի բաստ մեր .
 Զի անց գրնաց ի մէջ երկրին ըստուերած ,
 Յարեան փրկչին լուացեալ եղեաք անարած ,
 Աստուած ընդ մեզ յայսմ հետէ , մէք ի յԱս-
 տուած :

ՍԱՂՄՈՍ Ծ .

Ողորմեաց ինձ Տէր ողորմեաց
 Որ ես աղբիւր ողորմութեանց .
 Առ մեղուցեալ քո ծառայս՝ բաց
 Ըզգրթութեանդ անըսպառ գանձ :
 Որպէս հանդերձ տխրատեսակ
 Կրուեալ զինեւ կայ մեղաց աղա .
 Իջցէ իջցէ շնորհաց վըասակ
 Լուանալ գործել զանձն իմ անախտ :
 Իմ եղերանց չէ սէտ վըկայ
 Յանաչառ քում դատաստանիդ .
 Դատախազ ես ինքն եմ կամայ ,
 Յաւոց խըղձիս սպարտ եւ առիթ .
 Քեզ միայնոյ՝ լիրբա եւ ժրպիրհ
 Բարերարիդ իմ դարձայ՝ նդդեմ .
 Փոխան շնորհացդ առատաձիր
 Կուտեալ ըզհոյլս գործոց դժխեմ .
 Առ քեզ անդրէն արդ գլխակոր
 Առ դատաւորդ մատչիմ յուսով .
 Զի եւ արդար ի սաստ հըզօր
 Եւ քաջայաղթ ցուցցիս դըթով .
 Եթէ շնորհաց ինչ խնդրես վայր ,
 Զըկայ տեղի յիս անարատ .
 Քանզի մեղօք մըտեալ յաշխարհ
 Յար ի նոցին անկայ թակարդ .

Այլ թէ 'նդ շաւիղ կամիս ուղիղ
 Ճշմարտութեանց ինձ հետեւել,
 Զխմաստութեանդ ակնախրախիղ
 Եթէ զդաղանիս տաս ինձ քերնել,
 Յօղեա՛ սիրով ըզքոց շնորհաց
 Հոգւոյ մըտաց ըզցօղ սրբելիչ,
 Հեղ գրթութիւն, եւ քեզ գրտայց
 Քան զձեան քատակ մաքուր եւ ջինջ:
 Լըսո՛ զձայն քաղցր թողութեան,
 Ըզհեշտ բարբառ յուսոյ գովող,
 Եւ ցընծասցեն յիս միաբան
 Սիրաս եւ ոսկերք հարեալք ի դող:
 Դարձո՛ տէր զաչըս քո ահեղս
 Դարձո՛ հոգւոյս մեղսամախարդ,
 Ըզհեղութեանդ տեղաց յիս տեղս,
 Եւ ես եղեց տեսեամբ զբարթ:
 Փթըթեացի սիրտս իբրեւ սարառիչ,
 Եւ շընչեացէ հոգւոյդ զեփիւս:
 Սըսացին տենչանք սրբախա առ քեզ,
 Քաղցրացին խունիք ըղձիցս ի բոյր:
 Եթէ զերեսդ եւեթ յինէն
 Ոչ դարձուցես Տէրդ իմ ի բաց,
 Եւ ի հոգւոյդ աստուածեղէն
 Ոչ զբրկեացես զիս ի շնորհաց,
 Եթէ զփրկչիդ իմ քաղցրիկ յոյս
 Տընկես ի յանձն իմ հաստարմատ,
 Եւ սրբարար հոգւոյդ ի լոյս
 Հերձուս զմեղացս իմ առադատ,
 Ես ինքն հիգաց եղեց յորդոր
 Ըստուածանդէտ անօրինաց:

Ես ինքն եղեց վարդապետ նոր
 Առ քեզ դարձին եւ զըզմանաց :
 Այլ ի մեղաց սուրբ արա զիս
 Եւ յարենէ հեղոյ անպարտ ,
 Ի թիւր դատմանց չարասիրիս ,
 Եւ օրհնեցից ըզբարերարդ :
 Շըրթուհք պրղծեալք ի բան զազիր
 Սըրբեացին քեզ հեշտ յերգարանս .
 Հըպեալ ի մասնըդ հըրակիր՝
 Աստուածախօս լիցի բերանս :
 Թէ նգ պատարագս հաճեալ էր քոյ՝
 Բիւր ընդ մեղացս հանէի զոհ .
 Այլ ողջակէզք խակ չեն հաճոյ ,
 Եւ ընդ զենմունս գառանց չես գոհ .
 Հաճոյագոյն քեզ պատարագ
 Գիտեմ ըզսիրտ հեզ եւ խոնարհ .
 Արդ ընկալ զիս զոհ բովանդակ ,
 Եւ մի գըրես Տէր՝ արհամարհ :
 Ի խոնարհեղ սըրաիս ցաւած
 Բարձրացի Տէր հոգւոյս խորան
 Ընդ Սիոնի հին պարըսպաց
 Յայսմհեակ գոլ քեզ ճեմարան .
 Անգ մատուցին քեզ պատարագք
 Իղճք իմ եւ գործք սըրբեալք ի սէր ,
 Եւ զուարակացըն վոխանակ
 Զերմըն սըրաի ելցէ ճենձեր :

ԱՂՕԹՒՔ ՄԱՆԱՍԷԻ

Յաւխանից ամենակալ Տէր Աստուած
 Աբրահամու , Իսահակայ , Յակոբայ
 Եւ համօրէն արդար նոցին զաւակայ
 Թող ինձ ըզմեղս իմ եւ գրթով այց արա :

Որ արարեր ըզտարր երկնից լուսաւոր
 Եւ կազմեցեր զերկիր գոյիւք բիւրաւոր ,
 Ամենակալ Տէր
 Զմեղս իմ մի յիշեր :

Դու որ ծովու յար ծըփելոյ արկեր սանձ
 Ի խորս ալուց փշտել զալիս խրոխտասպանձ ,
 Եւ զահաւոր անուանդ հարեալ ըղկրնիք՝
 Զաւաղ արկար բուռն յորձանայ եդեր նիգ .
 Ամենակալ Տէր ,
 Զմեղս իմ մի յիշեր :

Յ' ոյր երեսաց ահի ու աջոյդ յաղթական
 Տարերք ամէն ի գող հարեալ եւ սոսկան ,
 Ամենակալ Տէր ,
 Զմեղս իմ մի յիշեր :

Որ ետդ անչափ լայնըութեամբ սուրբ փառաց
 Եւ ահաւոր ի բարկութեան սպաննալեաց՝
 Զոր թօթափես յանցուցելոցն ի գըլուխ ,
 Բայց զարդարովք հեղուս ըզգութ. քաղցրաբուխ ,
 Ամենակալ Տէր
 Զմեղս իմ մի յիշեր :

Դու Տէր բարձրեալ երկայնամիտ եւ գրթած ,
 Որ զըզանաս ընդ եղերունս մահացուաց .

Ամենակալ Տէր

Զմեղս իմ մի յիշեր :

Որ ոչ եզեր հարցն առաջնոց եւ ամբիծ

Զմեղաւորաց ապաշաւանքս թախիծ .

Ամենակալ Տէր

Զմեղս իմ մի յիշեր :

Այլ ինձ եզեր մեղուցեղոյս չարաչար ,

Որոյ մեղաց խիճք ծովու չեն հաւասար .

Ամենակալ Տէր

Զմեղս իմ մի յիշեր

Բեռինք մեղաց որ ըզբլխովս դէզադէզ

Զակն ընդ երկնից յառել չներեն ասպարէզ ,

Զողորմութեան ինձ ընթեռնուլ ըզքարտէզ .

Ամենակալ Տէր

Զմեղս իմ մի յիշեր :

Քանզի կամաւ չար ի չարիս հիւսեցի ,

Ըզբլթութիւնդ յարդար ցասունն ինձ ամի .

Աքքի զպաշտօնդ դարձուցի քեզ ըզթիկունս

Կանգնեալ դրօշեալս ըզխուռն եւ խեռ մոլու .

Ամենակալ Տէր

(Թիւնս .

Զմեղս իմ մի յիշեր :

Եւ արդ բեկեալ սրբաիւ , դիմօք եւ հոգւով

Յերկիր խոնարհ զանձն իմ հեղում ամօթով ,

Ի քաղցրութեանդ ապաւինեալ անձառ ծով .

Ամենակալ Տէր

Զմեղս իմ մի յիշեր :

Մեղայ՛ տէր , մեղայ՛ քեզ բիւրս եւ հաղար ,

Խոստովանիմ ինձէն զչարեացքս գումար

Յայդ եւ ցերեկ կալեալ յաչացքս նըշմար .

Ամենակալ Տէր

Զմեղս իմ մի յիշեր :

Ո՛հ , ի խորոց սրբախց առ քեզ տէր դառնամ ,
Թող ինձ տէր թող կուրացելոյս մինչ յայս ժամ
Եւ մի՛ստ չարեաց իմոց կշռես բարեխնամ :

Ամենակալ Տէր

Զմեղս իմ մի յիշեր :

Մի ցասնուցու յաւերժութիւն քո անմահ ,
Մի զիս մտաներ յարգարութեան քում ի յահ .
Մի յանկախճան գեհեանս առնես դատապարտ .
Ո՛հ Տէր , մի տար ինձ մի զլալօնս տարապարտ
Ըղղառնութեան բաժակ ոգւոց յուսահատ :

Ամենակալ Տէր

Զմեղս իմ մի յիշեր :

Զի դու Աստուած՝ աշխարողաց ես Աստուած ,
Զողորմութիւն սիրես սիրել աննախանձ .
Յի՛ս տէր , չիցեմ թէպէտ արժան քոց շնորհաց :

Ամենակալ Տէր

Զմեղս իմ մի յիշեր :

Դարձ առ իս Տէր , դարձ յանձն իմ , դարձ եւ կեցո ,
Զի սարքնայեալ բուռն հարկանեմ զոտից քո ,
Զողորմութիւն կարգամ մինչ յելլս հոգւոյ .

Ամենակալ Տէր

Զմեղս իմ մի յիշեր :

Օրհնեցնից Տէր ըզքեզ ընդ սուրբ քո զուարթունս ,
Խունկս ընդ նուագացնն մատուցեալ անուշունս .
Եւ հնչեսցեն տիեզերք փառս ի բարձունս :

ԽԵՉԱԿ ՍՐՏԻ

Ի բացավայր դաշտիս տընկեալ տարագիր
 Յահեղաշունչ հողմոց կըքեալ ընդ երկիր ,
 Շըրջաբերեալ զխմով բընով զազխաղփուն
 Ծընգեալ ծըփիմ ես սիրտ տըկար եւ նըկուն •
 Յատակս օտար արմատախիլ զիս կամի
 Հիւսիսայնոյն մասնեալ հողմոց չարկամի •
 Հիւժեալ ծըփին ճապուկ ճըղերս ըզճայրիւ
 Զինչ լալական գուսանի վարսք զիսախուի •
 Եւ ի յայտոց օդոյս լինիմ ալէկոծ
 Քան զեղեւնեայ տաշածն ի մեծ ծովուն ծոց •
 Խըղեալ կորզին հողմակոծեալ սաղարթունք
 Ըստուերամած ձորոց վարեալ գերութիւնք •
 Տեռեալ Եւրեայ զգողգոջուն զիմ հովանի ,
 Թողու ծանակ առ բընութիւն հողանի :
 Ա՛հ , ո՞ տարտամ սըրտիս տընկոյ միայնոյս
 Նեցուկ կըթոս կողին • ուսալի՞ սըմա յոյս :
 Ա՛հա զխեչակըն քառաթեւ գիտեմ ես ,
 Սեաւ նա համակ , այլ երեսօք յուսատես :
 Ե՛րթ գըթութի , երթ առ ըզխաչդ ինձ նեցուկ ,
 Բէր գիր յանութ տո՛ւր առ կըթոտըս բազուկ •
 Բունս առ բընուին այն անվըկանդ զօգեսցի ,
 Կոչկոճ՝ ճակատս ի լըծակ անդր ամբարձցի :
 Կամ սըրտահար հողմ վըտանդիս փախչ՛ ի բաց ,
 Կամ ընդ խաչիս ես տատանիմ անկասկած ,
 Մինչեւ ծագէ խաղաղութեան տիւն յամպոց
 Եւ դադարեն տարերք կըրից հողմակոծ :

Ի ԽԱԶԻ

Մ Ի Ա Յ Ն Հ Ա Ն Գ Ի Ս Տ

Ասպատակք վըշտաց բազմաց ելին ինձ յառաջ .
 Զարհուրեալ խուճապեցայ՝ մոռացեալ ըզխաջ .
 Դիմեցի յայս , դիմեցի յայն եւ չըկայր հուն ,
 Տարածեալ կալեալ էր ըզհետս անօթ մահուն .
 Դարձայ ի վեր եւ ի վայր , եւ ն' անդ կառեալ
 կայր .
 Թաքչէր թաքուսան իմ . փախուսան ի փախուստ
 դառնայր .
 Ամենուստ խեթիեալ՝ ամփոփելով ասպա ես
 սիրտ ,
 Արկի՛ գողսըն քառաթեւս եւ գրախի զհանդիստ :
 Ասպատակք վըշտաց , կալէք արդ զամեն շաւիղ ,
 Եզխտ սիրտս իմ ըզմիակ ճանապարհն ուղիղ :
 Ահ , ի գիրկս անդ ցաւագին գրախի պցաւոյս դեղ ,
 Նա ինձ յայսմ հետէ կենաց , նա ինձ մահու դեղ :

ԵՐԿՈՒ ՎԱՇՏՔՆ ԵՐԿՆՍԱԽՈՒՄԻՒՅԻՒ

Արքայութեան երկնից բացեալ են դըրուելք •
 Ի ձայն նուազաց հրաւեր կարդան սուրբ զուար-
 թուելք՝
 Յաջմէ կացեալ եւ յահեկէ սեմոցն այն ,
 Ընդ որ չէք ելք , այլ մուտք եւ կայք յաւիտեան :
 Մի դասն անդուշ հրնչեցուցեալ սէր անձառ՝
 Կոչէ զարդարս յուրախութիւն անբասառ •
 Միւսոցն հարեալ ըզսրբատուչ մասն ի Յոյս՝
 Մեղաւորաց աղղէ յորդոր եւ խրախոյս :
 Մի դասն երգէ • Սիրո՞ղք , սէր ձեր մընայ ձեզ •
 Եւ կարկառէ շուշանափայլ ըզբեհեզ •
 Միւսն երգէ դաս • Ապաշխարո՞ղք , առէք կեանս •
 Եւ քրքրմացան մատուցանէ սպամուճանս :
 Անմեղութիւն՝ զինչ լուսակիզն աղաւնեակ
 Կայ սարազլուխ հոգեացրն միշտ անբրժեակ •
 Ապաշխարող գընդին՝ Գութ ինքն առաջնորդ ,
 Ոչ անարտօսր՝ երթայ զուղին երկնահորդ :
 Ո՛հ , նախանձիմ՝ ես ընդ արդարս սրբբասուն
 Վրիպեալ գորոյ կաճառակից աջ դասուն ,
 Որք ըզսէր դրօշ սարգեալ շարժեն ցընծալից
 Եւ թեւս առեալ սրանան ի թիւս վերելից :
 Ապաշխարողք սարգեն զյուսոյ ծիածան
 Որ յարաատուս մեղսաջինջ հար զիւր նըշան ,
 Ըզխաչն եզեալ յանութ նեցուկ աննըկուն՝
 Հեփ ոտիւք այլ երագեն եռանդուն :

Սաւառնի գրօշ սիրոյն ի սեամ լուսաճեմ (ղէմ.

Ու արդարք երգեն , « Հասաք ի դրունս քո Սա-

Ահա հանգիստ զոր ընտրեցարս յանձկութեան

Եւ ի սրմա բնակեցուք մեք յաւիտեան » :

Իսկ ընդ Յուսոյն զինուորեալ իմ ընդ վաշտու ,

Ու ահա ժաման եղեալ մըտից կենսատու ,

Գոչեմ . զարտօսք իմ ջընջելով սիրակաթ .

« Ո՞ր յաղթութիւն քո մահ , զըժոխք՝ ո՞ր քո

խայթ » :

ԵՐԱՆՈՒԹԻՒՆԻ ՔՐԻՍՏՈՍԻ

Երանի՛ աղքատքն հողւով

Յաղցից կենաց թափուրք գոլով •

Նոցա արեալ արքայութիւն ,

Յաւերժական ժառանգութիւն :

Երանի՛ սրգաւորաց

Ընդ կիրս մարդկան եւ հոյլ չարեաց •

Ընդ հուս նոքա մխիթարեսցին

Յանձառ հրրճուանս՝ փոխան թախծին :

Երանի՛ սրբախից հեզոց

Եւ անհրապարտ խոնարհ հողւոց •

Նոքա յերկրի վէճս անհամբոյր

Ժառանգեսցեն բաժին ընդոյր :

Երանի՛ ոյք քաղցեալ կան

Եւ ծարաւիք արդարութեան ,

Ոյք մարմնաւոր չառնուն ճաշակ •

Երկինք հարցեն նոցին ըզյադ :

Երանի՛ ողորմածաց

Որք ըստ կարի տան ձեռն եղբարց •

Նոքա դրացեն ողորմութիւն

Յամենադատ ու արդար աջոյն :

Երանի՛ սրբախիւք սրբոց

Զոյս ոչ վառեաց ախտիցրն բոց •

Նոքա տեսցեն զԱստուածն անտես

Բազմեալ յամբիժ հողեացն հանդէս :

Երանի՛ հաշտարարաց ,

Որոց իցէ հայրն ինքն Աստուած .

Զի զհուր սիրոյն զոր արեւ յերկիր

Սփռեն ի սիրազս կարեկիր :

Երանի՛ հաշտեւոց

Վասնն պատշաճ՝ ու արդար գործոց .

Արքայութեան երկնից բաղմոյթ

Ժողովեսցէ զնոսին անքոյթ :

Երանի՛ ձեզ ո՛վ մարդիկ

Թէ հաշտեալ եւ նախատիք ,

Եւ զըրպարտեալ ի բանըս սուտ

Հանդուրժիցէք յիմ ըսպասուդ :

Յընծացէք ւ ուրախ լերուք

Զի վարձ բազում յերկինս առնուք .

Հաշտանօք մշտցէ արդար

Յանվիշտ կենացն յաւերժ դադար :

ՀՈԳԻՍ ՅՅԺԱՐ Է

ԲԱՅՅ ՄԱՐՄԻՆՍ ՏԿԱՐ

Ահաւասիկ եմ ո՛վ Տէր ,
 Ահաւասիկ եմ ո՛վ սէր .
 Առ ի՞նչ կոչես ըզսիրտս այս
 Ըզքո սպասեալս եւ ծառայս : —
 Ի վիշտ , ի խաչ եւ ի ցաւ ,
 Որով երկնից հուն բացաւ : —
 Ահա հոգիս իմ յօժար ,
 Բայց ո՛հ , մարմինս է տրկար :
 Ընդ ճանապարհ յոր դընաս՝
 Տէր , կամիմ գալ անբամբաս .
 Թէպէտ եւ նեղ եւ անձուկ
 Սըրտի ձողկաս եւ փրղձուկ .
 Լըսեմ կոչոյդ , եկ զիմ հետ .
 Եւ զանդխտեմ եա ընդ եա .
 Քանզի հոգիս է յօժար .
 Բայց ո՛հ , մարմիննրս տրկար :
 Անուամ ըզլուծ քո քաղցրիկ
 Եւ ըզբեանեակ փոքրոգիկ ,
 Եւ զոր բաննալ ինձ ընդ ուս
 Խրատես ըստէս տէր Յիսուս՝
 Ըզխաչ՝ որով երթաս դու ,
 Եւ սիրտս ընդ այն թինդ առնու .
 Քանզի հոգիս է յօժար .
 Բայց ո՛հ , մարմիննրս տրկար :

Ասես , ի գիւտ ապառնւոյն
 Կորուսանել զանձն համբուն .
 Թողուլ զհեշտից առագաստ ,
 Յարենակցաց կալ յուրաստ .
 Քեցել յանձնէ զսիրելիս
 Եւ կալ մեկնակ յաշխարհիս .
 Եւ իմ հոգիս յայդ յօժար ,
 Բայց ո՛հ , մարմինս է տրկար :
 Ի տերունիդ մըխեալ ուղ
 Եւ գրտանիմ յար տըրմուղ .
 Յոյս զիս վարէ միշտ յառաջ ,
 Երկիւղ՝ ոտիցըս դանդաջ .
 Հեռուս գիտեմ հաշտ զինչ ջուր
 Եւ ի մօտելըս՝ բարկ հուր .
 Քանզի հոգիս է յօժար
 Բայց ո՛հ , մարմինըս տրկար :
 Տաս , եւ ցանկամ եւ գիմեմ ,
 Ու ի տեսանելն՝ հառաչեմ .
 Ի տըւողէդ յորդորիմ
 Եւ ի տըրից խոտորիմ .
 Եւ ի վարելն իմ ըղբեւ ,
 Հեստեմ ընդ լուծ քո թեթեւ
 Քանզի հոգիս է յօժար ,
 Բայց ո՛հ , մարմինըս տրկար :
 Ահա եւ վիշտ նոր եւ ցաւ
 Այժմիկ հանդէպ կառուցաւ ,
 Որպէս անհարթ մի կոշկոռ
 Յորմէ լինի սիրտ խոժոռ .
 Ես ես կամիմ տալ այնմ ուս
 Ու առ քեզ գիմել միշտ՝ Յիսուս .

Հողիս յօժար է յօժար ,
 Բայց ո՛հ , մարմինըս տըկար :
 Կենցաղավար սոքա նկերք
 Մին յերկիր հակ , միւսն յեթերք .
 Կեղի բնութիւն յերթալն իւր ,
 Կէսն ընդ ուղիղ , կէսն ընդ թիւր .
 Մին առ ամէն զիմագրաւ ,
 Միւսն ահաբեկ տագնապաւ .
 Քանզի հողիս է յօժար .
 Բայց ո՛հ մարմինըս տըկար :
 Ահա վրտանգքս առաջի
 Կան իմ եղեալ առ խաչի .
 Բառնալ զաշխարհս ինձ առ քեւ՝
 Տէր իմ , թըւի յոյժ թեթեւ .
 Այլ ի բնութիւն կըրթեալ յիմ՝
 Դարձեալ գողամ եւ կասիմ .
 Քանզի հողիս է յօժար ,
 Բայց ո՛հ , մարմինըս տըկար :
 Այլ ի ցաւոցս ասպարէս՝
 Տէր , դու զհամբակ քո սընդես .
 Դու ինքն երթաս քայլաքաջ ,
 Խաչ քո բառնայ զիմըս խաչ .
 Դառնաս , հայիս ու ածես ձայն . . .
 Պատրաստ եմ քեւ՝ առ համայն .
 Ահա հողիս է յօժար ,
 Ահա մարմինս անտըկար :

ՄԻ՛ ԼԱՐ

Գլխացաւ ի նա (Յիսուս) եւ ասէ . . .

ՄԻ՛ ԼԱՐ :

ՂՈՒԿ .

Զի՛ ես խոսովեալ սիրտ դու մողար .
 Ահա Յիսուս . մի լար , մի լար :
 Աս իմէ՞ ի ցաւս համակ
 Ըզմէ՞ տրտունջդ այդ եւ բողոք .
 Մի՛թէ չիցէ՞ վերաց կամակ
 Մի՛թէ չիցէ՞ քեզ ունկն ողորք .
 Զի՛ ես խոսովեալ սիրտ դու մողար .
 Ահա Յիսուս . մի լար , մի լար :
 Հասարակաց են վիշտք ու աղէտ
 Թէպէտ ի կերպըս բազմազէմ .
 Տատասկախիտ տըւաւ մեզ կէտ ,
 Հարկ է յարիւն դալ յոտին ճեմ :
 Ո՞վ որ անվիշտ ի կենցաղում
 Թէ եւ միոյ աւուր կենօք ,
 Ի ցաւ ու անէծքս ծընելում
 Ոչ է վայել ապրել անհոգ :
 Ոչ ի սիրտանքս վաղանցիկ
 Կարգեցաւ քեզ սիրտ ի ծոցիդ ,
 Այլ գործարան տրտմազգեցիկ
 Բառնալ ըզկեանքս մահառիթ :
 Իցեն հեշտք սուղ եւ վիշտք բազում ,
 Բնութիւն տրկար եւ ցաւք հըզօր ,

Դեղք յամբարոյժ , վէրք աստուած .
 Այլ ոչ յերկար կեանս աստանօր :
 Հովիտ մահու սա եւ ցաւոց ,
 Եւ քաւարան հընոյ ախաին .
 Մինչեւ անցեալ ընդ երկանց ծոց
 Ոչ ոք մըտցէ յուրախն Ադին :
 Արդարութիւն կըշտեաց քեզ զայդ ,
 Այլ գըթութիւն թեթեւ արար .
 Եւ քաղցրացոյց քեզ զակամայդ
 Խառնեալ ըզկամս իւր բարերար :
 Զի ես խռովեալ սիրա դու մոլար .
 Ահա Յիսուս , մի լար մի լար :
 Ետես ըզքօ կիրս եւ գութ արկ ,
 Յերկնից բարձանց վաղեալ ի սէր՝
 Եմուտ ընդ քօ ի սպաս եւ հարկ ,
 Եւ ժողովեաց յինքն ըզքօ վէր :
 Առեալ զբաժակն իւր երկնալիր՝
 Ելից ըզցաւդ եւ զարտասուս ,
 Եւ գողալով այլ բըռնալիր
 Կալեալ էարբ ըզքօ մըրուրս .
 Արդ ըզքամիդ զայդ եւ կայլակ
 Մատրուակեալ ի քօ փրկչէդ ,
 Յոր եւ սիրոյն խառն է ճաշակ ,
 Ոչ ըմպիցես դու անզանդէտ :
 Քաջալերեաց , մերձ է Յիսուս .
 Ըզգայ զցաւս , է քեզ կարեկից .
 Ինքնին սրբէ զքօ արտասուս
 Եւ սէր կաթէ ի քօ թախիժ .
 Մի այլ խռովես սիրա իմ մոլար ,
 Ահա Յիսուս , մի լար մի լար :

ԵՂԻՅԻՆ ԿԱՄՔ ՔՈ

Եղիցին՝ն կամք քո Աստուած .

Աստուած իմ, կամք քո եղիցին .

Յորչափ սրբախա իցէ զգացուած՝

Կամք քո ի նմա կատարեսցին ,

Թէ ներես կեանս ինձ յերկար ,

Թէ հրամայես մահ առօրին ,

Թէ դիւր առնես ինձ թէ գրժուար ,

Յամենայնի կամք քո լիցին :

Թէ քաղցրիկ յիս ակնարկես

Եւ թէ շրջես զերեսդ ի բաց ,

Գիտեմ զի՝ սպառ չառնես անտես ,

Միշտ եղիցին՝ն կամք քո Աստուած :

Այլ ես սիրա եմ փոքրոգի ,

Անձրն խռովեալ, մարմին տրկար ,

Եւ հանապազ ի վրտանոցի ,

Քեզ խոստովան եղեց խոնարհ .

Ձի զքո կամս եւեթ կամիմ ,

Այլ թողուլ զիմն՝ ածէ ինձ զեղջ .

Ձոր տամբս քեզ՝ ինձ պահ ունիմ

Թեթեւ թըւին խինդք , ցաւքս անվերջ .

Վասրն քո կրրել ցանկամ ,

Այլ ի կրրիցրն գալ՝ սարտնում .

Պատրաստ ի կոչ , ի գործ տարտամ ,

Կարծեմ զիմ խաջն յոյժ ապառում :

Աւաղիկ տէր վիշաք սրբախա ,

Զորոց գիտես ըզյափ եւ թիւ .
 Չեն ինչ սոքին առ իմ պարտիս ,
 Եւ տակաւին սոսկամ ահիւ :
 Տրամութեան պաափն ամբոխք
 Եւ ծանրագոյն ցաւք յաջորդին .
 Փոխեն զիրար վիշաք անխօփօխք ,
 Սակայն ո՛վ տէր , կամք քո լիցին :
 Յորժամ զուրկ ի գրբգալեաց ,
 Իցէ թափուր սիրտս ի յուսոյ ,
 Եւ բարձցի դիւր ըսփօփանաց .
 Տէր եղիցին եւ անդ կամք քո :
 Ի նուազել հիւթոյ սրբախ
 Մինչ այցելուք իւր չերեւին ,
 Եւ վէրք բացցեն ըզհին ըսպիս ,
 Աստուած գրթած , կամք քո լիցին :
 Բուռն են կիրք , ծանր է այս ժամ .
 Դառն է բաժակս , խաչս ահագին .
 Դիմեմ գողմամբ , սիրով բառնամ . . .
 Տէր , զինչ կամիս՝ կամք քո լիցին :

ՍԻՐԵՑԻՑ ԶՔԵԶ

ՏԷՐ ԶՕՐՈՒԹԻՒՆ ԻՄ

Սիրեցնի ըզքեզ Աստուած ,
 Ըզքեզ Աստուած իմ սիրեցնի .
 Որ չեւ իմ լեալ արարեր այց , .
 Քեզ մինչեւ եմս այց արարից :

Սիրեցնի ըզքեզ խապառ
 Որ զիս սիրեալ եւ սիրես միշտ .
 Եւ յիշեցնի ըզսէրդ անձառ
 Յուրախութեան իմ եւ ի վիշտ :

Սիրեցնի ըզքեզ իմ Տէր
 Վառեալ ի հուրդ ամենակէզ .
 Յորչափ ըզգայ սիրտս այս ըզսէր
 Ճենձերեսցի անդու ի քեզ :

Հաստատեալ է սիրտս ի սէր ,
 Խընդրէ զհաստիչն իւր եւ զհանգիստ .
 Թէ մոռասցի երբեք սա զսէր .

Լոյս իւր խաւար , կեանքն իցէ խիստ .

Զինչ յերկրի կայ իմ բաժին
 Զերժ յաղիտիցն իւր ասպառում .
 Կամ զինչ յերկինս իմ յոյս յեանն
 Թէ ոչ Աստուած սէրդ անսպասում :

Եռահրաշք աստուածութեան
 Սէր միայն կեանք եւ ժամանակ .
 Յաւիտենից ի յաւիտեան
 Սիրով բաւես միեղինակ .

Թաժաւեալ սրակիս սիրով
 Եւ անհաղք գան յերեւոյթ .
 Հայիս ասորժ աչացդ հըրով
 Շինչեն տարերք կարծրաբընոյթ .
 Արձակես ի քէն այեր ,
 Հողւով լընու ձուլածն երկրի .
 Սըփուես ի սիրան ըզսուրք քո սէր
 Եւ մարդ հասաչին հաւասարի :
 Արարած եւ ես եմ խուն ,
 Այլ իմանամ զԱստուածդ համբուն .
 Փոքու սըրտիւս յալիս անհուն
 Թեւեմ թըռչիմ ի սէրն ի բուն :
 Զամենայն ես քեւ ունիմ ,
 Եւ զըղձալիս՝ ի քէն յուսամ .
 Եւ զոր չանկան իսկ ի սիրա իմ
 Դու խոստանաս յանսուտ սրտոգամ :
 Աւաջի քո զիս եղեր ,
 Եւ հանապաղ խոկաս յոգիս .
 Աչք քո անդու հեղուն յիս սէր .
 Աստուած , կասեալ ես դու նոք սըրտիս :
 Ո՛վ կապանք հրաշահիւսակ ,
 Զոր ոչ ածել կարեն բըռունք ,
 Ոչ լուծանել սուր եւ կըրակ ,
 Ոչ դէմ ունել դոռ զօրութիւնք :
 Բաւահան ես ինձ դու Տէր ,
 Ոչ այլ ինդրեմ ոչ այլ ցանկամ .
 Ի քէն եւ անդր ոչ կամիմ սէր .
 Քեւ եւ ըզքեւ փարեալ միշտ կամ :
 Սիրելիք այլ մի նձ իցեն .
 Մի է եւեթ իմ սիրելին .

Սիրտք մաքուրք շուրջ ըզմեօք կայցեն ,
 Այլ մի զխորան քո Տէր կայցին :
 Զամենայն կամիս Աստուած ,
 Աստուած , ըզքեզ քան զամենայն •
 Թէպէտ կեցից թէպէտ մեռայց՝
 Ես սիրեցից ըզքեզ միայն :

ՀՈԳԻ ԵՒ ՍԻՐՏ

ՀԱՄԱԶՍՅՆՔ Ի ԳՈՂԳՈԹԱ

- Հ. Ա՛նձըն ցաւած, յո՛վ դարձցիս հոգւոյս Ի ՎԵՐ . . .
 Ս. Ի ՎԵՐ :
- Հ. Ե՛կ ով սիրա, Եկ ի Գողգոթ կալ միա՛յԵՄ . . .
 Ս. ԿԵՄ :
- Հ. Ե՛կ երթիցուք առ Յիսուս լըսել պատԳԵՄ . . .
 Ս. ԳԵՄ :
- Հ. Որ ի խաչին վասն իմ զսիրան իւր աղԵ՛ԿԷՁ,
 Ս. Ե՛ԿԷՁ :
- Հ. Եւ գթահայեաց յառեալ յիս անառւսա աՍԵՐ . . .
 Ս. ՍԵՐ :
- Հ. Իցէ՞ ինչ շատ տալ ըզսէր որ կայ յոգւՈՁ . . .
 Ս. ՈՁ :
- Հ. Եթէ ձօնեալ զանձն իմ տայ՞ ՈՂՁԱՄԲ ԱՌՆԱՅ . . .
 Ս. ՈՂՁ ԱՄԲԱՌՆԱՅ :
- Հ. Եւ առ սիրան իւր՝ որ առ իմըս տասԱՆԻ . . .
 Ս. ՏԱՆԻ :
- Հ. Օ՛ն հանգիցուք ի պարզուած այդըմ՝ փԱՅՏԻ . . .
 Ս. ԱՅՏԻ :
- Հ. Քանզի Յիսուս զիս հանգոյն բարե՛ԿԵՄԻ ,
 Ս. ԿԵՄԻ :
- Հ. Ձի զմեղսառիթ վերս անդէն փեռե՛ԿԵՏԻՑ ,
 Ս. ԿԵՏԻՑ :
- Հ. Եւ թողից զանձն ի գրբկացն իւր պարԱԻԱՆԴ՝
 Ս. ԱԻԱՆԴ :

Հ. Դեղ թաղճանաց եւ զղղճման զրախց պատրԱՍՏ .

Ս .

ԱՍՏ :

Հ. Եւ արասցէ ինձ Յիսուս յորժամ մեռԱՅՑ ,

Ս .

ԱՅՑ :

Հ. Հանգստ ու՛ սիրտ ըզփրկչին մեռցուք ըզմԱՀ .

Ս .

ԱՀ :

Հ. Եւ ընդ նրմին կեցցուք կեանս երանԱԻԿՏ .

Ս .

ՅԱԻԿՏ :

Հ. Աւասիկ եմ Տէր , զհանգստ ԳՅԱՄԻ ՍԵՐ ,

Ս .

ԳՅԱՄ Ի ՍԵՐ :

1844

ԽՕՍԳ ԸՆԴ ԱՍՏՈՒԾՈՅ

ՏՆՕՐԻՆԱԿԱՆՔ

ՔՐԻՍՏՈՍԻ ՕՍԹՈՒՍԻ

ԿՆՏՆԵՐԻ ԿԵՐԱՐԱՍԻՆԱՆ

ՏՆՕՐԻՆԱԿԱՆՔ

Երևանի քաղաքի հայոց
Սուրբ Երեմիայի անվան
հայկազգային համալսարանի
Ազգային պատմության և հնագիտության
գիտությունների թեմատիկ
Օրինակի համալսարանի
Առաջին աստիճանի
Վերջին համալսարանի
Միջին համալսարանի
Իրավաբանական ֆակուլտետի
Իրավաբանական ֆակուլտետի
Մեթոդական կազմակերպության
Մեթոդական կազմակերպության
Մեթոդական կազմակերպության
Մեթոդական կազմակերպության
Մեթոդական կազմակերպության



Տ Ն Օ Ր Ի Ն Ա Կ Ա Ն Ք



Ի ՄՍՈՒՐՆ ՅԻՍՈՒՍԻ

Ի ԳԻՇԵՐԻ ԶՐԱԳԱԼՈՒՑԻՆ

Ո՛հ Տէր, ընդէր տըւաւ ինձ
Սիրտ ապերախտ քան պըղինձ՝
Որ ճօճելով յօդս ի թունդ
Հնչէ զանձառ քո ծընունդ,
Քաղցրածաւալ ի զօղանջ
Սիրոյ հատեալ սուրբ ճաճանջ,
Ըզպար զուարթնոց ի յերկնից՝
Յերկրէ կոչէ զսիրտս անբիծ
Առ տենչալին այն մըտուր,
Քո՛ եւ հոգւոց խանձարուր •
Մինչ ես ծառայս ուխտադրուժ
Ի քուն շըրջեմ՝ զայս անժոյժ :
Մի մեղս ինձ • հեղգ իմ Աստուած,
Մի գրեք զայս կիրս ամօթխած •
Երդ մնեցուցեալ զքեզ յօգիդ,
Յաչքդ աղու, յայտ գեուաթիթիթ,

Յանմեղ ձեռացրդ կարկառ
 Հողեխօսիկդ ի բարբառ ,
 Եւ մանաւանդ յարտասուս
 Յայսմ հեռէ յիմ միակ յոյս :
 Գիտես Տէր , իղձ ոչ նընջէ ,
 Վըկայ սլըղինձն որ հնչէ .
 Այլ մոռացօնք թէ ունի ,
 Թէ քուն յինէն զիս տանի ,
 Դու ինձ այցել մ' առներ զանց ,
 Որ վասն իմ դաս ի բարձանց .
 Չօնեմ փրկչիդ եկելոյ
 Զերախայրիս իմ հողւոյ ,
 Զհաւատս , ըզյոյս եւ ըզսէր ,
 Կիսամանեայ խուն նըւէր ,
 Զոր եւ խոնարհ արգադիր՝
 Սիրս ի վեր աչք ի յերկիր
 Երկրպագեալ՝ ոտիցդ հուս
 Դընեմ սրբութեւ ալէճուփ :
 Եւ դու իմ յոյս աներկբայ ,
 Մայր կենաց , առ զայն յընծայ
 Մատո որդւոյդ համբուրիւ
 Մինչեւ ծագէ զուարթըն տիւ ,
 Որ Յիսուսիս լիցի վկայ
 Թէ սպասեակ սիրան արթուն կայ :

Ի ԾՆՈՒՆԴ ՅԻՍՈՒՍԻ

ՊԱՐԵՐԳՈՒԹԻՒՆ ՀՈՎՈՒՍՑ



ՀՈՎԻ ԾԵՐ

Խաղաղահաճն լուռ գիշեր,
 Որ ընդ աչաց սիրտս ի վեր
 Ձրդես ի վայր հրաշագործ,
 Վայր Աստուծոյ հարց մերոյ .
 Ոսկեակ աստեղք քո մաքուր
 Թէպէտ անշունչք թէպէտ լուռ,
 Կամարաձեւ յերկնից լար
 Զինչ մեզ հրնչեն անդադար .
 Եւ զինչ հեղիկ ամսրավար
 Քաղցրածաւալ ցօղոյս շար
 Ի թերթ ծաղկանց մեղրահոս .
 Բայց զԱստուծոյ մերոյ շնորհս :
 Զով այլ երգէ գիշերի
 Երաժրչտակն անտառի,
 Թէ ոչ ըզքեզ՝ Աստուած մեր,
 Որ ըզհանուրս քեւ լըցեր .
 Եւ զոյր անուն խորք խորոց
 Այս հեղեղաց փրփրեւոց
 Գանչեն բըլբոց եւ հովտաց
 Ի կարկաջանս սահանաց :

Ըզքեղ օրհնէ Տէր համայն .
 Ըզքեղ օրհնեմք միաձայն
 Եւ մէք հովիւքըս խոնարհ ,
 Ըզքեղ Աստուած բարերար :

ՈՄՆ Ի ՀՈՎՈՒԱՅ

Սեաւ գիշերոյս վարագոյր
 Յանկարծ փոխի յոսկեթոյր .
 Յայն ինչ լուսնին երկնաչու
 Գիւ յԱհերմոն գալ բարձու ,
 Զինչ այս փայլումն ընդ այեր ,
 Գեր քան ըզտիւ լուսայեռ :

ԱՅԼ ՀՈՎԻԻ

Ահա զուարթուն երկնային
 Դիտեմ յալիսն օդային .
 Հուշանափայլ ի թեւս իւր
 Յեռեալ աստեղս ոսկեթոյր ,
 Եւ Ենգադեան վարդենիս
 Ի ճակատուն հոպոսլիս : . . .
 Այ , մեռանիմք ո՛հ հրեշտակ ,
 Զինչ մեզ յերկնից հրովարտակ :

ՀՐԵՇՏԱԿ

Խաղաղութիւն ձեզ հովիւք ,
 Մի զանգիտէք մի խռովիւք .
 Բերեալ գամ՝ ձեզ աւեախս
 Մե՛ծ քան զամէն աւեախս .

Զի տէր՝ Աստուածն յաւիտեանց
 Տէր՝ արարեալ զերկնիւք զանց՝
 Յիւրոց փառաց տարազեմ
 Պանդրխտի յարկ ձեր նըսեմ :
 Որում ձեր հարք սպասէին
 Հաս Մեսիայն կուսածին •
 Յանբան հօտից ի մարիդ՝
 Գըտջիք զԱստուած ճշմարիտ ,
 Իբրեւ մանուկ ապիկար
 Եկեալ ընդ յարդ եւ ընդ խար :

ՀՈՎԻԻ

Ա՛ ա՛ , քանի՛ երազունք
 Թափին յերկնից սուրբ զուարթունք •
 Լուսափետուր սաւառնին
 Թեւապարեալք առ մարին •
 Ո՛՛ , քանի՛ քաղցր եղանակ
 Յոր հընչին վայրքս հասարակ :

ԶՈՒԱՐԹՈՒՆՔ

Փառք ի բարձունս Աստուծոյ
 Յերկնից յերկիր բնակելոյ ,
 Փառք Անմահին ի բարձունս
 Որ ի խոնարհ արկ զաչկունս •
 Յերկիր համայն հաշտութիւն
 Սփռեսցի նդ ըյս արեւուն •
 Եւ հաճութեան ի մարդիկ
 Ծաւալեսցի սիւղ քաղցրիկ •

Խաղաղութեամբ երկնաշուք
Նորոգեցին մահացուք :

ՀՈՎԻԻ

Մատիցուք անդր , ծն , ընկերք ,
Ուր հրեշտակացս են սպարերդք •
Այլ մեծապքանչ յայս հանդէս՝
Անձին իշխան չեմ այլ ես •
Առ սէր՝ սիրով լեալ սրաթեւ ,
Եւ գողան բարձք իմ թեթեւ •
Ճրպնին շրթունք յանխորձ բան ,
Եւ ամաչեն ապարան •
Արբեալ հրաշիւք զարմանայ
Երկրորդագեմ քեզ Աստուած :

ՀՈՎՈՒԵԱԿ

Ես մանկիկ որբ եւ անմայր
Ի աաճարին սընեալ վայր ,
Ըզտեսողին լուայ ձայն
Որ ի Դաւթի քաղաքն յայն ,
Եթէ դոյ սէր յայանապէս
Ի հուրեղէն ասպարէս •
Գետասէտեալ յաջ եւ ձախ
Բոց ընթանայ երկրածախ •
Իսկ արդ ո՛ւր բոցքն եւ շանթիք •
Ասացէք ո՛ ծերունիք :

ՀՈՎԻԻ ԾԵՐ

Աստուած՝ բնակեալն ի հուր ու ի լոյս գերազանց,
 Այ՛ս ան ինքն է ահա Աստուածն յաւիտեանց .
 Այլ հիասրաշ բըբացըն բոց մեծասասա՛
 Յարտասուաղեղն ի կոնք շիջեալ թըւի ասա .
 Եւ յարուցեալ սիրոյն հողմով հեզութեան
 Վարէ զալիս ըստ բընաւորն իւր սահման :
 Որ ամենայնց որպէս ծովուն՝ չափ գըծեաց
 Թէ մի վազէն ընդ այս խուժանք քոց ալեաց ,
 Կովին չափով պարունակեալ եւ զինքն արդ
 Փրլոյղ ըզթուամբ սիրոյ , զամէնն արար հարթ :
 Չայն՝ որ զաշխարհ կոչեաց ի խուլ յոչընչէն ,
 Արդ լըռութեամբ նորակերակ զայն անդէն :
 Այ՛ս Աստուած գայ եւ եկեալ իսկ է ասա ,
 Եւ ոչ շարժի երկնից ահեղ առադաստ .
 Ոչ լեռանացայտք սարսեն կոհակք ալեձեւ
 Ոչ հուր ընդ ջուր մարտ յարդարէ յօդ թեթեւ .
 Այլ իբրեւ սիւգ առաւօտու հանդարտիկ
 Հաղիւ շարժեալ ըզձօձաւորըն վարդիկ ,
 Այնպէս իջեալ սաւառնելով ընդ երկիր
 Ըզմահացուաց թօթափէ ծանրը թըմբիր :
 Ոչ որտայ տըւող ձայնից եւ շանթի ,
 Այլ խելամուտ ի ներքս ի սիրտ անդր ազգի .
 Յաչաց լուսոյն՝ ծածկի արեւ քողաղգամ ,
 Եւ պարզութիւնս այս՝ քարոզէ սա զԱստուած :

ԱՅԼ ՈՒՔ

Մանուկ զուարթուն , դու այն ես տէր յաւիտեանց
 Որ սարապրեաց ըզտիեզերս լայնալիր
 Մինչ ի վըհէն հանէր զերկին եւ զերկիր ,
 Որ զայս լուսին կախեաց լապտեր մըթութեանց •
 Դու այն ես տէր , որ ի Քորեք վեհապանձ
 Բոցատերեւ ի թուսին իջեր դաշնագիր •
 Որ յաստեղաց քար ի Յաղեկ տեղայիր ,
 Որ վէմն ի ջուրց կառուցեր , ջուրս ի քարանց •
 Դու այն ես տէր որ ի բազուկ շանթակէզ
 Ի փող հըրոյ ետուր օրէնս Յակովբայ ,
 Դու՛ որ հաստեր եւ ըզխաշինքս ետուր մեզ :
 Այո , Աստուած ըզքեզ ասեն բիբք հրաշեայ ,
 Գիրկ սիրալիր բազկացդ Աստուած ասէ զքեզ •
 Եւ սիրա՛ ձրգող սրբախցս՝ Աստուած ինքն է դա :

ՀՈՎԻԻ

Ձինչ դիմակալ ահեղ ձեռինն Աստուծոյ
 Պատգամ ի ձէնջ խնդրեմ երկինք , գոգէք դուք •
 Աստուած՝ հանուրց , եւ սէր յաղթող Աստուծոյ
 Եկայք հովիւք ըզսէր փրկչին երգեսցուք :
 Աստին սիրոյ էջ ի ծոցոյն հայրենի ,
 Ի մտուր հօտից ղօղեալ ի խարձ ողորմուկ ,
 Փափուկ իրանն ի շունչ գրաստուց ջերանի •
 Եկայք հովիւք ըզսէր փրկչին երգեսցուք :
 Յորոյ յաչաց շանթ հատանէր ի ղամբար՝
 Ը իթ շիթ ծորին մարգարտաախալ արտասուք •

Սիրա մահացուի նոյ այս անըզգայ՝ խիստ է քար
 Եկայք հովիւք, ըզսէր փրկչին երգեսցուք :

ՀՈՎԻԻ ԾԵՐ

Այսօր լինուն պատգամք տեսչաց
 Խաղաղութիւն այժմիկ հրնչեաց .
 Մըկունդ ու ասպար զէնք ռխակալ
 Սուր եւ նիզակ արկցին ի հալ .
 Երկաթ քինուն կրօի մանդաղ
 Ելանէ մարդ ի հունձ խաղաղ .
 Զի բոցաշունչ սալասրմբակ
 Ոչ այլ լըսէ խաղմի նըւադ ,
 Եզին ճըզանց բաժանակից
 Համբուրէ զսէզ յեզըր խաղից :
 Ի մարդ յուռթի անկեալ ընդ ջոկ
 Գանն եւ առիւծ քըճնին ամոք .
 Գայլ ընդ մարտոյ համբոյր ընկեր
 Ի մի ճարակ խայտայ ի բէր
 Եւ օձ ճապուկ ի մէջ ծաղկանց
 Առանց մեղաց բանայ իւր անց .
 Ի ծակն իժից մանուկ մատաղ
 Մատն արկանէ դիմօք ծիծաղ .
 Համայն հաստուածք ընկերահաշտ
 Օրհնեն զհաստիչըն սիրապաշտ .
 Որ նորոգէն ըզբընութիւն
 Ըրնչեալ հանուրց խաղաղութիւն :
 Ընդ մեզ Աստուած , տուք ձայն զըւարթ
 Բողորեցէք շուշանս ընդ վարդ ,

Հովուականացս ամէք դրասանդ ,
 Ձի այս են մուտք յաւերժականք .
 Սէրն երկնաւոր անդ է բազմած .
 Իմա՛ երկինք զի 'նդ մեզ Աստուած :

ԱՅԼ ՀՈՎԻԻ

Աստուած ասէ աչքն ըզնա

Որ յարտասուաց լըճանաց ,
 Եւ ի բրբէն նազենի
 Սիրտ իմ ի խոր հարկանի .

Աստուած ասէ եւ ժրպիտ՝

Որ ի շըրթանցրն փըթիթ ,
 Յորմէ լուռ իմն աւետիս
 Ասէ փրկել զիմ հոգիս .

Աստուած ասեն եւ բազուկք

Որ աղաւնեաց սէս փափուկք
 Թըրթըռալով կարկառին
 Գիրկս արկանել չըւառին .

Աստուած ասէ եւ սուրբ ծոց

Որ տարածեալ ցուրտ հոգւոց
 Ոչինչ թըւի զգալ մորմոք
 Ներքին սիրոյն ի բորբոք .

Աստուած համայն ինչ ըզքեզ

Աստ քարոզէ սիրակէզ .
 Ես զԱստուծոյդ իմ խոնարհ՝
 Համբուրեմ սուրբ դարշասար :

ՄԻԻՍ ԵՒՍ ՀՈՎԻԻ

Ո՛չ աջդ այդ ցըրուեաց
 Ըզբոյլս աստեղաց
 Ընդ անհունն եթեր
 Սփռիել ըզգիշեր •
 Ո՛չ դա զծիրանի
 Արկանէ երկնի՝
 Յորժամ յարեւելս
 Տիւ գործէ վերելս •
 Ո՛չ ձեռքդ այդ ետուն
 Հոյլ հօտից գզաթուն ,
 Եւ հասակ յաղթիու
 Մայրից Լիբանու •
 Ո՛չ դա զազգ մարդկան
 Պըճ՛նէ գեղազան •
 Չիցէ՞ դա նեցուկ
 Արքայից եւ շուք :
 Զն՝ զփառս ընդհանուր
 Հարեալ առաթուր՝
 Ի փարախս անհարթ
 Ի խալւս հանդէս արդ ,
 Մեծ գըրեալ յարկ զայս
 Քան զարքենին կայս :
 Ո՛հ , քան զամէն վայր
 Ընարէ զսիրա խոնարհ :

ՈՄՆ Ի ՊԱՐՈՒԷՆ

Ինձ լաւ իցէ բիւր անգամ
 Ընդ աղբ դաւ յայս սուրբ մըսուր ,
 Քան յորանալ հեշտակամ
 Յարբուճական փառքս զուր .
 Եւ առաւել մեծ գրբեմ
 Երկրրպագու քեզ լինել
 Մանկիկդ Աստուած հեզաճեմ
 Քան աշխարհաց սանձ դընել :

ՀՈՎՈՒԵԱԿ

Ես մանկիկ անաւագ
 Յարուցեալ ի խոր այգ՝
 Ճեմ առից ի մարմանդ
 Ի քո սէր ջերմնեռանդ .
 Յայգածնին ի զով շունչ
 Հիւսեցից նոր քեզ փունջ
 Իմ խարտեաչ գիտակօք
 Վայելուչ երանգօք ,
 Ըզճաղկունս գեղեցիկ
 Վարդ , շուշան եւ յամիկ ,
 Եւ արկից երփնեւրանդ
 Ըզմըսրաւ քով դրասանդ :
 Թէ ելից զհեա գառանց
 Վազվազել ի լերանց ,

Մի այլ ինչ յիմ սրբինդ
 Լըւիջիք դուք երկինք ,
 Բայց զհաստչին ձեր հանդէս
 Որ հիգացս եկն ի տես :
 Ըղբեղ ահր իմ Յիսուս
 Երգեցից մեծայոյս
 Զամենայն ես աւուրս
 Ի հովիտս եւ բլլուրս •
 Եւ աղբերք եւ ծործորք
 Եւ քարայրք եւ վիհք խորք
 Եւ լերինք վիմահանք
 Հնչեցեն զարձագանդք
 Տէր , զանուան քո սրբոյ
 Յառաւօտ ւ երեկոյ ,
 Ի հրճուանս եւ ի վիշտ
 Երգեցից ըղբեղ միշտ :

ՀՈՎԻԻ ԾԵՐ

Հանգրրուանիս աստ ի ծայր
 Ես ծերունիս սրահապան
 Կանգնեալ ի սեամ սրբբավայր
 Կարդամ հրաւէր հանրական •
 Ո՛վ տաժանեալ դուք անցորդք
 Ի մըսուր այսրր մատիք ,
 Մի աւետեացս անհաղորդք
 Եւ ի կենաց զըրկիջիք •
 Եկայք ամօք ծանրակիր
 Ծերունիք դուք , առ տէր ձեր ,

Նորափետուր լուսակիր
 Նոր նորոգիլ յանմահ սէր :
 Ի նոյն եւ դուք պատանիք
 Չեռն ըզլանջօք մատերուք ,
 Աստ ի սէր սուրբ վառեսջիք
 Մերժեալ ըզկիրս վաղանցուկ .
 Մատիք եւ դուք մանկրտեակք
 Երկիր պագէք առ մարաւ ,
 Իբր հեղաձայն աղաւնեակք
 Աւետելով Տէր ծընաւ :

ՊԱՐՆ

Ծընաւ մեզ տէր , տէր Յիսուս ,
 Ծընաւ Աստուածն յաւիտեանց .
 Չօն բերցուք սիրարս մաքուրս ,
 Խոնարհ հոգիս հեզ անձանց .
 Ընդ հրեշտակաց երգեսցուք՝
 Ըզհաշտութեանն աւետիս ,
 Եւ ըզՅիսուս օրհնեսցուք
 Չեկեալ փրկողն աշխարհիս :
 Օրհնեալ եկեալ Մեսիս
 Ար ի կուսէ ծընաւ աստ ,
 Եբաց որդւոցս Ազամայ
 Չեզեմականն առադաստ :
 Մանուկ ծընաւ մեզ Աստուած ,
 Երկինք՝ ըզնա օրհնեցէք ,
 Արդի տըւաւ մեզ Աստուած ,
 Աշխարհք՝ ըզնա օրհնեցէք .

Օրհնեալ եկեալ Մեսիա

Որ ի հուսէն ծընար աստ,

Բացեր որդւոցս Ադամայ

Զեղեմահանն առադաստ :

1840—1843

Ի ՅԱՅՏՆՈՒԹԻՒՆ ՏԵԱՌՆ

Ա.

Տըխրատեսակ գիշերոյ թագ եւ մահիկ
 Ոսկեալառուն վարսամ, զի կաս բացխրիիկ •
 Որպէս զհրեշտակն անքուն խնամող Յակովբայ
 Յաշտէ հրաճօճ հըսկեալ ի ծիրս աստեղեայ •
 Կոր արեւու դու փայլածու լուսահեր,
 Կոր արքայի դու սուրհանգակ խընդարեր •
 Յաստեղաղարդն հովիտ գընասս ուհահորդ,
 Արեւելից մոգուցրս մեզ առաջնորդ :
 Ըզմէ նդ ամպով լուսատեսիլդ ծածկիս
 Հուպ ի պարխապս Իսրայելի յանուանիս :

Բ.

Ձի տագնապիս Սիոնի դուստրր Սաղէմ
 Ըզմեր կազմած վրիժնց կարծես զէն դրժխեմ •
 Տեսանողիդ ձայնի դու լեր դիւրանսաց (տեաց •
 Մերկեա զթախիճդ այդ, պարզեա՛ զքօղ աւե
 Խաղաղութիւն յաշտարակացդ հընչեսցի,
 Յաստեղդ ի շող՝ ահ եւ կասկած հերքեսցի :
 Մէք ի լերանց հեռաւորաց ու ի ծովէն
 Ի լուր փողոյդ ածաք ըզգարդ եւ ըզգէն •
 Ոչ ի գուպար եւ ի հարուած կապուտակ
 Յարիւն գունեղ ըզհորդանու հաշտ կուտակ •

Այլ ըզտուսերս ի հուր կրուել գերանդեակ ,
 Ըզգոու բաղուկ ի գործ մարդէլ յագարակ :
 Բարձր ի գըլուխ պանծա՛ Սինն եւ բերկրեաց .
 Ահա դիմեալ առ քեզ իշխանք աշխարհաց՝
 Խոսպան արախց քոց կացցեն ժիր մաճակալ .
 Ի Կարմեղայ մարմանդ բանակըս հարեալ՝
 Արածեսցուք մէք հօտս ի խաղ սուրբ առուաց
 Զկղէզն առեալ փոխան օսկեակ մականաց :

Գ.

Բա՛րէ ընկերք , զն՛նչ այս մախանք հերովդեայ ,
 Զն՛նչ անժրպիտս այս դըզըրդուսն ի Յուդայ .
 Արքայ փրկիչ եկեալ նոցին այցելու ,
 Եւ չըկայթէ ոք ի նրւագ սարերգու .
 Դաւիթ գոչէ իւրոյ շինին՝ թէ արքայ
 Քեզ յիմ տանէ սիրայորդոր եկեալ գայ .
 Առէք մանկունք զիմ բախեցէք տաննաղին ,
 Որդիք հընձոց , առք թինդս ի կող Կարմեղին :
 Ըզմէ՛ արխուր նընջէք հովիտք Եփրաթայ ,
 Ըզմէ՛ զխընդիս նընջեցուցեալ զաւետչեայ .
 Միթէ ի զո՛ւր Յովսափատայն յասպարէզ
 Բարբառք տեսչաց հողմոյ ետուն ըզքարտէզ :
 Այլ քա՛ւ ի մէնջ ընդ քո նըշանն Անմահ տէր՝
 Իբր ընդ կեղծիս թերահաւատ յողջ յողջէլ ,
 Ահա նա նո՛գ հետ խոնարհելոյ արեւուն
 Սրացեալ դիմէ հուր քարշէլով զիւր արտուն .
 Եւ ճախր առեալ ի հովուավանս անդ մօտի
 Հանդարակելով որպէս նաւ հուսլ հանդըստի :

Գ

Կառեալ յայեր վարսամին

Յուշանէ զմուտ սուրբ այրին •
 Ժայռք եւ լերինք , ձորք եւ դաշտ
 Եւ հայրենիս անասաւա ,
 Եւ հերովդեայ սէդ դագարք
 Ծըփեալ ծովու են տիպարք •
 Նաւահանգիստ այս մըսուր
 Ուր լոկ հընչէ հով համբոյր •
 Եւ վարսամն այս լուտարձակ
 Լապտերակիր աշտարակ :
 Եկայք ձրգեմք ըղխարիսիս
 Իբրեւ ճարտար նաւուղիդ •
 Հանել ըզբերս մեր արդոյ
 Մեզ կոչողին Աստուծոյ :
 Ո՛վ ծերունիդ հիաղգեայ
 Եւ դու կուսան ամօթլեամ ,
 Ձեր որդեկիդ՝ մեր փրկչին՝
 Արքայքս համբոյր տամք ոտին :

Ե

Մի՛ զիս ընկերք , մի՛ այլ կոչէք զիս արքայ ,
 Ձի՛ ես զիմ քայս , մահան եւ ձորձ բեհեզեայ
 Թագաւորայ Թագաւորիս նըւէր տամ ,
 Եւ ջերմն համբոյր առ գարշտպար անթաւամ :

Յորմէ սարսեն երկիր , անդունդք եւ եթեր
 Մանկան ի ձեւ կայ ի մըսրի հըղօր տէր •
 Ես զն՝ գոռող ի ծիղ ջախջախ սընապարծ
 Բազմիմ ի գահ , մինչ տէր՝ զերկնից ելթող բարձ :
 Տէր , գրաւական սըրտիւ ընկալ զոսկիս ձօն
 Եւ հաստատեա զիս ի հաւատքս քո զգօն :

9

Ընկալ ի մէնջ տէր ըզքոյնն իսկ ըզտուրս
 Զանուշահոտ կնդրուկս այս խուն եւ զըմուռս •
 Զոր Աստուծոյդ մարգացելոյ վասըն մեր
 Մատուցանեմք՝ ժրտեալ ըզյոյս քո եւ սէր •
 Զոր եւ երթամք ըզհեա աստեղս լուսամիլու
 Քարողէլ աիեզերաց ընդհանուր :

1841

ՅԱՍՏՂՆ ԱՐԵՒԵԼԻՅ

Յէրբ ընդ մըթարս եւ ընդ մութ
 Խարխափես սիրտ յարեւմուտ .

Յէրբ ալէկոծ անկայուն

Զոփաս ի խոչ եւ ի խութ :

Պարզեա զաչացդ արգել բիժ ,

Յէրբ կաս կարկամ ու երկրապիշ .

Դէտ ակն ի վեր յարեւելս

Տես ըզվարսամ գեղանիշ .

Ոչ ասող է նա լուսալիր ,

Ոչ զըւարթուն յարաթիւ .

Այլ կայծ հըրոյն աստուածեան

Զոր կենարարն արկ յերկիր .

Անգէզ անմուտ անըստուեր

Ճեմեալ ճօճի նա յայեր .

Նորոց կենաց նոր արեւ

Զոր քեզ ընդ իւր ծագէ տէր .

Ոչ մաշի , լի է յուսով .

Ոչ սպողի , վառ է սիրով .

Նա փրկականն է հաւատք

Ղեակ կենցաղոյս համածով :

Օ՛ն , թէ շընչէ խիտ մըրբիկ ,

Թէ նոք քեւ գոռան խեռ ալիք ,

Յայս յառեւջիր ի վարսամ

Հասցես ի վայրն երջանիկ :

Իբր ըզմոգուցրն խաւժան

Ե՛րթ յաստեղէդ անբաժան ,

Մինչև հասցես աներկմիտ

Յանխառնի յանբոյլմն ի կայան :

1844

Ի ՅԻՍՈՒՍ

ԵՒ Ի ՄԱՆԿՈՒՆՍ ԲԵԹՂԵՀԷՄԻ

Օրհնեալ է ծնունդ քո Տէր՝ Յիսուս .
 Հոաքէլ մայր , մի եւս յարտասուս :
 Երկնայաղթ կուսի ծոց զԱստուած տանի .
 Յաւիտենականն ի մըսրի ծնանի .
 Մըշտահրաշ սիրոյն գերագոյն հանդէս :
 Իսկ դու նոյն խառվեալ մոլիս հերովդէս .
 Յուշ քեզ բրնաւոր , սա հանուրց է տէր
 Ծիլ ծրդեօքն ունի զանդուճիկս եւ զեթեր .
 Շունչ եւ սաստ սրբախոյ՛ նորա է պարգեւ .
 Գու զո՛ր շուրջ կարգես արբանեակս ըզքեւ : —
 « Ի Բեթղէմ արքայ ծնաւ ինձ հախառակ ,
 Օն ա՛նդր ըզմանկախն տուք սրբոյ ճարակ ,
 Ըզմանկախն ամէն յերկեմենից վայր » :
 Եւ հրամանն ահեղ ի նախճիր փութայր .
 Գունդ գազանադէմ զաւանն էառ շուրջ ,
 Փախըստեայքն եղեն դիակոյտ կամուրջ .
 Յարձակեալ զինու ի կեանս նորահաս ,
 Ճակատ յարգարէր ընդ մատաղամարս .
 Լանջք մերկակրտաք կառուցան մարակոյ
 Պատուարք պարառիկք սիրանունդ սղայոց .
 Պըզպըջեալ ընդ խրամ կաթն առնոյր շըրջան ,
 Սէր ընդ սուր բաղխէր , մեծ էր կռիւ , մեծ ջան :

Հարեալ աչտէ զգիրի ընդ գրրկաբարձիկ
 Ըզմայր առ որդեաւ առնէր ընկեցիկ .
 Եւ մարմինք փափկիկք ի սուսերս դաժանս
 Թաթափին զինչ թերթք վարդից առ շուշանս .
 Եւ կաթն ընդ արեան խառնեալ զուգալէժ
 Սիրոյ ու արտասուեաց յորդէ ուխս յաւեժ .
 Եւ գելեալ կափջի հեղաշունչ հագադ ,
 Կրկոցեալ կափջին աչկունք նորածադ .
 Եւ կարմրիկ հոգի նոց շրթունս մանուշակ՝
 Սլանայ շէշա ի վեր մընչեալ անուշակ ,
 « Օրհնեալ է ծնունդ քո Տէր Յիսուս ,
 Հոաքէլ մայր , մի եւս յարտասուս » :

Ի ՅԻՍՈՒՍ ՊԱՏԱՆԻ

ԿՐԵԼՈՎ ԶԳՈՐԾԻՍ ԶԱՐԶԱՐԱՆՍՅ

Անցանէի նոգ դաշտ լայնանիստ
 Յորում բըլուր մի մենաւոր •
 Եւ յուզէր սիրտ իմ անհանդիստ ,
 Եւ չէրեւէր ոք անտանօր ,
 Բայց ոմն եւեթ յառաջանցիկ •
 Եւ երթայր նա լըռիկ մենիկ :

Թըւէր տեսլեամբն աւարտհասակ
 Առոյգաբարձ եւ գեղանի •
 Անտեթեւեթ եւ աչորսակ
 Յաւերժակեաց մի պատանի •
 Եւ երթայր նա լըռիկ մենիկ ,
 Կոխէր ըզփուշ եւ ըզծաղիկ :

Էր նա զգեցեալ պրճեղնաւոր ,
 Անկար ձորձիկ պարկեշտ հիւսով ,
 Գօտեակ միջաց պարան բոլոր
 Հրեշտակակերպ ամէն ձեւով •
 Եւ երթայր նա լըռիկ մենիկ
 Կոխէր ըզփուշ եւ ըզծաղիկ :

Ճակասն էր պարզ եւ բարձրագիր
 Երեսք կարմիր եւ քրտնահար ,
 Աչքրն ծաւիք եւ լուսալիր
 Եւ ջինջ կայլակք յեղերն ի շար •
 Եւ երթայր նա լըռիկ մենիկ
 Եւ ակնարկէր բըլերն այնմիկ :

Անցեալ գրնայր նա նոգ ձոր հովիտ ,
 Ընդ վարդենիս եւ ընդ գրժնիկ •
 Ընդ խաղս առուաց ականակիտ
 Անցանէր շոյտ ոտամբ բոկիկ •
 Եւ երթայր նա լրօիկ մենիկ
 Կոխէր ըզփուշ եւ ըզծաղիկ :
 Եւ յանցանէն՝ երկիր թընդայր
 Ու արծաթ ալեակըն խոխոջէր ,
 Հոփն եւ հովիտ շըշունջ բառնայր ,
 Մարմանդն ամէն ըզհոտ սրփուէր •
 Եւ նա երթայր լրօիկ մենիկ
 Ու աչքն ի բըլուր անդր ամբարձիկ :
 Եւ ես ընդ նա կրթեալ յապուշ
 Յոտն ի մատին զհետ գրնայի •
 Ու ահա տեսի բեռնակ ի յուս
 Եւ ի ձեռին իւր սակառի •
 Եւ երթայր նա լրօիկ մենիկ
 Եւ սակառեակն յանթանոցիկ :
 Իսկ բարձրագեղ յիւրըն շալակ
 Կոճըղ երկճիւղ բարձեալ անբարշ ,
 Կանգնաւ երկայն քան զիւր հասակ՝
 Իբրեւ զորայ տանէր անգարշ •
 Եւ երթայր նա լրօիկ մենիկ ,
 Եւ յուան ունէր երկճիւղ կոճղիկ :
 Գործի հիւսան ես յայն սակառ
 Եւ սայրասուր տեսի բեւեռ •
 Եւ կոճղիկն էր խաչ սեւափառ ,
 Եւ նա սիրով բարձեալ բերէր •
 Եւ երթայր նա լրօիկ մենիկ
 Աջն ըզխաչիւն ու աչքն ի բըլրիկ :

Յայս վայր տեսեալ ու ոչ ժուժացի ,
 Ետու ոտիցս , ու անցի յառաջ .
 Պատանեանկ , ո՛վ ես դու , հարցի .
 Հիմ եւ ո՛ւր զայդքան տանիս խաչ : —
 Գարձաւ ետ աչս յիս հանգարաիկ . . .
 Եւ անց գընաց լըռիկ մենիկ :
 Ո՛հ , ծանեայ զի նքն խակ Յիսուս էր ,
 Որ ի հոգւոյս իմ փրկութիւն՝
 Ի կառափման բլուրըն գիմէր
 Կանգնել ըզխաչ , պըրկիլ ի նոյն .
 Եւ երթայր նա լըռիկ ի մահ ,
 Եւ մեռանէր անդ վասն իմ . . . ա՛հ :

ՅԱՅԼԱԿԵՐՊՈՒԹԻՒՆ ՏԵԱՌՆ

Տէր , ոչ ծանեան ըզքեզ մարդիկ անհամբոյր՝
 Մինչ հեղութեան զանձամբդ արկար վարագոյր ,
 Բըբացդ արփիք՝ յոր բոյլք աստեղց բուծանին
 Ակընկորեալք բեւեռեցան ընդ գետին •
 Եւ դու նըթգեհ յերկնից յերկիր սահեցար ,
 Բիւր զօրութիւնս ի խուն ծածկեալ հեղ ախար :
 Տարփից կոհակք յարեան ուժդին հօրն ի ծոց ,
 Արկ ըզնովաւ զաստուածութեան զիւր օթոց ,
 Ի լուսացայտ յունիցն հատեալ ճառագայթ
 Յահերմոնեան հարաւ ի բարձրր դադաթ ,
 Եւ ի Թաբոր՝ քան ի կայանս շափիղայ՝
 Աստուածորդին լուսապարփակ շողջողայ :
 Արպէս խընկոց անուշահոտ քաղցրութիւն
 Յեղեմական դրախտէն բուրեալ ի յայդուն՝
 Եւ զէնն ի տես հրաշակերտիցն ձըգէր ,
 Յոյցս հաճութեան ի նըմանէն ընդունէր •
 Սոյն ի սարէն ընդ օդս յուշիկ ել Յիսուս ,
 Եւ աստուածեան դէմք յայտնեցան իսկալոյս :
 Թողեալ ըզմահ եւ կեանս յայն ժամ քաջադէս
 Կըրկին գուշակք՝ որ բոցադէղն ի Քորէք
 Ի ճեմս անձկաւ ըզնա դիտել տենչային ,
 Արդ բարեբաստք կան յանդիման ի զընին •
 Եւ հայր յամպոյն ձայն արձակէ հաճութեան •
 « Դա իմ սիրուն Արդի , զգորա լուարուք բան » :

Զարթիր Պետրէ, զարթի՛ք ամէն մահացուք •
 Հնազանդ ընդ հօր՝ ընդ սա միայն հաճեսցուք :
 Ոսկեճեղուն տաճարք չեն պերճ եւ պայծառ
 Քան ըզպարկէշտ անձին թաքուն սիրտ խոնարհ •
 Զքստուերամած փարատեսցուք զախաից ամբ,
 Եւ հայր զՈրդին տեսցէ ի մեզ հաշտ ահամբ :

Ի ԿՍՂԱՆԴՍ ՄՍՐՏԻ

Ի՞ր ամօթլեամ զու այդպէս
 Աչք ընդ երկիր բեւեռած ,
 Եւ հիւսք մածեալ ձիւնադէս
 Յաղի վրտակս արտասուաց ,
 Հարեալ ի զող տարապարտ
 Զանխուլ մերձիս , խարտեաչ մարտ :

Ո՞չ զու արփուոյն փեսաւէր
 Ըղբեղմնածին ճառագայթ
 Առ հարսն ածես ոսկեհէր
 Յերկրիս թաքուն առապաստ .
 Ո՞չ քեւ ծաղկունք զանազանք
 Ժրպտին ի բոյր եւ յերանդ :

Աւաղիկ կաս մրտայոյղ
 Կորաքամակ ծանրակիր
 Մըրցեալ ընդ ահ եւ ընդ յոյս .
 Քաջալերեաց էկ մատիր
 Չիք որ ըզքեզ աւաղէ .
 Զինչ զոր բերես , ցոյց աղէ : —

Հապա՛ , եկայք սիրելեակք
 Ելցուք հիւրոյդ ընդ առաջ . . .
 Այլ բա՛րէ , զինչ փուշ մանեակք ,
 Զինչ ահագինդ այդ սեռս խաչ .
 Զինչ են կայլակք կարմրագոյն
 Փոխան վարդից գարնայնոյն :

Թողեալ ըզսերմն ի Թըմբիր ,
 Զչարչարանաց մեռորակ
 Նա ի մըտաց կորդ երկիր
 Գայ սերմանել յիշատակ ,
 Արիւնուող ածել ցող
 Եւ կենսունակ ջեր եւ շող .
 Ըզփայտ մահունն Յիսուսի՝
 Աս իմ բարուց աննըւէր
 Ահիւ բերէ ի յուսի .
 Եւ սրսակին փըշայեա
 Չափէ դճահաան իմ խըթնի
 Եւ արամու թեամբ բաց տանի :
 Ո՛հ , մի , եկ . այդ քո ամօթ
 Իմոց դիմացս է ծածկոյթ
 Խոժոռելոց ընդ Գողգոթ .
 Արդ տուր ըզթաղդ ինձ անքոյթ ,
 Եւ քառանկիւնդ ի բաղին
 Ընկալ ըզսիրտ ցաւադին :

Ի ՅՍ.ՐՈՒԹԻՒՆ ՂԱԶՍ.ՐՈՒ

Հրատարակէք մահու եւ շահապետք սանդարաց ,
 Կափարիչք կենաց՝ արձանք յուսոյ նուաղելոյ ,
 Ողբական ամբօխք եւ վարագոյրք քընարաց ,
 Զայլամայր կուսանք , փողհարք ունկան մեռելոյ ,

Եւ դուք քըւերք կաթողին
 Միջաբեկեալք առ գորով
 Ու ապախտք լուսոյ արեգին ,
 Հիմ՝ աղմըկիք զայդ վիսով :

Հասեալ գայ մտերիմ բարեկամին համակամ ,
 Որ միայն գիտէ ի վեր՝ անձին զընել զանձ՝ • (Ժամ ,
 Ոչ սաստեաց բնութեան մինչ ած զօրհաս տարա-
 ՄԻՂ լուաւ գըթոյ , եւ զարտասուօք չարար զանց •

Զասպարիզօք հընդտասան
 Սրավարեալ զսէրըն խոհուն
 Եհաս հանգոյն փայլական •
 Եւ դղըրդեցան սիւնք մահուն :

Ղազարոս նընջեաց • շատ նընջէ իմ սիրելին •
 ՄԻՂ արթուն է սիրա՝ որ սիրեցաւ եւ սիրեաց •
 Վարագոյրք մահու ոչ ըղնա՝ զձեզ ծածկեցին •
 Արդ բանամ ձայնեմ զարթուցանեմ ի ստուերաց :

Ում զիս սիրէն՝ քուն է մահ •
 Կա ի մահուն կենդանի •
 Ես յարութիւն եմ վրասահ ,
 Որ հաւատայ՝ չմեռանի :

Ո՞ւր հանդէս Ղազ' արդ. ո՞ւր զիմ եղիք սիրելին...
 Ղազարէ՛, Յիսուս հարցանէ զքէն. ո՛հ, դ' ո՞ւր ես :
 Ե՛կ տէր, էկ Յիսուս, տես ո՞ւր նընջէ սիրելին .
 Ա՛հ, մեռեալ է նա, զի եւ դու Տէր արաասուես :...

Արտօսը ածէ յաչս Յիսուս

Զի բացցէ զաչքս Ղազար .

Այլ ո՛հ, քանի՛ արտասուես

հեղցէ նա նգ կեանս իւր խաւար ,

Երբ տեսցէ վաղիւ ըզղարթուցիչն իւր սիրուն
 Որպէս դառն անդօր մատնեալ գայլոց ի ժանիս ,
 Յակներեւ ի մահ վարեալ նշաւակ ի բարձուն ,
 Լի ցաւօք վերօք արձակելով նուազ ոգիս .

Եւ շուրջ եկեալ սրբաբեկ

Օգնել ինչ ոչ զօրիցէ :

Քանի՛ եւ ձեզ անգ քորք հեգք՝

Դառն այս կեանք , մահ՝ քաղցր իցէ :

Ղազարոս մեռեալ բնութեան՝ մեռցի եւ սիրոյս ,
 Իբր եւ ես մեռայց ըզմահ բնութեան՝ այլ ի սէր .
 Արդ ի բաց առէք ըզվէմգ՝ ըզխոչ սիրելւոյս ...
 Թերհաւանս Մարթա՛, յումէ գարշիս , ըզգասա լեր .

Այդպէս սիրես դու զեղ բայր

հռչակելով զհոտ մահու ,

Մինչ Մարիամ բարեաց մայր

Զանմահութեան բոյր առնու :

Հաւատա՛, երկմիտ , եւ տեսցես զփառս Աստուծոյ
 Որք զայրն այն լըցեալ՝ կան նընջողին բարձակից .
 Կափարիչըդ լոկ արգելու զնա ի տեսոյ .

Կոչեցէք զհզօրս , թաւալեցէք զվէմսըդ կից ,

Բացէք ըզյարկըդ մահու .

Պատրաստեցէք ճանապարհ

Բարեկամին սիրարկու՝

Որ չհանդուրժէ այլ յերկար :

« Ղազարէ , ել էկ արտաքս » . . : Ահա յառնէ նա .

Յարութեանն հրաւիր զարհուրեցոյց լոյժ ըզմահ .

Ամենայն հնարիւքն ոչ յաջողեաց սասանայ .

Արգելուլ չբաւէ զողին դիւաց անհուն պահ .

Որպէս կայծակն յամպրոպաց

Հատեալ ընդ խաւս խաւարի

Երագերագ յիւրն խայծ

Հարեալ ի նոյն եւ վառի :

Սիրելին Յիսուս փրչէ զնախ շունչ նոր կենաց .

Եւ շնչէ Ղազար . շարժէ զանդամս իւր առոյգ ,

Եւ հանգոյն թիթղան հերձուլ ճրգնի զխորխորն
մած .

Ըարժէ զոտս եւ զձեռս , վառի աչացրն խարոյկ :

Փութա՛ Մարթա ի բաց առ

Զերիզ եւ զկապ տխրորակ .

Ե՛րթ Մարիամ լոյժ պատան .

Զեղբօրդ գիմաց վարչամակ :

Ո՛վ , քանի՛ սրայծառ եւ լուրջ փայլին այն երեսք .

Համբուրեա՛ սիրով , արբ զանձուկդ յաչս եւ շրթ .
Թուես . . .

Այլ բա՛րէ , ուստի՛ խոնաւ կայլակքն յաչամէջք .

Այն կենաց ցօղէ զոր արտասուեացն արդ Յիսուս .

Արտօսր եւ լոյս իւր աչաց՝

Եղեն մտերմին սպեղանի ,

Եւ շունչն ըզշունչն կոչեաց ,

Զարթոյց զմեռեալ կենդանի :

Ըզմահուն նըշան՝ զպատառոտեալսն սպատանա՛

Յաղթանակ մահու պարզեալ ի դրօշ անամաչ ,

Եւ արկեալ զանձամբ՝ իբր առնաղէն զիւր պար-
ծանս ,

Կենսատուին սիրոյ դիմէ փութով ընդ առաջ ,
Փարեւ զոտիւքն հեղաքայլ՝
Որ խայտալով փութացան
Ի դրանց դժոխոց զհողւոյն փայլ
Դարձուցանել յիւր կայան : . . .

Ո՛վ Յիսուս , անսուտ իմ յարունի , կեանք հողւոյս ,
Ոչ նընջէ սա լոկ , այլ եւ մեռեալ է շնորհաց .
Եւ էր սա երբեմնն սիրելի քեզ ըստ քոյս ,
Արդ ի կիրս ու ի սուգ վարակեալ՝ խուլ է կենաց .
Զարթուցանել փութա՛ Տէր ,
Զի մի փոխի քունս ի մահ .
Լաց , եւ կոչեա զիս ի վեր ,
Յարեա՛յց , անցեալ՝ դ մեղաց պահ :

ՅՕՐ ԲԱՐԵԲԱՆՈՒԹԵԱՆ

Սաստուած՝ որում միայն են փառք ,
 որում հոգիք լրծին ի կառք ,
 որ սլանայ յանասմանս .
 Պարուրելով զսաստից տխար
 Եւ բազմեալ հեղ եւ նուաստարար՝
 Գայ հանդարտ ի նազանս :
 Ո՛վ , քանի՛ գնացքն են վայելուչ
 Եւ մերձեցումնն սրբաառուչ
 Որոց ահն ունիցին :
 Իղըրդին սարիսպքն այն ապառումք ,
 Սիրաք ապերախոք , ոգիք տրտումք .
 Հրրճուի անձն անբրծին :
 Յաւերժ է սա փառաց արքայ
 Խոնարհութեամբ եւ սիրով գայ ,
 Չունի թաղ եւ մական .
 Մաքրութիւն հեղ խաղայ ի դէմս .
 Եւ սէր յաչացրն լուսաճեմ
 Զեղանի յաւազան :
 Շըրթուհքն անշարժք են վարդահատ ,
 Եւ աւետիս տան անընդհատ՝
 Ի հոգիս խոնարհաց .
 Ծերք եւ մանկուհք ոստաբարձիկ
 Զճառոց սաղարթ , զուսոց ձորձիկ
 Ըսպաղեն սիրազգեաց :

Ճօճեալ ըզգլուխըն հըլուաբար
 Աստուածաբարձ մտրուկ տխմար
 Ի Սաղէմ ընթանայ .
 Գոչէ ամբոխն , « Օրհնեալ որ դայ
 Ի Տեառն անուռն տէր մեր արքայ ,
 Ովսաննայ , ովսաննայ » :



Ահաւասիկ կեանք կենաց խնոց
 Եկեալ դան առ իս .
 Եւ խուսափեալ ծոցէ ի ծոց
 Այլայլէ հոգիս .
 Ահաւասիկ սէր տեսանեմ ես
 Եւ սարսէ սիրտս իմ .
 Հեղահայեաց դիտեմ երես
 Եւ յանկարծ խռովիմ :
 Հընչէ ամբոխ աղաղակին
 Եւ ինչ ոչ լրսեմ .
 Լուռ եւեթ կան շրթունք նորին ,
 Չայնիւն ես լի եմ :
 Շարժին ժողովք , խըռնին խաղան .
 Հայի հեզ Յիսուս .
 Կէսք ի հրճուանս կէսք ի մախանս .
 Սա լոկ յարտասուս :
 Հընչեն մանկունք ըստընդիաց .
 Հընչեն քարինք կուռ .
 Հընչէ բնութիւն բերանաբաց .
 Ե՛ս լոկ կացից լուռ : —

Ընդէր չունիմ ես ոստ ծաղկեալ
 Ի՛ արմաւ հաւատոյ .
 Հիմ ձիթենեակ ոչ լուսափայլ
 Եւ շուշան սիրոյ :
 Մի միայն է հնոտի գրգռեակ
 Սրտիս առիգած ,
 Եւ տալ յոտին ընթանալեակ
 Լինիմ ամօթխած :
 Ո՛հ , եւ ըզմէ զսիրտ ինքնին ոչ
 Առ ոստ արկանեմ՝
 Որ թինդս առեալ յիմրս թընդոջ
 Մատչին սիրաճեմ :
 Օրհնեալ եկեալ գըթութեանց Տէր ,
 Այս ի սիրտ մաաիր .
 Գարշապարացդ հեղանըւէր՝
 Սա նոր քեզ երկիր :
 Օրհնեալ ինձ եկք քո խաղաղիկք .
 Դէմքդ ինձ հաշտարանք ,
 Եւ արաասուքդ այդ ողորմիկք
 Վիրացրս խարանք :
 Եկ տէր Յիսուս , եկ ի սիրտ յայս ,
 Մի լիցի աւեր
 Իբր ապերախարն զոր ողբաս
 Սողէմ վատչըւէր :
 Ե՛կ հեղութեամք քո ամօթլեած ,
 Զի առից խրախոյս .
 Հեծեալ ի գութըս սիրազգեաց՝
 Որ հիմն են հոգւոյս :
 Ե՛կ մո՛ւտ խաղա՛ յիս համարձակ .
 Եւ թէպէտ անձուկ՝

Եղէց ի գալղ անդ ընդարձակ
 Սիրոյս ի փրղձուկ :
 Ե՛կ Յիսուս , եկ , արասասուեա՛ յիս
 Ու եղէց քեզ կամակ .
 Կարմիր աչօքդ հայեանց յողիս ,
 Ու եղէց ըսպիտակ :
 Եղէց եւ ես քեզ բարեբան ,
 Օրհնեա՛լ տէր արքայ
 Որ գաս ի սէր քո յաղթական ,
 Քեզ տէր ովսաննայ :

ՅՈՏՆԼՈՒԱՅՆ

Ձինչ են զարմանքս այս ո՛ր տէր .
 Երկինք կանգուն քեզ սպասեն ,
 Եւ զերկնաւորդ՝ առեալ սէր՝
 Ձրգէ առ ոստ հողեղէն : —

Ձոր ինչ առնեմս ես այժմիկ
 Ոչ արդ , սպա գիտասցես : —
 Եւ երբ հասցեն միտք սամիկ
 Յայդքան հրաշից քոյ հանդէս : —

Ի սքանչելիսն յայն սիրոյ՝
 Հասցէ՛ որ լին է սիրով .
 Եւ ի խորհուրդ բարձրելոյ
 Խոնարհն եւ սուրբըն հողւով : —

Տէր մատչի՛ սպաս ծառայից .
 Ձերծեալ զհամեստ զաբոնիկ
 Հանգոյն փառացն յաւերժից՝
 Ընդ մէջ դեռին գայ միայնիկ .

Լըցեալ ջրով լողարան
 Արկանէ զգաստն ինքնաստեղծ
 Յոտրս գուհկաց ձրկնահան .
 Սէր՝ չրգրէ ինչ տրդեղծ :

Առ բուսնըն սէր՝ սիրան հանդոյրժ ,
 Առ հեղութիւն բրնապոյն
 Ձիշխէ այլ եւս ունել ժոյժ ,
 Փորձէ վաղել բացապոյն :

Զի քեզ Պետրէ՛ զրաւաստակ .
 Քան ըզսէր ո՞ հնարագէտ .
 Զխոնարհութիւն՝ զիւր պահնակ
 Կարգեալ է յանցս՝ ըզգոյշ դէտ :
 Հնազանդութիւն ծառայի՛
 Տեղի տացէ աստանօր
 Խոնարհութեան տէրունի ,
 Տեղի սիրոյն հրաշանօր : -
 Տէր , ես չիշխեմ՝ ընդ Պետրի
 Ասեւ զիս մի լուանաս .
 Քանզ՛ ի շնորհացն իւր թերի
 Եւ աղտեղեալ է սիրտս այս .
 Եւ կենսագործ թէ անդրէն
 Չեուն ի սա ոչ կարկառի ,
 Նմանեցայց այնմ՝ որ ի քէն
 Չընկալաւ մասըն բարի :
 Զիս մի զըրկեր ի մասնէդ՝
 Որ քօղ արկեալ զամօթոյ
 Մատչիմ առ քեզ անզանգէտ .
 Արա՛ նդ իս Տէր ըստ կամս քոյ :
 Լըւա՛ , եւ մի զտոք միայն
 Զերագ յընթացըս չարին ,
 Այլ գլխովին զանձն համայն
 Զեկեալս ի գոյս խաւարին :
 Ես ինքն ոստնում յաւազան
 Զոր պատրաստես տէր Յիսուս ,
 Ու ելից մաքուր սրբազան՝
 Թէ կաթես շիթ մ՝ արտասուս :

Ի ՎԵՐՆԱՏՈՒՆՆ

Մինչեւ ցերթ սիրտ սովալըլուկ
 Մինչեւ ցերթ դու քաղցեալ պասուք՝
 Խընդրես զյագուրդ քո յերկրի :
 Սէր է միայն սրբախ սընունդ .
 Սէր՝ զոր չունին ոլորաք ու անդունդ ,
 Այլ որ զերկնիւքըն փարի :
 Յաստուածային կըրթեալ ճաշակ
 Յաստուածահամն հաց անուշակ՝
 Քիմք , հիմ խնդրես այլ զբօսանս :
 Ի վերնատուն անդր երթ փութաւ
 Ուր հանդերձի զենուլ պասքա ,
 Պասեք հոգւոյդ ի փրկանս :
 Յանկանալով ցանկայ ինք սէր
 Զենուլ զպասեքդ ինքնանըւեր ,
 Ընդ որ անցցէ մահ ի կեանս .
 Ընդ ցանկութեան հին նախահօր
 Անաղտ արփանք են անտանօր .
 Անմահութեան է սեղանս :
 Երթայք իղձք սուրբք , իղձք եռանդուն ,
 Պատրաստեցէք մեզ վերնատուն .
 Մե՞ծ իցէ՛ւ բարձր այն տեղի ,
 Մինչ չերեւել երկրի անդամ .
 Զի նախագահ յայն համագամ
 Ինքնին իսկ սէր զեռեղի :

Բարձրացի՛ վերնատունն այն ,
 Տարածեսցի նո՛խ խոր եւ ընդ լայն ,
 Քանզի բարձրեալն ինքըն գայ .
 Կիրք եւ խրոովք ի բաց անտի
 Ուր հեղութիւն Տեառն հանդարտի
 Եւ սրբութիւն գերակայ :
 Երթիցէ՛ Պետրոս՝ հաւասար՝
 Ըզտաճարին կրուել յառակ ,
 Զոր կոխիցէն հուրն Աստուած .
 Երթիցէ եւ սէրն՝ Յովհան՝
 Սրբեւ զօրմունս եւ զպատուհան
 Յոր տէրն արկցէ շաղցր հայեաց :
 Եւ երթիցէ յառաջընթաց
 Քան ըզհաւաստս եւ սէրն ի սլաց՝
 Սափորակիրն Ապաշառ .
 Սրակեսցին շուրջ ջինջ արտասուք ,
 Մաքրեսցին բիծք սրտի եւ սուգք ,
 Եւ գայցէ տէր սիրարշառ : . . .
 Պատրաստ է՛ Տէր վերնատունս այս ,
 Եկ , ո՛վ մաքուր , բեր ըլքո հայս ,
 Ե՛կ քահանայդ յաւիտեանց ,
 Թէ եւ դողամ՝ աւանիկ քեզ
 Պատարագի վայր սիրակէզ .
 Արա՛ զՎնցիկդ յիս անանց :

ԱՆՁՆՍՆՈՒԷՐ

ԸՆԹՐԻՔ ՅԻՍՈՒՍԻ

Հանդերձի աէր Յիսուս մըխիլ յուղին մեծ,
 Յուղին յաւերժ. աշակերտաց ապ հրաւէր,
 Սիրան ի շըրթանց յաչաց կարդաց սիրայեղց.
 « Եկայք յընթրիս զոր պատրաստեաց փրկչեղ.
 Փափագանօք յիս մատիք (սէր.
 Ճաշակեցէք եւ կեցջիք » :

Ճեպեա՛ սիրով եւ դու սիրտ, զն՛ կաս ահիւ.
 Որում չիշխես գարշապարին լինել հող,
 Խրախճանակից լինել մըղձկեալըդ խըղձիւ.
 Ի մի բաժակ քիմն հաղարդել է քեզ գող,
 Նորին ինքեան է հրաւէրս.
 Անց եւ դու անց ի հանդէս :

Տաճարապետ անդ սէրըն սուրբ նախագահ,
 Զաւեշա խընդից երգ եւ նըւագ՝ սէր միայն.
 Սէր համեմէ անդ ըղպասէք եւ ըղխահ,
 Սէր օշարակ ի սուրբ պաշտի խառնարան,
 Սէր ճաշակի, սէր շընչի
 Եւ այլն ամէն կորընչի :

Ոչ պայծառ յեա հիւսիսոյ այնպէս արեւ,
 Ոչ հոյք ծաղկանց սառամանեաց գան ըղհեա,
 Որպէս Յիսուս յայն յերեկոյ ակներեւ
 Ըղուրջ գիտօք խընդից ցանէ սեթեւեթ.
 Լըսել նըմա եւ հայել
 Անմահական է վայել :

Այլ փայլակունքն ահա յայտից ամփոփին
 Յակնակապիճս՝ ի բոյն դառնան ընտանի ,
 Վրսեմական շուրջ լրուութիւն սրբաազին
 Զարմանս ամեալ գայ զերեսօք տերունի .

Սիրտք բաբախեն եւ մատուց
 Յակճիւռս կան աչք եւ շրթունք :

« Անել ձեօք զայս պատէք՝ ըղձիւք ըղձացայ ,
 Յաւիտենից զայսրր ժամու դիտեալ կէտ .
 Նոր ձեզ զատիկ որ աստ ընդ ձեզ բազմեալ կայ՝
 Զենու այսօր , զանձրն արեալ՝ հոգեաց պէտ .

Մարմինս իցէ ձեզ սեղան
 Եւ ըմպելի՝ ցօղս արեան » :

Զարհուրեցան . սիրտք ի ծրփանս թուլացան .

Շրթունք կապին եւ զարմանաց ոչ է բաւ .

« Ամենազօր սէրն որ ետ զայս կերպարան ,
 Նոյն հրաշագործ ձօնէ զիս ձեզ հաւաստեալ .

Մատիք եւ գուք սիրածեմ
 Ճաշակեցէք զի քաղցր եմ » :

Չայն որ հաստեաց ի սկրդբանէ զտիեզերս ,

Եւ ի փրրկել զայն՝ եղիցի հօրն ասաց ,

Նոյն ներգործէ՝ զսիրոյն բացեալ խոր մըթերս .

« Առէք կերայք զիմ ըզմարմին ի յայդ հաց ,

Եւ ի գինւոյդ ի բաժակ
 Արբէք զարիւն իմ համակ » :

Զմատուս սրբաին զահեղ զանմահ զաստուածեան

Բաժանեցան , եղեն մի սիրտք մի մարմին .

Շրթունք յոգի աստուածային շնչեցան ,

Եւ յերակունս խաղաց արիւն Արարչին .

Ընդ թերս հոգւոյ անկաւ սէր

Եւ մահ հարաւ կարեվէր :

Եւ սերովքէքն ի գազաթան Յիսուսի
 Երկըրագողեն խոշոր լանջաց Գալիլեան ,
 Զյաւերժ գահոյս տեսեալ ի սիրտ մահացուի
 Եւ ճըշգրտի մարդ ի սրտակեր տիրական :
 Աստուած ըզմարդ , մարդ զԱստուած
 Պարփակեն , մի գոն հաստուած :
 Անու հոգի զանմահութեան իւր կրնիք ,
 Զըհանդուրժէ յերկրի , երկինք են անձուկ .
 Ընդ Յիսուսի կապով սիրոյն գերկ ընդ գերկ
 Ամենուրեք տաղաւարին մահացուք :
 Այս են ընթրիք Յիսուսի .
 Վայ որ մընայ մեկուսի :

Ի ԳԵԹՍԵՄԱՆԻ

ԱՍՏՈՒԱԾԱՅԻՆ ՄԵՆԱՄԱՐՏՈՒԹԻՒՆ

Ե՛ Յիսուս սկսաւ արեւել եւ հոգաւ
ՄԱՐԿ . ԺԳ . 19 :

Հան ինձ զուարթուն , որ ըզփեառես լուսազարդ
Մշտափայլիցդ աչաց արկեալ յայնժամ քօղ
Կացեր ի սպաս կրքից հաստչին մեր անպարտ՝
Զանհիւթական դեր արտասուաց հեղեալ ցօղ .
Ի նոյն ի թեւըս սրգաթափ վարեա՛ զիս ,
Եւ արկ ուր լոկ ցանկայ լինել արդ հոգիս .
Տրամահարկաջ ուր ի վնասց զարամուր
Սորոյ ի սոր դրդըչելով ուխք հոսանս
Ի կեզրոյնեան ծործորս խօսին ծանրաշուր
Հոգեթախիծս եւ սրտաուռչ հառաչանս .
Ըստ խաղս հողմոց՝ յերկայն նրւագ կամ ի սուղ ,
Զարհուրելոյ բնութեան հեկեկք վերնամուղ .
Եւ գիշերոյն անդ երաժիշտ սրտահար
Մեկնեալ ի սեաւն բեւեկնեաց վարագոյր
Շունչս ողբաձայնս յերիւրելով բաղխէ՛ նդ սար ,
Եւ բեկբեկեալ դարձուցանէ մեղմ պարոյր .
Անդ համայն վանգք եւ շունչք չեն յայլ զփալաւոր՝
Բայց ի խոռվել ու ածել լուութիւն ահաւոր .
Ի խորագոյն խոհից յանդոյգն ասարարեզ
Ի բնահովիտ արամութեան , վայր խեղակոծ .

Ուր դբովանդակ տիեզերաց դիզադէղ (ւոյ,
 Սասնձնեալ զազէաս՝ անոք անմուռնչ Այր ցա-
 Մենամարտէր ընդ վեր երկին՝ դ երկիր վայր,
 Ու աստուածաչափ կրրիւք տխրէր եւ հոգայր :
 Ո՛վ տխրութիւն անցատակ, ո՛վ հոգք անհուն . . .
 հոգայ նա զմարդ . եւ մարդ . . . Արդիք որուման,
 Եւ դո՛ւ Պետրէ, նընջէք յահեղն ի պահուն .
 Ո՛ւր ձեր շանթիք, եւ ո՛ւր քո սուր վրիժահան .
 Կեանս ընդ կենացն երդուայք . ի ցաւս արդ նո-
 րուն՝

Ժամ մի, մի ժամ՝ ո՛չ հանդուրժէք կալ արթուն :
 Զարթիր ո՛վ մարդ, զարթի՛ք բնութի՛ք համազունդ
 Թէ բաւիցէք նըստաստ ինչ տալ ինամաստար
 Այնմ՝ ոյր բարձեալ զբեռինս ձեր յուս՝ սրտա-
 թունդ .

Դիմէ յօժար հոգևով, մարմնովն՝ ո՛հ, տըկար :
 Աստուած համբուն դանդաչէ, զն՛ գործէ մարդ . . .
 Տիրամատնի՛չ բնութիւն, նընջեա՛ հանգիր արդ :
 Յանմահութիւն կընքեալ իմ սիրա՝ դո՛ւ միայն՝
 Թէ եւ անգօր, զողեալ յանութ հրեշտակին
 Ե՛րթ, իբրու բիծ մ՛ ի վայր լուին եւ ունայն
 Նկատել զտագնասրս օրհասական վըտանկին,
 Նկատել զարիւն քրտունս ի գէմս Յիսուսի՝
 Ի մենամարտ ահեղն անչափն հանդիսի : . . .

Աւասիկ Տէր . ծունկք կրկնէլք, դէմք դեանամած,
 Դասար ըղղաստիւ իբր յանդարձ մահ դատա-
 պարս,
 Ճակատն ի հող ու աչք անբրթիթ մըթաղղած,

Եւ հայի 'նդ վիհ' յոր կործանեալ անկաւ մարդ .
 Մարդ՝ զոր խրովք խակ ձեռօք անդ ի յՅդեմ
 Աստուածութեան խրում կանգնեաց զուգադէմ :
 Սիրտըն հերձու եւ զեղանի յարհաւիրս .
 Հայի յերկինս , եւ երկինք ոչ երեւին .
 Չըւեն հրեշտակք ի հուսկ սահմանս , ի նանիրս .
 Եւ ինքըն հայր վարագուրի գլխովին ,
 Չաղամածնաց մեղսամակարդ հոգիս հոծ
 Արկեալ ընդ ինքն եւ որդին թանձրը խարոց :
 Յերկնից ու երկրէ շքեալ միջնորդն երկոցուն
 Յաշխարհլին ակընկորէ մարդոյն դէմս : . . .
 Չըհանգուրթեալ ամենամուխն ու երերուն
 Յածի զվայրօքըն Գըթութիւն՝ յերկբայ ճեմս ,
 Հաղիւ ուժեալ զսափոր մարդկանս արտասուաց
 Դընեւ հեզոյն հանդէս վրկէին մահացուաց :
 Հայի Յիսուս . . . եւ յայն հայել՝ մեղաց մուխք
 Եւ զարհուրանք եւ թալկութիւն եւ տագնասո՛ւ
 Եւ ամենայն զօրութիւնք , վրէժք , քինուց ուխք՝
 Իբր յանսահման ծովու յուղեն խեռ խուճասո՛ւ ,
 Ընդ որ խաղալ սահել անոք միայնակ
 Հարկ է ում ետ զանձըն մարդոյ վրկանակ :
 Խաւարի ակն անմութ , սարսէ սիրան անմահ .
 Եւ զերկնադէզ , աւա՛ղ , տեսեալ պարտըս մեր՝
 Յորըս դըժոխք յեցեալ պարծին իմն անահ ,
 Տարակուսեալ խընդրել գառնայ 'նդրէն զեթեր .
 Եւ չիք եթեր . Արգարութիւն սհապին
 Լոկ ճակատեալ կայ 'նդ մէջ երկիր եւ երկին ,
 Չըրահս արկեալ զիւրեաւ զանդիծս Յաւերթին ,
 Չանյողդողդ կամս սաղաւարտեալ ամրակուո՛ւ
 Պակուցանէ բըրօք խեթի զՏէր ինքնին .

Վ իշապաձեւ շանթիս կրկնակ ծամածուռ
 ճօձէ յաջուճ, զորոց շիջոց միւս զերբարդ
 Յորժամ Որդին յանձն առ եւ էջ մեզ միջնորդ
 Եւ պղղընձի ձախտիւ առեալ կարկառէ
 Տաշտ լայնալիւր, կրրից մարդկան խառնարան,
 Ուր քան ի ծով ալիք զալիս որորէ,
 Եւ շառաջին համատարած եռանդան,
 Պայթք եւ պղպղակք, վերափչմունք ապաժոյժ
 Հրացայտ զեռմունք, ծրխածաւալ ոգիք յոյժ
 « Զայս քեզ Որդի Աստուծոյ, հայր դերունակ
 Ի փրկութիւն մարդկան՝ զոյր պարտս եւ ըզձեւ
 Աւեր զանձամբ, մատուցանէ ըմպանակ
 Արբ, թէ կամիս զի մահացուք փրկին քեւ » :
 Եւ մեծապէս անգէն յուզեալ բաժակին
 Ծուխ արձակէ մինչ յեօթներորդն անգր յերկին :
 Չեղն ձրգէ Յիսուս Ո՛հ, չէր ծանր այնպէս
 Երբ յանէից զհամագոյ տարրըն թափեաց
 Կամ թաւալեաց զաշխարհս յանձիր տիեզերս,
 Եւ ոչ լրծակն յոր կռէ զհոյրս ապառնեաց :
 Մօտ մերձեցոյց, եւ բուրեաց խանձ եւ լեղի,
 Եւ սոսկացեալ սուրբըն բնութիւն տայր տեղի :
 Ո՛վ բաժակ, խոր քան զանգունդ, դառն քան զմահ-
 Արտասուելի մահացուք . զայս ձեր հասաջին,
 Զայս մեղրահոս ամպս ածողիդ էր ի ճահ,
 Զայս պատրաստել ումս՝ ձեզ կենաց արւողին :
 Ո՛վ, քանի՛ ծանր աստուածութեան իսկ եղեր
 Մատարւակեալ մեղօք բաժակդ աննըւէր :
 Պինդ երկուքումք տիեզերակալըն բազկօք
 Հազիւ բաւէր ունել, եւ յանձն ոգորէր
 Վ ըստահութեամբ արկանէր զահ ընդ կամօք

Եւ ա՛հ դարձեալ ընդ կասկածի հարկանէր .
 Թերաքամեալ աչօք՝ զերես դրժընդակ ,
 Չափէր մըտօք ըզխորութիւնն անյատակ : —
 Արդ ի բոց կաց , հրեշտակ , թող զիս առ Յիսուս .
 Զբաժակէն բուռն հարեալ՝ ուր գոյ եւ մասն իմ՝
 Տալ ըզճակատս առ այն ճակատ մըտայոյզ ,
 (Ներեա Աստուածդ հեղ՝ թէ ի բանս զառանցիմ՝),
 Արրախ ու աչօք նորուն անցեալ եւ տեսից՝
 Որպիսիս նա կրէն ի նուազէն մըրբալից :

Քան զանկերպարան վըճին թոխ եւ բոխ
 Անկգր ովկէան ալեօք բազմամբոխ ,
 Աշխարհ դրժպըճի մըտաց ի տեսիլ
 Լ ի ուրուականօք զաղիւր ու անարդիլ .
 Համօրէն մըրուրք մեղաց մահացուաց
 Իբր ի կոյանոց անդր համատարած
 Յաղագաց յաղգս հոսեն ի կարկաջ կերկեր ,
 Ու անդուլ ի խորոց հարկանին ի վեր :
 Անդ դարիւ դարիւ հոյլք կըրից տըխուր
 Հանուրց շրնչողաց զօղս անիծակուս՝
 Իբր ի խրտխտ լերանց ուղիք գետոց յաւեժ
 Դարահոս զեռամբ սրաից յորդավէժ
 Ընդ հինգվըտակեան ըզգայութեանց դուրս
 Տղմասիկ ի կոյա թաւալեալ ի դուրս ,
 Ընդ ժամանակին վազեալ ծեր կատար
 Ի սահանարաց կոհակս անըսպառ ,
 Ամենուսա թափին յաղախցն ի բաժակ .
 Այր կողք ալէկոծ մաշեալ բովանդակ
 Սպառնան խորտակումն անյոյս անդարման
 Հեղեղել ծածկել զաշխարհ ամենայն :

Անդ խոժոռ յունից շարժի սպառնալիք,
 Խրտանան պարզին մեդք ու ամպրոտք սաստիկք
 Անդ ցասուցելոց աչաց բոցացայտ
 Հանձեն շառաչմամբ կայծակք բարկաճայթ .
 Եւ ի թրխաթոյր սխուժեանց գուպար
 Փոթորկաց տեղայ գիշերադէմ պար .
 Անդ անժոյժ ոգւոց նրկարին պատկերք,
 Ուխք անհաշտ արեան, բարկութեան մըթերք,
 Կասուռտակային կոհակք նախանձու
 Օձաձեւ շանթեալք եւ վերք մահացու .
 Տենչք ամբարտաւանք, պատիր խոհք եւ խօս
 Անդ լեռնակուտակ բաղխին դարահոս .
 Յանդուռն եւ շրթանց հայհոյչաց յահուր
 Պըղպըջեալ սրայթի դիզադէզ վիրվուր .
 Յայրաախից աչաց՝ ի յոյզ անդ ալեաց
 Գէջ գէջ հատանին կայծակք մըթազգէաց .
 Անառակ վարուց գրգանք մեղկադէս
 Նողակալի դիմօք լուղին մէտ ի մէտ .
 Քանի՛ սխերիմ կենաց ճասպաղիք
 Զոր հոսեցին զէնք եւ քէնք կատաղիք .
 Քանի՛ արտասուք աչաց յուսահատ
 Ըստըրջանք սրտից բարւոյ գիմամարտ
 Ո՞րքան ուրուականք սնտոի պաշտամանց
 Յընորք եւ աղանդք մըտակոյր ազանց .
 Ո՞րքան սեւադէմ զազրաթորմի կիրք
 Բունեալ ի յանդէզ՝ սիրտ ըզգայաղերկ .
 Եւ խուռն աւերակ, անսի՛լ ժանտ, քանի՛
 Սըրբոց տաճարաց անդ ցիր տեսանի .
 Սըրբապիղծ ձեռաց հարուածք յանդըգունք,
 Մէծամէծ ոճիրք՝ բընութեան սոսկիունք :

Անդ համայն զոր ակն ետես բարձրելոյն
 Կամ զոր ի մարդիկ տեսցէ չարութիւն .
 Ի մեղաց՝ զոր անդ ի լոյսն անմահին
 Ծընան փըքացեալ միտք արուսեկին ,
 Ի սառնդանութեանց իւրաատեղծ զուգին
 Յաշխարհակործան գերաբրիսառոսին : . . .
 Ո՛հ , անդ , մեռիր անձն իմ , երթ գարձ ի չիք ,
 Անդ եւ քո մեղանք յայտնին դարչելիք ,
 Զոր զուր ճրգնիցիս ծածկել գլխակոր .
 Ե՛րթ գարձիր ի չիք . . . Այլ մի ապաշնորհ ,
 Մի . արձանացիր մանաւանդ եւ տես
 Զոր աչաց , լեզուի եւ սրտիդ հանդէս
 Բղխեալ յորդեցին՝ յաւելուլ փրկչիդ
 Յահեղըն բաժակ՝ թոյնըս մահառիթ .
 Օ՛հ , թէ մի կայլակ պակաս էր ի քէն
 Կիրք փրկչիդ նըւազ լինէր ապաքէն ,
 Ու ո՛չ յայնքան խոհերց ի խոր մըկանանց
 Ոտիկան մահուն ճեմիւր խրոխտապանձ՝
 Ըզտոսկալիթխարսըն ցըցուեալ զեղջիւրս
 Ի խաւարչըտին բաժակէն ի դուրս : . . .

Յայսքան ի տես՝ Յիսուսի ոչ հանդուրժեալ
 Ըուրջ ակնարկէր , եւ ոք չըկայր օգնական .
 Սիրտ ի սառոյց եւ դէմք ի սպառ դունատեալ
 Առ աշակերտսըն գայր , եւ խոր ի քուն կան :
 Յիշեաց ետես զինք լոկ միջնորդ մարդկութեան .
 Մատեալ ի տաշան . . . ահաւոր , բուռն վայրկեան :
 Երիցս յարեալ փորձել , երիցս եւ անկաւ .
 Յաստուածութիւն իւրում զօրիայր մարդկութիւն : —
 Ո՛հ ծանրութիւն մեղանաց , ո՛հ բեռն անբաւ՝

Որ ընդ Որդւոյ իսկ ըստառնաս բարձրելոյն :
Գամ մի Յիսուս շիշկեր յահեղն ի պայքար ,
« Հայր իմ , անցցէ բաժակս յինէն՝ թ' է հը-
նար » :

Չայն հոգեհար • յաղթեաց , զերկին պատառեաց •
Փութացաւ հայր , ըզլրսելիարն կափոյց •
Անհրնարին լուծիւն ձայնին ետ դարձուած •
Մահկանացուաց յուսոյ սարսեաց նուրբ հան-
դոյց :
Իսկ մենամարտն ի տաշտն անդրէն բուռն եհար ,
Զըզուեցաւ . . . « Հայր , անցցէ բաժակս թ' է
հընար » :

Ծաւալէր ձայնն ողորմ յանհուն լուծիւն •
Արդարութիւն գրգռեալ շարժէր ըզանթա իւր •
Ամբարձ ըզձեռս զինեալս յարեւ բարձրելոյն ,
Եւ տիեզերք սասանէին թաքթաքուր •
Երդնոյր կարել ըզլոյս մարդկան , աւանդ մեզ ,
Թէ ոչ ըմպէ զբաժակն ժանտ ժահադէզ : —
Հրնչեաց ըստին յաւիտենից ի բարձու . . .
Եւ Գրթութիւն արտասուեալ՝ թող միայնակ
ԶԱստուածըն բան : Մտանէր յօրհաս մահացու ,
Եւ քիրտն արեան խառնէր յահեղն ըմպանակ •
Անդէն զիջան ալիք փրփուրք ապաժոյժ •
Եւ հառաչեաց Յիսուս • « Արբից , թ' եւ դառն
յոյժ » :

Արբից • լուան եթերք • եւ կառքն եռանդուն
Ի դիւ եկին ընդ տիեզերս ընդհանուր •
Չայն ետ Որ էն յաւիտենից մինչ յանդունդ ,
« Տըւան փրկանք ազգի մարդկան սիրատուր » :
Արդարութիւն ըզլիթխարին ձայթռեալ շանթ
Յերկնից ծագաց ցանդընդախոր մինչ ցրբանտ ,

Որպէս զաղէղն անմահին յողբս ցընցէր
 Եւ խորասոյզ մըխէր յաղալցն յայն բաժակ .
 Շքէալ ծըխոյն շոգի յերկինքս կըցէր . . .
 Իսկ Յիսուս արբ , քամեաց , ըզգաց մարդկան
 ազգ : —
 Արդարութիւն ելի Գողգոթ՝ հուսկ շանթ յուս
 Շ, իջուցանել եւ զայն յարեան քում՝ Յիսուս :

ՄՍ.Հ ԱՆՄՍ.ՀԻՆ

Ընդ անկերս հճճանք, սարսուռ ի բնութեան,
 Համբու մահու Անմահին.

Մի՛ արդեօք վեր ի վայր հարեալ զամենայն
 Կարգքն յաւիտեանք փոխիցին :

Բըլուր փոքրիկ արձանացեալ համարձակ
 Զերկիր լնու, զծով անսանձ,
 Բարձեալ ըզխաջ՝ մեծ քան զերկնի պարափակ՝
 Կրելով զԱստուածն յաւիտեանց :

Ո՛վ խորհուրդ ցնորեցուցիչ խմասանոց,
 Ո՛վ սքանչելիք սքանչելեաց .

Ծայրք բարձրութեանց հաւասարին ընդ խորոց,
 Գործ Աստուծոյ գերաստուած :

Հեծէ բնութիւն, զի խռովեալ ոչ քայքայի .
 Տարերք՝ զի ոչ չքքանան .

Երկիր՝ զի կրէ զփայտն, եւ արեւ՝ զի հայի,
 Ու անմահք՝ զի ոչ մահանան :

Իսկ ինքն Աստուածն յաւիտենից՝ հառաչէ . . .
 Եւ ոչ թրւի փոյթ երկնի .

Եւ ընդ երկիր արձակեալ զաչս ի խաչէ՝
 Խոնարհէ զգլուխ, մեռանի . . . :

Ո՛վ իշխեսցէ կեալ ուր Աստուածըն մեռաւ .
 Յանմահութիւն զուգի մահ .

Եւ արդ չիցէն յայամհեռէ կեանք զըժուարաւ,
 Իսկ մեռանելն հեշտ եւ շահ :

Ո՞ր տայր մըտացս՝ ի խորհուրդս յայս գոչ հասու
Եւ բեւեռիչ անմեկին .

Ո՞ր տայր լծեւ ըզսէր ի կառքս մահու
Ու անդրաժարեւ քան զերկին :

ՀԱՅԵՍՅԻՆ

Ի ՆԱ ՅՈՐ ԽՈՅԵՅԻՆՆ

Տեղի՛ տուք ի բլրոյդ բնուէք խառվեալք եւ յապշոպ
 Տեղի՛ տուք ի բլրոյդ միտք ի վարանս եւ ի թոպ ,
 Սըրտի միայնոյ տեղի տուք
 Սարսել սաքրել զարամուր ,
 Եւ ի նշաւակն ապաշուք
 Կառուցանել աչս ամուր :
 Այլ ի յերկուս հերձեալ սիրտ եւ յերկուանան
 յիրերաց ,
 Հաւատացեալ դիմէ կէս , կէսն անհաւատ ու ի
 կասկած .
 Հաւատք յարիւն հոտոտին
 Եւ վրկայեն զՏէրն ի խաչ .
 Սէր խնդրէ զնիշըս սրտին
 Եւ զանդիտէ դալ յառաջ :
 Գիտեմ՝ զի աստ է իմ Տէր , այլն՝ անմահ , իբր արդ
 մեռեալ .
 Ո՞վ սրտամեացէ սքանչելիս որ այլ երբեք չէ լռեալ .
 Ճըչեն տարերք ի տառան
 Ու երկինք լռեն եւ թաքչին .
 Ու ահա կազմի աստ տապան
 Ծածկել զահեղըն մարմին : . .
 Օ՞ն , մօտագոյնրս մատիր . տես սա՛ իցէ սէրըն քոյ .
 Բա՛րէ , մեռեալ է . համայն մեռեալ նա , քան ի
 սիրոյ .

Տիպք տիրականք գրոշմեալ են

Կիսաթարշամն ի շրթունս .

Ու անմահութեան ելանեն

Նըշոյլք նուաղեալք ընդ աչկունս :

Մեռեալ՝ մարմնոյն ասէ զնա խաղաղականն դա-
լուկ .

Մեռեալ հծծեն յամբաթորք եւ շառագոյնքն կա-
թլուկք .

Վէրք եւ հարուածք մէն մի տառ

Յարենագիծ մուրհակին .

Ու արդարութիւն անաչառ

Հարեալ զկրնիք մահացուին :

Գլուխըն պանծ սիրաշարժ՝ կայ խոնարհեալ ի յեր-
կիր .

Աչք եւ շրթունք կասուտակք յեռեալք յարատ՝ ի
կարմիր .

Բազուկք պարզեալք գրրկաթափ ,

Չեռքն լըցեալ բեւեռօք ,

Եւ դեռ հոգւոց առ շօշափ

Թըւին ձրգտիլ անձկանօք :

Հանապաղ արոփական պահնակ լանջաց՝ սիրա՝
անթրունդ .

Եւ ճանապարհ ծիրանի բացեալ ի կողս խորան-
դունդ .

'Դ որ վաղեալ սէր ժիրաժիր

Հայի նդ խըրամն ահաւոր ,

Եւ յաստուածեանն աւեր ցիր

Նշմարէ կեանս իմըն նոր :

Այս մեռեալ իբրու զմի եւ սա յորդւոց մարդկանէ .

Ե քաջանիշ կերպարան գերմարդկային ցուցանէ ,

Եւ սա գրբեալ ընդ մահու ,

Այլ մահու ոչ է գերեալ .

Նա եւ մահուան լրծարկու ,

Սա լոկ սիրով է մեռեալ :

Ամենայնի թագաւորն՝ որով միայն պահասէր

Եղեալ է աստ եւ ըզթագ մահու՝ սրբեալ յիւրն
սէր .

Եւ մահ աստէն լուծանի .

Պահուատք դժոխոց կողոպտին ,

Սանդարամետ կործանի ,

Կոխան լինին դուրք բանտին :

Արդ զի՞ նկատես աստ սիրտ դու . ո՞չ աւասիկ սա
քո կեանք .

Զոր գիտէիր անմահ սէր՝ ծանիր մահու յազթա-
կանք .

Նա եւ զքեզ իսկ մահացուդ

Անմահ գործել ցանկացաւ ,

Եւ յրմսել զուսու քո մահուդ

Յերեսրդ կեանս ժրստեցաւ :

Ո՞չ տեսանես համօրէն յաստուածունակն այն
իրան

Քեզ եւ նմանեացրդ փայլեալ նիշ եւ կրնիք հաշ-
տարան . . .

Ե՛րթ ով հէգ , մի զարհուրիր ,

Ե՛րթ մուտ ընդ դուռն կողին ,

Ե՛րթ սիշ յառեաց հիացիր

Ընդ հուն սիրոյ փրկողին :

Ահաւաղիկ սիրտ լրուեալ ի շարժմանց՝ ո՞չ ի սիրոյ .

Եւ յոյր ձեռաց ասպառում հարուածն ի նա եւ ազ-
գոյ . . .

Ա՛Տ , եւ դուցէ՛ անդ հարուած
 Ա՛Տ , եւ դուցէ՛ անդ ինչ վէր՝
 Զոր չեա հաստեալս առ Աստուած ,
 Եւ սիրելիս՝ առ իւր սէր :

Ես ուրացայ , մատնեցի • նա դրժացաւ եւ մեռաւ •
 Զարհուրիմ՝ ի հայել եւ հեռանալ շիշխեմ բնաւ •

Խիղճրս խայթեալ խուսափէ
 Ու ընթանալիս կրժոտի •
 Սէրն ի սարսուռ ըստիպէ
 Եւ ոյժ նուաղեալ տայ սրբախի :

Եւ երկուստեք տաղնապեալ՝ ես առ խաչին թաւա
 լիմ : —

Է՛ջ ի խաչէդ տէր , լըցեր ըզպարսս , լըցից եւ ես
 զիմ •

Արի Աստուած իմ ի փառս •
 Յաւոցդ ի գահ թող ինձ կալ • • •
 Այլ զի ցնորիմ ես թըշուառս ,
 Անդ՝ ամենայն կատարեալ :

Արդարութիւն լի եւ յագ • յարեան սրբում ջըն
 ջեալ մեղք •

Սիրոյն ըսպի , ո՛հ , ծածկէ զվէրս , եւ չըկան անդ
 սրդեղք : • • •

Ես լոկ յառեալ յոր հարի՛
 Եւ հանապաղ սիրեցից
 Զոր զիս սիրեաց յոյժ կարի •
 Մեռայց ի սէրն եւ կեցից :

ԲԱԽԷԻՆ

ԶԿՈՒՐԾՍ ԵՒ ԴԱՌՆԱՅԻՆ

Աստուած մեռաւ , մեռաւ վասն իմ .
 Ես ուխտագրուեի սիրոյն անձառ
 Չըկացի նմա հաւատարիմ .
 Աւաղ էղճեկ հողւոյս չըւառ :
 Արդ ո՛ւր է մահ , հիմ խնայէ յիս .
 Հիմ չեղանես հողիդ յինէն .
 Եւ թէ անասա դու արարչիս՝
 Յերբ կենդանի մարմինքս իցեն :
 Հիմ մեռեալ չեւ եւս է մարմին
 Զի հողիս այս կեցցէ աղատ .
 Աստուած մեռաւ ի չոր փայտին ,
 Ես ի գրգանս կրթիմ յարատ :
 Հանապաղ կայ խաչն առաջի ,
 Եւ իմ դեռ չէ փարեալ ի նմայ .
 Ոչ անտարած լոկ ի խաչի
 Այլ եւ կրուեալ ի կիրս կամայ :
 Տարեկանաց յառնելըն դարձ
 Գընայ նդ բնութիւն գաղտնի սարսուռ .
 Սիրտ քան ըզվէմս հերձեալս յանկարծ
 Կայ յամառեալ եւ սընդակուռ :
 Աստուած առնէ զմեզս արտալած
 Ես ըզսիրտ տամ ասպընջական .
 Ո՛հ , մեռանի վասն իմ Աստուած ,
 Եւ ես մահուն եմ սլարտական :

Ես ինքն ետու զհոգիս ի մահ
 Եւ ըզհաստիչ հոգւոյս ընդ իւր .
 Նա բարութիւն էր բուն անմահ
 Եւ ի մահուն ետ ինձ համբոյր :
 Աստուած սիրեաց զիս մահուչափ .
 Եւ ի խաչէն սիրակարկառ
 Արկ զինեւ գիրկ հոգեշօշափ ,
 Փրչեաց ի դէմս իմ շունչ կայտառ :
 Արի՛ փութա սիրա յոյլ սրղերդ ,
 Փութա ի խաչ ի ցաւ ի մահ .
 Տես քանի՛ քաղցր Յիսուսիդ վերք .
 Փութա ի խաչ ի ցաւս անահ :
 Արկ գիրկ սիրով եւ համբուրիւ
 Քամեալ զկայլակարն ծիրանիս .
 Եւ քաղցրացիր գիշեր եւ աիւ
 Հրակեալ յանկեան սրտուանդանիս :
 Աւազակին խաչակցելոյ
 Գոչեա ձայնիւ , Յիշեա՛ զիս Տէր
 Յարքայութեանդ հանդերձելոյ ,
 Զոր այդքան մեծ մահու գնեցեր :

Ի ՏԱՊԱՆ ՅԻՍՈՒՍԻ

Ե՛կ մերձաւոր խմ . . . ընդ հովանեաւ վիմիդ :
ԵՐԳ .

Հիմ իբր ըզգառն արտուղի՝
Որ ըզսըրինդ հովուէկին
Արձադանդաց ի հովտին
Հարցանելով կողկողի ,
Այդպէս շքար եւ արխուր
Շուրջ թափառիս , ո՛վ իմ սիրա .
Աչք քո ճեպին խիրա ի խիրա ,
Եւ չբոխես դիմել ո՛ւր :
Ըզմահահոտն ըզԳողգոթ
Թո՛ղ արդ , էջ սեաւ ի դիտէն ,
Եւ ըստ կարմիր կայլակէն
Ընթա՛ առ Սէրդ անյողգողդ :
Մի՛ զարմանաս ահաթունդ
Ի աապանէն ցըրաագին .
Թէ եւ նընջէ անդ մարմին՝
Սիրա Յիսուսիդ կայ արթուն .
Թընդիւնք նորին հեա ընդ հեա
Յաղթեալ վիմին կարծրակու՛
Սիրոյ թըռչին քեզ ի հուր ,
Սիրոյ բանան քեզ ըզհեա .
Ե՛րթ սըրաիկ էրթ առ Յիսուս ,
Յայնկոյս որմոյն ի թաքուսա
Վանդակապաան ի ներքուսա
Նա սիրաձայն տայ քեզ յոյս .

« Արի՛ եւ եկ մերձաւոր
 Փարմամբ խաչիս մեռսւնակ ,
 Արի՛ եւ եկ դու հոգեակ
 Լուացեալ յարեան իմ բոսոր .
 Գործ իմ մատին , արեանս գին ,
 Ե՛կ աղաւնեակ ինձ հոգիդ
 Ընդ հովանեաւ եկ վիժիդ ,
 Ե՛կ ի սլատուար իմ շիրմին :
 Յոյց ինձ ըղդէմբդ ամօթլեած
 Լըսեցո՛ւ զձայն քո դողդոջ
 Առ ձայնս իմ այս սրբաագոջ ,
 Զի մահ՛ սրբախ քուն ոչ ած » . —
 Ահա թըռչիմ դամ Յիսուս ,
 Չայնիդ ոչ եւս ունիմ ժոյժ ,
 Գիտակցու թեանս եւեթ փուշ
 Կայր անջըբալեա ընդ երկուս .
 Արդ ինձ լիցի յայսմ հեակ
 Իմ սիրելին , ու ես նրմա ,
 Ընդ սիրտ որ անդ արթուն կայ ,
 Սիրտ իմ սիրով հըսկեսցէ .
 Մինչեւ ըստուերբքն շարժին
 Մահու մըթարբն այն աղօտ ,
 Եւ յարութեանն առաւօտ
 Ծագեսցի նդ փակ տապանին : . . .
 Այլ ո՛ւր կացցես սիրտ իմ , ա՛հ ,
 Անմահութեան եւ մահուն
 Շողկապ անկեալ սիրատուն .
 Կէս մահացուդ կէս անմահ .
 Դամբանական զերդ լամբար
 Ըզկափարչէ՛ն արդեօք կաս .

Թէ մըշտաշարժ ի ճեմ գաս
 Ի սենեկին սրբաւայր .

Արդեօք կայցես յար յակճիւ ,
 Թէ համբուրից ի համբոյր
 Փարեալ ի գէմս օսկեթոյր
 Թաւալիցիս շուրջ ի հիւ .

Իբրեւ սիրոյ կայծակունս
 Նըւաղ ի բիբս անդր անկցիս ,
 Թէ իբրեւ շունչս հըրալիս
 Հառաչիցես ի շըրթունս .

Իբրեւ սրսակ տըրտմաշուք
 Կայցես յանշարժն ի ճակատ ,
 Թէ իբր երանդ վարդահատ
 Գունեւ գիմայն ըղղալուկ .

Իբրեւ նըւէր արդաղիր
 Գարշապարի՞ն գընիս մերձ ,
 Թէ առ վիրի՞ն կողահերձ
 Կանգնիս սրահնակ սիրալիր .

Ձհամայն մարմնո՞ն իբրեւ խունկ
 Ծաւալիցիս եւ զըմուռս ,
 Թէ զտենչ եւ զիղձ քո մաքուրս
 Դիցես սնարից բաստեռունս :

Քաղցր է ամէնն ինձ ո՛վ տէր .
 Այլ սիրտ ըզսիրտ խնդրէ զքոյն ,
 Սէր իմ զաղբիւր իւր սիրոյն .
 Յանկամ խնդրեմ սիրտ եւ սէր :

Անդ ընդ կապոյտ կամարաւ
 Կրկնակ ձեռացդ հերձօտեալ ,
 Ի սրաղսաջուն լանջաց փայլ՝
 Ընդ որ հայի սէրն անբաւ ,

Սըրտիդ վերայ զսըրտիկն իմ
 Հանգուցանեմ երերկոս ,
 Ընդ ելեւէջս իւր անձկոս
 Մեռանիմ , կեամ եւ զուգիմ :
 Ո՛չ ճըմէցից ստոնապէս
 Ծանու բեռամբքս մեղաց ,
 Զի ձայնդ ու արիւնդ զիս քաւեաց ,
 Եւ սէր սըրտիդ չեմ ծանր ես :
 Թաղիմ ի կեանս • անդ քամեմ
 Ի դէմս մահուն զիմ թախիծ ,
 Մինչեւ դարձցի խոր կայից
 Հունչդ աստուածեան սիրածեմ ,
 Մինչեւ թափեալ զայդ թըմբիր
 Բանաս զոչկունս յանվերջ լոյս •
 Յայնժամ վառեալ զկայծ սիրոյս
 Ի լոյս հողւոյդ սիրալիր ,
 Կոր նորոգեալ քո նըման
 Ամբարձ եւ զիս ի վիմէդ ,
 Գոչեա ի ձայն խընդաւէտ ,
 « Յարեայ • • • յարեալ եւ սիրան այն » :

ԱՌ ՀՐԵՇՏԱԿՆ

ՈՐ ՆՍՏԷՐ Ի ՎԻՄԻՆ

Յոյժ սրխրացեալ եմ ընդ քեզ
 Սիրուն Սերուբ լուսակէզ •
 Զխարդ պարզեալ զհողաթեւս
 Առ վարդասփիւռս այս արեւս ,
 Ի կափարիչ ցուրտ վիմիս
 Անցեալ շքեղքս բազմիս •
 Առ վէմն ու առ ոտս առաթուր
 Զաղխեալ ըզմահ սեւաթոյր
 Եւ յընդհանուր տիեզերս
 Քաղցրաձայնեալ տարփողես •
 Երկիցս ի վեր զաչս յակճիս
 Երկցս ի վայր տըւեալ հիս :

Աստ Սերուբ սիրակէզ
 Հիմ աստանոր դադար քեզ •
 Թողեալ զկենացրն դաւառ
 Ի սեամ մահու կալ ռանառ •
 Եւ ցերբ ի գուքն հայել յայն
 Ի թաղելոյն իսկ ունայն : -

Ընդ այս ունայն եւ թափուր
 Ընդ այս տապան կենսատուր ,
 Ընդ այս Սերուբս ես երկնից
 Կամ սրխրացեալ հրաշալից •
 Սա ոչ կենաց ոչ մահու ,
 Վայր իմն ասէզ սիրարկու •

Վէ՛մ ի լեոնէ տաշածոյ
 Եւ ինքն է տուն Աստուծոյ .
 Զանց արարեալ զիւր գահու
 Աստուած հանդչի 'բարձ մահու .
 Զարթուցանէ զմահ իւր՝ կեանս՝
 Անմահութեան յարթականս :
 Յայս բովս հրաշից ու ս'չ դամբան՝
 Յասպուշ կրթին միտք եւ բան . . .
 Ծանիր ով մարդ, զի մեծ սէր
 Ասա՛ քան յերկինս՝ եցոյց Տէր .

ՅԱՐԵԱԻ, ՉԷ ԱՍՏ

Յարեաւ Քրիստոս , աւետիւն
 Եւ սրդաւոր իմ սրբախ :
 Յարեաւ էից կենսատուն •
 Զարթիր հոգի զըւարթուն ,
 Լոյծ ըղկապանս մահահոս ,
 Արկ ըղքեւ լոյս անաղօս •
 Կեաց Քրիստոսի անմեկին ,
 Վերամբարձցիս ընդ նրմին :
 Մահ քո սերման է թըմբիր ,
 Անկցի զմարմնովք հոգեկիր ,
 Եւ դարնայնի ծաղկան սէս
 Ի նոր դու կեանս ընձիւղես :
 Թէ վէրս ի կողք ընկալար
 Եւ ի բոսոր թէ ներկար ,
 Վարդակարմիր փայլեացես
 Ի նորատունկն ի հանգէս •
 Վան ընկերին վըշարմբեր
 Ըիթ արտասուաց թէ հեղեր ,
 Մարդըրտայեռ քեզ պրսակ
 Յերկնից շողայ սարունակ •
 Թաթիւ ոսից յեց ի վէմ
 Իբրեւ արմաւ լուսաճեմ
 Ընդ Քրիստոսի քաջապէս
 Գողջիր այժմէն՝ Յարեայ ես : —

Մագդաղենի գ անվեհեր ,
 Յով ընթանաս խընկաբեր •
 Յարեայ , ես ոչ մեռանիմ
 Փութով առ Հայր թրուանիմ :
 Է՛ջ դու սպիտակ զըւարթուն ,
 Գոգ խընդրակաց Սիրելոյն •
 « Յարեա՛ւ սիրանս այն , ոչ է աստ » •
 Եւ ցոյց զերկնից առադաստ :

Ա.Ի.ԵՏԻՔ

ՅԱՐՈՒԹԵԱՆ ՔՐԻՍՏՈՍԻ

Օրհնութիւն քեզ հայրըդ լուսոյ ,
 Յարեաւ Որդին քո , ծոցածին .
 Օրհնութիւն քեզ հոգի սիրոյ ,
 Յարեաւ ընկեր փառաց քոյին :

Աւետիս քեզ տիրուհի կոյս
 Յարեաւ որդին քո տէր Յիսուս :
 Քրիստոս յարեաւ ի մեռելոց
 Աւետք էից եւ եղելոց :

Աւետիս ձեզ երկինք սոյժառ
 Յարեաւ բնակիչն ձեր Քրիստոս .
 Աւետիս քեզ երկիր խոնարհ ,
 Յարեաւ փրկիչն քո Քրիստոս .
 Աւետիս ձեզ ամէն աշխարհք ,
 Յարեաւ հաստիչն ձեր Քրիստոս .
 Աւետիս ձեզ լոյսք եւ խաւարք
 Յարեաւ արեւ ձեզ նոր՝ Քրիստոս :
 Աւետիս ձեզ , ո՛վ կենդանիք ,
 Յարեաւ Քրիստոս , ոչ մեռանիք .
 Աւետիս ձեզ եւս ո՛վ մեռեալք ,
 Յարեաւ Քրիստոս . լիջէք լուծեալք :
 Քրիստոս յարեաւ ի մեռելոց
 Աւետք էից եւ եղելոց :

ՔՐԻՍՏՈՍ

ՅԱՐԵԱԻ Ի ՄԵՌԵԼՈՅ

Միգահալածն արփւոյ նմանեալ արեւու՝
 Եւ թափանցիկ ընդ շիրմին փակս ահարկու՝
 Իբր ի թիկանց լերանց մայրեաց վարսահոծ
 Եւ բարդ ի բարդ միգաց մղեղաց վարելոց ,
 Երեւեցաւ լոյսն յարութեան .
 Ծագեաց արեւ կենդանութեան :
 Եւ որպէս վարդք վառեալք ի նշոյլս օրաբերս՝
 Եւ ցօղադիներ յամպոց թափին ընդ եթերս
 Կամրաթեւեան մշտամանուկ հոյլք խարտեալ
 Ի խառնարան կենաց մահու հիահրալ՝
 Ի գերեզմանն կենսակիր
 Որ խանձարրեաց նոր մեզ զերկիր :
 Ճաճանչագեղ ճարտարք , հրաւոր ձեռնաւորք ,
 Հաշտեալք ընդ մեզ աեսիլք երբեմն ահաւորք ,
 Տապալեցէք զգերեզմանիդ կափարիչ ,
 Բացէք զտանիս մահու , յերդիս լուսաթուիչ .
 Ոչ եւս մահու իցէ թաղար
 Որ ընձիւղեաց մեզ կեանս դաղար :
 Բոցացընցուղ յարուցելոյն լոյս կանխիկ
 Զբահանայիցրն նախանձու լոյծ կընիք .
 Պահապանացրն զարհուրեալք եւ փախեան
 Զինչ վերջապահք մահուն արխուր տերութե՝ -
 Է՛ջ հրեշտակդ էջ կաց ի վիմիդ
 Եւ հրաշացիր ընդ գործ հաստչիդ : -

Անհուպ թաթիւք յեցեալ ծըղեօք ըսպիտակ
 Յեզր ի վիմին տիեզերազուարճն այն հրեշտակ ,
 Սաւառնաձայն թեւոցն հանդէս առնելով
 Եւ կարկառեալ 'դ երկինս , երկիրս եւ ընդ ծով ,
 Գոչէ 'նդ շրթունս վարդասփիւռ ,
 « Յարեա՛ւ Քրիստոս կեանք ընդհանուր » :

Ի յարութեան ձայնէն տիեզերք հռչակին .
 Ազամբառնայ զճանրացեալ գլուխն ընդ երկին ,
 Խըթէ ի կող կողաբուսին խարուսիկ
 Զանմահութեան մատուցեալ ստոյգըն խայրիք .
 Բանի յեզեմ հինն առադասա ,
 Եւ օձն առ դրամբըն կայ տապասա :

Նոր եւա , նորոց կենաց բարունակ ,
 Մայր աշխարհի խընդայ ծոցիւ կուսանակ ,
 Եւ քան ըզքոյր ծովահերձին թըմբկուհի
 Մեծանըւագս հարու աւետս աշխարհի ,
 « Յարեաւ որդեակն իմ միածին ,
 Եւ արհաւիրք մահուն անցին » :

Հոյլ հօստալիք ալէծրփեալք խառն ընդ ուս .
 Մագդաղենւոյն սրբեալ զանդուսպ արտասուս
 Սլանայ սիրոյն սլացիւք առ քորս ջայլամարս ,
 Ու առ կոչեցեալն ի Քրիստոսէ իւրեղ բարս ,
 « Փութացարուք ի Գալիլէ ,
 Քանզի Քրիստոս յարուցեալ է » :

Պընդեա՛ Պեարէ զտաժանակիր դարշապար .
 Ընդ Որոտման քաջընթացիկ զուգապար ,
 Որ առ անքուն սիրոյն քնարան կարկառեալ
 Եւ զտենչալին ոչ գտանելով ծոցընկալ՝
 « Արդարեւ սէրն իմ ոչ է ասա » ,
 Ասէ ցհաւատ թերահաւատ :

Զուրացութեանն արտօսը հերքէ սուրբ զայրոյթ
 Եւ զսարրասօք մահուն վաղեալ ծերն ընդ փոյթ՝
 Յուզեալ խուզէ յահեղասքանչ յատակին ,
 Յոր երէք օր տարածեցաւ Կենդանին .

Եւ զվայրապարն պատրուակ
 Թօթափէ յօդս ըզվարչամակ :

Վէմն հաւատոյ եւ ժիր սիրոյն արբանեակ
 Չեռն ի ձեռին փութան յընկերցն բանակ .
 Աւետարան լինին եւ ձայնքն եւ տարազ .

« Բաբունին յարեան եղբայրք , իբր ասաց ,
 Ելցուք ի վայրն ժամադիր .

Անդ է Յիսուս , մէք զն՝ թըմբիր » : . . .

Ի ժամադիրն , ի ժամադիրն անդր ի վեր
 Փութացարուք ո՞վ մահացուք տիրասէր .

Քանզի յարեան Քրիստոս ի յոյս մեռելոց .

Ո՞ւր արդ մահու յաղթուի . ո՞ւր խայթ դժոխոց :
 Յարեան Քրիստոս . դու սիրտ , ո՞ւր կաս ,
 Ընդ խընկաբերան հիմ գէթ չըդաս :

Զարթիր զարթիր ի արամութեան տաստանէդ ,
 Լուացիր ի զեղձ ու ի կող Փրկչիդ կենսաւէտ .

Վառեա զլապտեր սիրոյդ ի լոյս յարութեան ,

Ի կէտ խրախօցն ընթա՞ ի սար գալիլեան .

Լըսես հեռուստ զողջոյնս փրկչին՝

Յորմէ երկիր ու երկինք հընչին .

Արաստուղքն անդ են , խնկաբերքն անդ , հօտն անդ

Որ ի հովուէն զըրկեալ երթայր աստ եւ անդ .

Տիրամայրն անդ . եւ հրեշտակք անդ հուր թեւօք .

Եւ Յարուցեալն անդ փարելով ըզնոքօք

Կենդանարարն բարբառի ,

« Ես յարութիւն եմ աշխարհի » :

ՕՐՀՆԵՐԳ ՍԻՐՈՅ

Ի ՅԱՐՈՒԹԵԱՆ ՅԻՍՈՒՍԻ

ՅԱՐԵԱՒ ԱՍՏՈՒԱԾ

Չայն յարութեան լսելի եղեւ
 Ի տեղւոյ մահու .
 Եւ նորարոյս ծագեաց արեւ
 Ի մէջ մըթարկու :
 Արձակեցաւ հով կենսաշունչ ,
 Շունչք են համարձակ .
 Հաղածի ստուեր շիրմացն ի յունջ
 Ի վայրս անյատակ :
 Զարթնու բնութիւն , թափէ փութով
 Բզթանձրն թըմբիր .
 Եւ վարանեալքն սեաւ սրգով
 Պըճ'նին ի կարմիր .
 Կանգնին խոնարհ եւ արդմասիկ
 Հովտացն շուշանք ,
 Եւ ծիծաղի ծընդեալ ծաղիկ
 Ի ցող երփնազանգ .
 Յաստուածային արեան կիտուած
 Վառ առեալ վարդից ,
 Եւ թառամեալ դասակք հողեաց
 Ճախրեն թեւակից :

Չայն յարութեանն հրոչակի ,
 Հարրատանայ յոյս •
 Եւ արհաւիրք փախըստակի
 Խուճապեն ի դուրս :
 Կործանէ զվրան իւր բանաարկուն
 Չոր կանգնեաց յերկրի ,
 Եւ ժողովեալ զհաղբարն թաքուն
 Ի բաց վըտարի :
 Քանզի փրկեաց Յիսուս զաշխարհս •
 Սա մարդ է երկնից •
 Սուղաւ սատան յանդոյս սանդարս ,
 Խըցան դրունք ելից :
 Քանզի նրնջեաց ի խոր ստուերի
 Որդի Աստուծոյ ,
 Չյաւիտենից նրնջեալն յերկրի
 Չարթոյց ի քրնոյ :
 Եւ ահա սուրբ են երկինքս այս
 Ի մահուն թիւնոյ •
 Եւ ահա սուրբ է երկիրս այս
 Յանիծից նախնոյ :
 Պայծառացեալ բնութիւնս համայն ,
 Կոր է առաւօտ •
 Եւ սրբատաշ տապանակն այն
 Բուրէ խրնկահոտ :
 Անմահութեան հոտ հարկանի ,
 Հանգա զմայլեսցուք •
 Ի Գալիլեայ դրախտ նոր բանի
 Հանգա փութասցուք :
 Ելէք եղբարք յոստ անտառին ,
 Ելէք քորք յովիտ ,

Հասեք ըլխայձն ինձ խնձորին
 Եւ զվարդն ի փրթիթ .
 Բողորեցէք սրակս ի ծաղկանց
 Անահ եւ ըզգոյշ .
 Զի Յարուցեալն ընդ այդն էանց ,
 Եւ գոսացաւ փուշ .
 Յամաքեցաւ ծառն չարին
 Պատուաստեալ ի խաչ .
 Զաղխեաց ըզգլուխ կամակորին՝
 Կոյսն պարտաշ :
 Յօրինեսցուք պարրս մաքուրս
 Քորք իմ եւ եղբարք .
 Հարցուք սրաիւ ծափս անարխուրս ,
 Զի բարձան զբժուարք :

Զայնն յարութեան ընդ տիեզերս
 Հրոչակէ զՅիսուս .
 Եւ դիտէ զնա Հայրն ընդ եթերս՝
 Որ հաս զարտասուս .
 Որոյ քակեալ խաչին նըզաւ
 Զամուրրս մահու ,
 Կորզեաց զգերեալս , աւար անբաւ ,
 Եբարձ յուս յաղթիու .
 Եհար ըզմահ , ըզմեղս ըսպան ,
 Ի գժոխոց վաղեաց . . .
 Ու երկինք ու երկիր գոն միաբան
 Թէ Յարեաւ Աստուած :

Ի ՀԱՄԲԱՐՉՈՒՄՆ ՏԵԱՌՆ

Համբարձէք միտք , համբարձէք միտք խմ ի վեր ,
 Համբարձէք ի սէր .

Ամբարձէք զսիրտ մինչեւ ի կայս հրեշտակաց ,
 Մինչեւ յինքն յԱստուած :

Հիմ խոնարհեալ դեգերիս սիրտ ի ստորեւս .
 Ամբարձիր վեր եւս .

Ուր ցանկալին քո հանդիստ , լուսմին բարեաց ,
 Անդր ի վեր սմբարձ :

Տեսանես ո՞ր չափք են ելից ի բարձունս ,
 Յերկնից խորութիւնս .

Վայր՝ յոր անդեղ ոչ ժամանեաց ակրն սուր
 Ի ոչ արձւոյն փետուր .

Պայծառութիւն տարածեալ անդ համաափիւս
 Եւ ճաճանչք բիւր բիւր .

Լոյս ի միջին ծաւալեալ գողար եւ քնքոյշ
 Ի հայել անոյշ .

Սպիտակարան հուն լուսակիղն ի նրմին
 Եւ հետք անբրնին .

Եւ անդ հրեղէն զօրացն յերկնից ստորիջուք՝
 Վերելք երկնաչուք .

Եւ կերպարանն աստուածափառ ի միջի ,
 Որ էրն ի խաչի .

Այն որ սահեալ ի բարձանց՝ հան ի բարձունս
 Ըզխոնարհ բնութիւնս ,

- Եւ զառ ի դժոխս անկեալ մաճեալս հաւասար
 Իւր պէս բարձր արար .
- Ջրոցածօճակ քերովբէին՝ կապեալ սուր՝
 Թօթափեաց ըղհուր .
- Եւ սլացաւ էջ ի ծառատունկ սրգազգեաց
 Գրախափն՝ զոր արնկեաց ,
- Հար տապալեաց ըղբարձրածաղկ ծառան երկու՝
 Ըղկենաց եւ մահու .
- Տաշեաց զուգեաց ըղքառաթեւն այն գործի
 Յոր կեանք մեր փորձի .
- Ու առեալ՝ ստ անձին որպէս հրակայ զայնալիճ՝
 Կանգնեաց ի մահիճ ,
- Տարածեցաւ եւ պրկեցաւ սրնդապինդ .
 Արհաւիրք եւ խինդ . . .
- Արեգական տեսեալ շրջէր զդէմս ի մութ ,
 Վէմ՝ գրգէր ի դուժ .
- Եւ նա՝ րտասուեաց , գոչեաց , նրնջեաց՝ մահու քուն
 Յարեան թաթաղուն .
- Էջ ի թըմբիրս զուարթունս , զարթոյց ըղթըմբ-
 Եւ յարոյց ըզմեռեալս : (րեալս
- Ջարհուրեցան սանդարամետք սոսկալիք
 Եւ զերծան հոգիք .
- Յաստուածախառնն թմբրութեանցն եւ զարթեաւ .
 Մահ ետես պակեաւ .
- Ընդ ամրափակ կարկառակոյտ վնասըլուրս
 Ելանէր ի դուրս ,
- Ընդ արշարոյսն առաւօտին բացեալ թեւս
 Թօթափէր թեթեւս ,
- Ջարդ՝ քան զայգուն քրքմահանդէրձ ծիրանի
 Արկեալ գեղանի .

- Եւ զսեւաշուք գործին փոխեալ լուսանիւթ
 Էսա ընդ անութ :
- Ի գալիլեան դէմ եգեալ սար ի դիտակ՝
 Վընքեաց զիւր վաստակ .
- Եմուտ ի գիրի աստուածայինն աղեղան
 Հաստ նեա փայլական .
- Թըսեալ , հարաւ ընդ դրունս երկնից մարդարգել .
 Արար մուտ եւ ել .
- Եւ ժողովեալ որպէս հաւ զձագըս զիւրով
 Զսրբոցըն ժողով ,
- Ահա թըռչի երամովին բարձր ի մէնջ
 Ի վայրն հողետենչ :
- Վարմիր կաթեն կրկունք , կարմիր եւ դաստակ
 Վ իրօք կապուտակ ,
- Վարմիր կաթեն եւ տիգահար կողք փափկիկի ,
 Եւ սրբին հողիք :
- Հոյք շուշանաց վարդից սիւնն զիւրեւ ցիւր՝
 Հրեշտակաց իւր ձիր .
- Եւ հեղանաղ համատարած ի բազուկ
 Սրբոցըն դասուք ,
- Յաջ եւ յահեակ հերձեալ զերկինս խորագոյն՝
 Հուն գործէ սիրոյն .
- Յերանութեանցըն մրտանէ առագաստ
 Յաջ Հօրն սպարաստ .
- Ինքըն բաղմի , սուրբք ընկովաւ եւ զուարթունք
 Խաղան զինչ մանկունք .
- Եւ ի բարձանց արձակէ աչս յաղթական
 Ի վայր սիրական
- Ուր պանդրխտէր , կըրէր , սիրով մեռանէր ,
 Սիրով եւ յառնէր .

Տեսանէ զհէտք անորէնու-թեանցն աստուածեան ,
 Եւ զսիրողս ինքեան ,
 Ընդ նոյն շաւիղ կարգայ խրատոյս դաւ ըզհէա
 Յերկնից ժամակէա : . . .

Արդ ճն ի խաչ , սիրա , ընդ Յիսուս միացիր ,
 Եւ զոյգ ամբարձիր :

ԱՌ ՀՈԳԻՆ ՍՈՒՐԲ

Հոգիդ սուրբ, ո՛վ որ միայնդ ես հոգի,
 Փրչեա եւ յիմ հոգիս, եւ քեւ նորոգի.
 Ո՛վ որ հոգիդ իսկ ես հոգւոց ընդհանուր
 Եւ յամենայն ծաւալեալ կեանս՝ դործել հուր.
 Ո՛վ որ խաղաս յամենեօին եւ շարժիս
 Եւ տաս խաղալ շարժիլ վարել բնաւիս.
 Հոգի՛ լոցիչ ըստ սրտակերի քում ծնելոց,
 Երկնիչ ինքնին դու եւ բղխումն եղելոց.
 Հոգի՛ Աստուծոյ, ինքդ իսկ Աստուած,
 Եւ յանկից ածող ի դոյ զբնաւ հաստուած:
 Ո՛վ հոգի, կեանք կենացս ու անձինքս հոգի.
 Սէր ի սրբաիս եւ լոյս մըտացքս միգի:
 Ո՛վ հոգի, ամենալոյս կերպարան
 Յորմէ փախչին խաւար եւ թոհք խառնարան.
 Որ զամենայն հոգեւորես՝ յոր մերձիս,
 Յոյց հեռանաս՝ դարձուցանես յանշունչ գիս:
 Ամենաբաւ հոգի, ու ես եմ հոգի խուն,
 Այլ անբաւիդ սրտակեր, լինիմ քեւ անհուն:
 Հոգի՛ պէսպէս շնորհաց եւ հայր հեղութեան,
 Որ զանապատս եւ զվայրս սիրես լրօնելայն,
 Հանգիր հանգիր եւ ի հոգիս այս կարօտ,
 Որ յամենայն հանդէս՝ բնաւին անկարօտ.
 Աղաւնակերպ ի Փառակիցդ որ հանգեար
 Յորժամ իմովքս սրտակերաւ յերկրի դայր.

Եւ յիս՝ զնորայն կրնիք բերողս ի ջրին՝
 Հանդիւր եւ յիս հողիդ հանդարտ եւ լռին .
 Եւ թէ թընդմամբ թեւել հաճիս եւ հըրով,
 Երկնասիօսիկ լեզուաւ հանդիւր յիս սիրով .
 Որ զպարզախօս լեզուս եղեր անգիտաց
 Արքայութեանդ աւետարանն անկասկած .
 Բայց զաղխեալ բերան սրախ յօրհնութիւն
 Եւ երգեսցէ՝ սպառ անձն իմ՝ քեզ միաբուն :
 Իսկ որ յանդունդս հին խօլատանջ խռովակոծ՝
 Թեւատարած փարեալ փրչեալ սիրաբոց
 Զեռանդնապտոյարն ցածուցեր փոթորիկ,
 Ու ի հրաշազարդ լանջացդ հատեր լոյս քաղցրիկ,
 Ի տատանեալ ախպ տարերաց թաքթաքուր
 Թարքմանեցեր զաստուածութիւնդ ընդհանուր ,
 Փրչեաց , շրջեաց , խաղա սլացիր դուն եւ յիս ,
 Լըցցի , տեսցէ , կեցցէ եւ իմ՝ քեւ հողիս ,
 Որ խորախոր առանց քօ վիհ է ունայն ,
 Հողխացիր յիս , եւ ստանամ զամենայն :
 Տաճար է քեզ սիրտս այս , եկ նիստ ի տան քում ,
 Կացո՛ սրահնակ գրբանցս ըզնորհքդ անպատում .
 Ընդ որ մտանես դուգ՝ մի մտցէ՝ նդ այն օտար ,
 Այլ համարձակ քեզ լոկ իցէ ճանապարհ :
 Հողիդ Աստուած , յիշեա՛ զ՝ իմ իսկ ես հողի ,
 Քեւ կեաց եւ քեւ անձն իմ շարժի փոքրօգի .
 Հանդա սլացեալ ի հրեղինաց քոց կառաց
 Հանդիւր հեզիկ եւ ի հողիս խոնարհաց .
 Կամ ի ծրբար թիկնամիջաց քոց անծայր
 Բարձեալ եւ զիս խաղացո՛ յով եւ քօ վայր :

Ի ՏՕՆ ՄԱՐՄՆՈՅ ԵՒ ՍՐԵԱՆ

ՅԻՍՈՒՍԻ

« Ի յերկրի երեւեցաւ եւ ընդ մարդկան շրջեցաւ : ԵՐԵՄ .

Ընդէր փոխեալ տիեզերացրա սպասկեր ,
 Երկինք խոնարհք , երկիր այսօր ձիգ ի վեր .
 Վերինք , ներքինք , աջ եւ ձախ մի տուն յամայր ,
 Յոր հըռչակի հասարակաց տէրն եւ հայր .
 Այն որ թողեալ զյաւխտենից զօրութիւնս
 Գայ հեղաձեւ ի մահացուաց բնակութիւնս .
 Ըզմահացուի առեալ զմարմինն եւ զարինն
 Յանմահական կոչէ ի տօնրս սիրուն : (բիր ,
 Եւ զարթնու աղգ մարդկան , մերժէ զհին թըմ
 Եւ ամենայն հասակք այսօր զուգակիր .
 Մայր եւ մանկիկ , այրաքաջ , թոյլ ալեւոյթ ,
 Ժիր սպառանեակք եւ օրիորդք փոյթ ընդ փոյթ ,
 Խաղմից ծառայ , երիվարաց յոխորտ սկտ ,
 Եւ աղօթիկեր խաղաղութեան վարդապետ ,
 Ընդ աղքատին ընթացակից մեծատուն ,
 Որք եւ այրի , եւ խընամոտ ձեռընտուն ,
 Ամենեքին յաստուածայինս երթան տօն .
 Ամենեցուն մի սիրտ մի սէր մի սաշտօն .
 Խաչ եւ սուսեր գիրիս արկանենն ի համբոյր ,
 Չըկայ իրտիր այսօր ընդ բահ եւ փետուր :

Զինչ առաւել է առ հաստչին հող քան հող,
 Կամ թէ բեհեղ իցէ քան զձուհնձրն փայլող .
 Եւ ոսկեմանք թէ հիւսք եւ զարդք ծածանին՝
 Ի հրապարակս ու ի զգաստացեալ շինանին ,
 Եւ քարեքիկ թէ ժողովուրդն ըզգենու ,
 Շնորհակալիք են Տեառն եւ ցոյցք օրհներդու :
 Յաղթանակաց սլարդեն նըշանս եւ տաճարք ,
 Դրօշք եւ նափորտք , փողփողին ջահք եւ լամ-
 Եռապըսակն եկեղեցի յայն ժողով (պարք .
 Գայ զինուորեալն եւ վըշտակիրն եւ յաղթող .
 Նախ վերնայինցն երանելեաց անդ հոգիք
 Հանդէս առնեն ի սուրբ պատկերս եւ կրնիք .
 Եւ կիսասուգ՝ երկրորդ՝ մաղթողք ջահակիր՝
 Հրեշտակք են անդ հոգուց բանտին վըշտակիր .
 Խուճք արարեալ նոքօք՝ երրորդ՝ եւ մարդկան՝
 Իբրու զինուորք կենաց մահու մէջ խաղան .
 Ընդ ծաղկազարդ մարդապարիսպ ճանապարհ
 Տանին զՕծեալն յաւիտենից սիրաբար .
 Նորոյ Ղեկայ որդիք զուարթնոց դասակից
 Նորոյ հընչեն Սիովնի զերդ սիրալից :
 Անդ մեղրասիրտ մատաղերամ՝ մանկուծիւն
 Իբր ի սըրտէն սփռէ ծաղկունս երպինագոյն .
 Եւ քան ըզլարդ զիմացն հաճոյ տայ՝ ու Աստուած
 Քօղ ըզգըլիսով կուսան՝ ըզախան ամօթլեած .
 Գերեզմանի դրացի հասակ երկրապիշ՝
 Զանամահուծեան հոգւոյն առնու անդ ըզնիշ .
 Ոմն ըզհըրձուանս մատուցանէ , ոմն ըզսուգ . . .
 Հոսեցարճէք եւ դուք իմ գաղտ արտասուք : . . .
 Աստուած փառաց ահա իջեալ շըրջի՝ նդ մեզ
 Հիացարճէք երկնից ու երկրի սասարէզ .

Երկինք գըլեալք յերկրէ՝ կացէք ի զընին .
 Երկիր , ուրախ լեր եւ լճեր քում Արարչին .
 « Խաղաղութիւն ձեզ մահացուք , ես եմ Տէր
 Որ ըստեղծի եւ փրկեցի զհոգիս ձեր .
 Ոչ շանթեռանդին ցաամամբ դամ յաստեղաց
 Այլ հեղաբար իբրեւ ի մէջ սիրելեաց .
 Ես հաշտութեան եմ Աստուած , հայր եմ սիրոյ ,
 Անցէք որդեակք , վառեալք ջահիւք հաւատոյ .
 Ուրախ լերուք արդարք , ահա վարձքն ձեր .
 Մեղաւորք , բաց են եւ ձեզ դուժ իմ եւ սէր .
 Ո՛ր որ սըգայք եւ լայք , հատէք զարտասուս ,
 Ես խնդութեանց սըրբոց բըղխեմ ձեզ աղբիւրս
 Եւ դուք որ գայժ ի գայժ կրկին հեոոց մէջ
 Կայք տատանեալք՝ առէք ըզոյս իմ անշէջ :
 Յին ո՛վ մարդիկ մօտ մատերուք եւ տեսէք ,
 Անահ՝ այլ սուրբ համբոյրս ինձ տուք եւ առէք .
 Ահա մարմինս որ փոխանակ ձեր մեռու ,
 Ահա արիւնս բուժիչ հոգւոցդ ըզճարաւ .
 Ճաշակեցէք ու արբէք եւ կեայք յաւիտեան :
 Զի յարութիւն եմ ձեր եւ կեանք անլախճան :
 Յինէն ողջն տուք եւ մահուն ի դադար .
 Ինեւ՝ մեռեալք են կենդանիք հաւասար .
 Որք հաւատայք եւ հեռելիք ձեր փրկչիս
 Վայելեալիք յարքայութեան իմում զիս » :
 Սիրաք քաջայոյսք թեթեւաբեռն զառնան
 Իբրեւ գումարք ի հանդիսէ յաղթական .
 Պանծան յԱստուած որ երեւեալ ի յերկրի
 Շըրջէր ընդ մեզ իբրեւ եղբարց առ երի .
 Շարժեալ խըմբիւք իբրեւ ալիք յովկիան
 Երկըրսպագեն գարշապարացն աստուածեան .

Խառնին յերար խունէք և ծաղկունք Երմիներանդ,
 Բարբառ շրթանց եւ շեփորոց արձագանգք .
 « Փանք եկերցդ առ մեզ փրկչիդ Յիսուսի,
 Փառք սուրբ խաչիդ՝ զարդու հըզօր քո ուսի .
 Փառք սուրբ մարմնոյդ, կենդանարարդ եւ արեան,
 Փառք սուրբ սիրոյ սրբաիդ, փանք, փանք յա-
 (ւիտեան) » :

1844

ՏՆՕՐԻՆԱԿԱՆՔ

The first part of the paper is devoted to a general
 introduction of the subject, and to a statement of the
 objects of the present investigation. It is then
 divided into two parts, the first of which
 contains a description of the apparatus used,
 and the second a description of the method
 employed. The results of the experiments are
 then given, and a discussion of them follows.
 The paper concludes with a summary of the
 results, and a few remarks on the
 general character of the phenomena observed.

Կ Ո Ւ Ս Ս. Կ Ս. Ն



ՈՂՋ ԼԵՐ ԹՍԳՈՒՅԻ

Ողջ լեր թաղուհի
Երկնից եւ երկրի •
Գլթուլթեան նրժար
Մահացուաց թըշուառ •
Քաղցրութեան աղբիւր
Ի ցաւրս մեր բիւր •
Ողջ լեր մայր ողջ լեր •
Ապաւէն յոյս մեր :
Աւ քեզ բարձրագոյ
Սըրտիւք ի թընդոջ
Դրախտէն արտալած
Յովիտս արտասուաց
Որդիքս Եւայի •
Վարդամբ թաղուհի •
Ողջ լեր մայր ողջ լեր
Ապաւէն յոյս մեր :
Լալահառաց քեզ
Մաղթեմք՝ մօրըդ հեղ •

Մատանց տատանմամբ
 Սիրոյդ ի պաշտգամբ
 Ձրգեմք ի բարձունս
 Զուռուցեալ աշկունս •
 Ողջ լեր մայր ողջ լեր
 Ապաւէն յոյս մեր :

Միջնորդ առ Որդիդ
 Լեր գեռափրթիթ ,
 Առ քաղցրըն պըտուղ
 Ծոցոյդ շնորհաբուղիս ,
 Ի վիշտըս մեր դիւր
 Շնորհեա մըտադիւր •
 Ողջ լեր մայր ողջ լեր ,
 Ապաւէն յոյս մեր :

Եւ ցոյց մեզ զՅիսուս
 Յանձատման հողւոյս
 Ըստ խոստմանց նորին ,
 Ընդ սուրբս յեթերին
 Օրհնել ըզնա , զքեզ
 Սըրտիւք սիրակէզ •
 Ողջ լեր այժմ յաւէտ
 Մայր մեր անձկաւէտ :

ՅԱՆԱՐԱՏ ՅՂՈՒԹԻՒՒՆ

ԵՒ Ի ԾՆՈՒՆԴ ՍՐԲՈՅ ԿՈՒՍԻՆ

Աստուածային հաճութեանց դեղածիծաղ ծիրանի,
 Որ զորորախօք մըրբայօն յաւիտենիս հարկանի
 Փայլատակեալ անթափանց,
 Եւ հուս՝ թըւիս առնել զանց •

Յոր կառուցեալ մըշտաշարժդ՝ եւ ճապաղեալ յան-
 քոյթ խաղ

Մանրածաւալ վէտրս վէտրս ճօճաս կաս եւ խաղաղ,
 Ի յաղտաղտուկն ի փրփուր
 Քան ի մորէն վառեալ հուր •

Ի տղմասիկ յատակաց ծովակենցաղ անդընդոց
 Իբր յանկարծոյն մարգարիտս այս վերբերեալ լու-
 սածոց,

Ընդ որ դըտոշն հիացաւ,
 Զի ոչ գործեօք ըստացաւ •

Ըզխայծ եւ ցանց սըփուեցին մարդիկ զմըրբիկեալ
 մըկանամբք •

Յալուց օդոց փութացեալ վարդ ժըպտեցան կու-
 սան ամբք,

Ամբք որ շիկնեալ ընդ Եւայն
 Ղօղեալ կային ցարդ ունայն •

Եւ տէր եհերձ զամպս յորովս, եհերձ զալիս նա
 բաղում

Եւ որսացաւ զգեղազանն ի դոյս փառացն անաղա-
 տում •

Բլբլեզ չքնաղ օրիորդ
Քան ըզբնութիւնս սահահորդ .

Ազամային ոչ բաւեն աչք յեութեանրդ քրնին ,
Բնդ այնքան հրաշս հանդուրժել իսկ ուրանայ եւ
երկին .

Սխրանալ լոկ եւ հայել
Այս եւ վերնոցն է վայել .

Այլ է հեղիկ քո նծայման , ի ծաւալէն յերկիր
քում .

Իբր արշալոյս վարդահաս , իբրեւ ըզցօղ է քըր-
քում ,

Սարսեն բնութիւնք ըստորին
Եւ յաւիտեանքն հաստատին :

Անմահութեանն արեւու՝ յոր Տէր հաստեաց զմար-
դոյն զարմ .

Եւ բանասարկուին դրժանօք խաւարեցաւ սպաժամ ,
Վանեալ դու զդարն հիւսիսեակ
Ծագես անմուտ արուսեակ .

Եւ յանդրանիկն ի նըշոյլ կենսացրնցուղ ակին
քում .

Վանեալ ըստուերքն երկրամածք ծրարին ի վայրս
սպառում ,

Ծրարին զաչօք գտողին
Որ արօսեակն էր նախկին .

Ի բարձրագոյն ծագս՝ յոր կալ բաւեր բնութիւն
եղական՝

Անդ հաստեցաւ հրաշափառն ի զօրութիւնս վեր-
նական .

Մի կէտ քան զինքն ի վեր կայր ,
Եւ այն Աստուածն էր յամայր .

Ասաց շարժել քայլ մի լուկ ու ի դահ բազմել Որեկին .
 Ընդ սրասուսանդանն հրաշալի հարեալ՝ անկաւ յալա
 խորին ,

Եւ խորք բացան ընդ նովաւ ,

Եւ յատակացն ոչ է յաւ .

Անտուստ զհրապարասրն շանթեալ խորհուրդս հրա-
 կիծ օձաձեւ՝

Ու ի տարրական գրրգալիս գեղեալ զլեզուն մահա-
 թեւ ,

Զարգեւականն էօծ խայր

Կարթեաց ձրգեաց զմարդն ի վայր :

Ի խորագոյն արդ խանթից կորաքամակ մարդկութե
 Նոր դու հատեալ արուսեակ ի գերունակ կառչիս
 կայն ,

Խոնարհութեամբ ինքնաբոյս

Մըղեալ յերրեակն անդր ի լոյս .

Յորմէ սրբուեալ զկենսածուգ ի խորս խորոց ճա-
 ոագայթ ,

Զարթնու եւ կոյսն օձախաբ՝ որ ի մրգոյն որոգայթ
 Փակեաց զոր բայցս եւս կամէր

Եւ բանայ՝ ըդ քեւ զաչս ի վեր .

Իւրանըման յերեւոյթ եւ գերագոյն ի հաստուած
 Տեսանէ զկոյսդ անարատ , եւ տեսանէ անդ զԱս-
 տուած

Եւ ճանաչէ զքեզ կին կոյս

Օձին ջաղխող խորասոյղ :

Շունչ աստուածեան իջանէ յաղամային նոր շըր-
 թունս ,

Սանձակոծեալ ըղտըութիանս եւ լուծանէ զհին եր-
 կունս .

Ծընունդք շնորհաց արձակին ,
 Դրունք դրախտին ոչ եւս փակին : . . .
 Բարգաւաճեաց դու աճեաց , եւ խոնարհեա 'ւ բար-
 ձըր լեր
 Արեգական անձկալոյ սպարաստեալ ծոց լուսա-
 բեր ,
 Յուսոյն կենաց արշալոյս
 Ու անմահութեան լեր մայր կոյս :

ՅԱՆՈՒՆ

ՄԱՐԻԱՄՈՒ ՏԻՐԱՄՕՐ

Այն քաղցր որ յերկնուսա ղողանջ,
 Այն քաղցրը դռնչիւն յականջ,
 Զոր լար անմահիցն ի սէր
 Այսօր յարեւուն ի լոյս
 Գեղեցիկ հրնչելովն ասէր,
 Այն քաղցր էր անունդ, ո՛վ կոյս :
 Բզքեզ ձայնէր ամպն առ ամբ,
 Բզքեզ երկնից ծիրն ողջամբ •
 Զեփիւռ շունչ առ շունչ թեթեւ
 Բզքեզ Մարիամ երգէր •
 Պարզեալ ծիծեռան ի թեւ
 Բզքեզ Մարիամ ձայնէր :
 Շաղ շաղ յաստեղաց ցօղել
 Անունդ առնէր ել եւ ել •
 Տեղայր յամպոյն ցօղն ի մարդ
 Զհովտին նրկարէր դալար,
 Ի թերթս ի ծաղկունս համակ
 Զանուն քո գրրէր պայծառ :
 Յերկնէ Մարիամ լըւաւ,
 Յերկրէ Մարիամ տըւաւ •
 Մի ձայն ես լըւայ, ձայն մի •
 Ամէն արարածքն ի շար
 Նրման եզեզանց հովուի
 Բզմիգ երգէին ըզՄայր :

Չըկայր չեղեցի եւ չեք

Անուն քան ըղբոյդ քաղցրիկ ,
 Փափկիկ , նաղինիկ , քընքոյշ ,
 Գողարիկ , երանիկ , անճառ .
 Քան զայն՝ ինքն Աստուած՝ անոյշ
 Երբեք ոչ յօդեաց բարբառ :

Ի ցանկն Ադենայ խրամաա

Ի ցանկն այն անկաւ խրամաա ,
 Ի ծառն անիծից էջ սուր
 Յորժամ Մարիամ հընչեաց .
 Փուշք մեր դօսացան արխուր ,
 Կապանք մեր զերծան ի բաց .

Գեղոյր գալարէր նըկուն

Յիւր փոր թափէր օձն ըղթոյն ,
 Հանդէս դրախտին տայր արտանն ,
 Եւ շատ ասպարէզք ի բաց
 Դընիւր մահացուաց կօխան
 Հանգոյն պայթուցեալ պարկաց :

Յեափն դըժոխոց կապանք

Ծանեաք զայդ անուն անքակ .
 Պըսան՛ Յիսուսի երկոց .
 Խաչիւն ամբառնայ որդին ,
 Գըրկօք ձըդէ մայրն ի ծոց .
 Հողւոց մեր նեցնէք կըրկին :

Զի սուրբ զի՛ օրհնեալ զի՛ մեծ

Անուն դրոշմեալ յայտա աստեղց .
 Ո՛վ լի խորհըրդով անհաս ,
 Անճառ սքանչելեօք զեղուն
 Որ բնաւ գըրկածես զաշխարհս
 Խընկեալ սրաշտեցեալ անուն :

Մանկիկ ընդ անուան մօրն իւր
 Ըզկոյս Մարեմու տայ զուր •
 Եւ մայրն եւ որդեակ եւ հայր •
 Գերի , աղաա , ճոխ ու աղքատ ,
 Մարտիկն ի մահուն իսկ վայր
 Կարդան Մարիամ անհատ :
 Յանուն Մարեմայ՝ հերձու
 Կաւազըն զանդունդ ծովու •
 Եւ որք աւազին դրբեն
 Անտանձ կապուտակ նրժոյգք՝
 Լոկ յայտ անուանէս սարսեն
 Փրփուր առ փրփուր անոյժք :
 Լընու սա զհիզին համբարս
 Որբոց ու այրեաց տայ դադարս ,
 Խառնէ յարտասուս սրգոյ
 Հեշտին տպրասամ կենաց ,
 Պայծառ դործէ զակն յուսոյ ,
 Եւ դիւր՝ ըզմահուն արկամ :
 Քանիցս եւ իմ սիրտ ի խռով
 Մինչ մաղձ դիզէր յիւրն ի ծով ,
 Յանկարծ զՄարիամ յիշեաց ,
 Անուանն հեղաւ յիս սուրբ իւղ •
 Լըռեաց շառաչուն մըրբկաց
 Սըրտիկս հանդարտ ել ի լիւղ :
 Մեղսիկ ի բերանս կաթեաց
 Մեղսիկ ըզըրթունս եթաց ,
 Լեզուս հրեշտակաց էր ըսր
 Յորժամ Մարիամ ասաց ,
 Բոլոր անձնրս մի բարբառ ,
 Բոլոր շունչս շունչ նուագաց :

Արդ ես դիւրադայթ մանկան
 Ի տխր բազմահայց լալկան.
 Կարդամ Մարիամ ըզքեզ
 Յամէն դէպս յամէն բոպէ,
 Իմ յոյս իմ նեցուկ դու ես,
 Ըզքեզ անձն իմ միշտ խնդրէ :
 Ո՛հ, զն՛նչ ցանկալի քան զայն՝
 Զի դու ասասցես միայն,
 Թէ Տէրն իմ Աստուածն Յիսուս
 Եւ այս վըշտահար սրբաիկ՝
 Զոյգ զիս կոչեն՝ մայր եւ կոյս .
 Ո՛վ ինձ աննրման որդիք :

ՅԸՆԾԱՅՈՒՄՆ ԿՈՒՍԻՆ

Ո՛վ է սա որ ելեալ դայ: — ԵՐԳ.

Յաստուածային ասպարէզ՝
 Ի քաղցր ի մօր գրգուանաց
 'Նոր աղաւնեակ թեւահեղ
 Թըռչի յայդուն անդ կենաց .
 Սպիտակածղի զոյգ նըմին
 Ելով ճակատն եւ հոգին ,
 Յանբրծութեան վառեալ զարդ
 Փրթիթն այտից վարդ ի վարդ .

Շուշանափայլ շող զիւրեւ
 Հրաժեշտ արեալ աշխարհի ,
 Ճախր առեալ հեշտ եւ թեթեւ
 Դէմ ի տաճարն Անմահի .
 Մոռացեալ մօրն իսկ ըզբուծ ,
 Նըւիրական ընդ հաւուց
 Ուխտ ի սրբբում դաբիրայն
 Նրատի մընչել լրուելայն :

Դեռ կաթնածիր է բոլոր
 Վարդապարտակ շրթներոյն .
 Մարդարտեայ յեռքն ի բոսոր
 Դեռ լըրացեալ չեն համբուն .
 Դեռ չունին աչքըն մեղոյ՝
 Բայց հայեցուածըս քընբոյ՝
 Եւ մանուշակք բըբացս այս
 Շարժլին ի ծովս շափուղայս .

Դեռ ի փափուկ թիկնամէջս

Եւ դեռ զուլամբ գեղեցիկ

Ոչ ծածանին յելեւէջս

Ոսկեփողփող հոսոսուիք .

Դեռ չըներեն բարձք կահիլիկ

Ծընրիկ ամեւ ժամրս ձիգ ,

Եւ ոչ բաղկուիք փարեւի

Ճօճեւ բուրլառ խընկալի :

Բայց գայ վըստահ ինքն առ այն .

Սըրբիկն ելով ի թընդի ,

Առ այն՝ որ ետ զամենայն ,

Դիմակն ելով ի խընդի .

Լուծանէ զլար բերանոյն ,

Լանջքըն ծըփան եւ ցածնուռն .

Սիրտ ի լեզուին վազէ ծայր . . .

Լնւր ուլ տաճար վեհավայր .

Եւ երաժիշտ սրովբէք դուք

Անմահ ունկան հեշտարար ,

Եւ դուք այժմիկ տեղի տուք

Առ աննրմանս այս քընար : —

Ամբիճ , դո՛ւ եկ , դու խօսեաց .

Զինչ առ հանուրց տէրն Աստուած՝

Դէմք ամօթլեամ ի հայել

Յառաջ մատչիս ընծայել : —

Յայնժամ զհողին սիրածայր

Ամփոփելով յաչքն ի վեր ,

Զմատաղ ծըղիսն ի մի վայր

Զանաղա լանջօքն ոլորէր :

Մի հաղ բըբօքն ընդ երկին

Ծառալանայր կաթողին .

Անդէն բերիւր ի խոնարհ
 Որպէս շուշան ցողաշար :
 Ոչ հընչեաց ձայն ի յարկին .
 Ոչ եւլ յուխտէն այն մըրմուռնջ .
 Այլ մինչեւ յունկին Անմահին
 Եհաս բարբառ հողեշունչ :
 Եւ ակնարկեալ ի բարձանց
 Յանշամանդաղ կուսին լանջ ,
 Եւ զոր ի նրմայն սուրբ նըւէր
 Հեաազօտեալ՝ ինքըն Տէր ,
 « Ո՛վ, գոչեաց , կոյս խկաճեմ ,
 Քեւ այժմիկ բաղդն Ազամաց
 Ի բընաւորն իւր Եդեմ
 Գարձ առնէ հեշտ եւ կամաց .
 Իսկ խընկեւըցդ զոր ետուր
 Ծոցիդ՝ չնք այլ աըրխտուր ,
 Բայց զի գահ՝ մեծ քան զերկնի
 Յայսմ հեռէ դա՛ մեզ լինի » :

Ա.Ի.ԵՏՈՒՄՆ

Ուրախ լեր բերկրեալդ , Տէր ընդ քեզ :

Անդընդայոյ՞ղ ակն , համապարփակ սաւառնում ,
Որսորդ յոչէից , թոհից բոհից այցարար ,
Խաղաղութեան ձայն ծրփեալ նիւթոց ապառում ,

Ամենայնի կենարար

Հողի՞դ , հայեաց ի յաշխարհ .

Տարերք տխրորակք բախին , կուտին եղերունք ,
Դանդիւ թանձրամած հետախաղաղ առնէ զսա ,
Արփւոյ շնորհալոյս ղողեալ՝ յողան խրոխտ ձմե-
րունք .

Մըրրիկք մըրրկաց ի վերայ

Սուգ ի սըգի դիզեալ կայ . . .

Ահա լուսակիզըն կէտ , սեղան ողորոյ ,
Սպիտակափայլ թառ , անբրծութեան բուն դադար ,
Որ զայսքան հերձեալ ժըխոր ժահից դիզածոյ

Վերաթեւէ կայ հեզիկ

Յամէն աղտէ զերծ սըրբիկ .

Յոչէից թափեալ զաշխարհս երբեմն ու ի վըհէն ,
Ի ջուրց հեղեղաց երկրորդ ու ի բոււրն մեղաց ,
Յանյուսութենէ երրորդ սովաւ թափեա՛յ յսրէն .

Ո՛վ հողի , հայր շնորհաց ,

Հանդիւր ի կոյսդ ամօթխած :

Ուրախ լեր բերկրեալ միակ տախտակ անտրխուր
Յոր յոյս մարդկութեան անկեալ ելցէ յանդորրու ,
Միակ ոսնադիր հաշտից հաւուն այն մաքուր՝

Սաւառնազարդ որ ի թեւ

Հարժեալ սլանայ ' ո քեզ թեթեւ :

Ուրախ լեր բերկրեալ, զոր երկիր ոչ տրամեցոյց
Զմահատիժ մըրգոյն ճաշակ շրփեալ շըրթանց քոյ,
Այլ միայն երկինք զըսքանչելիս իւր եցոյց .

Ուրախ լեր կոյս գերազանց

'Նորոգութիւն դու ազանց :

Ուրախ լեր բերկրեալ, ուրախութեան նորոյ ծայր,
Երկինք եւ երկիր յայսմհեռէ քեւ հրճուեսցին .
Ի քեզ զամենայն շնորհս բարիս դիտէ Հայր

Ի քեզ ածէ սուրբ Հոգին

Զյաւիտենից ծոցածինն :

Ուրախ լեր բերկրեալ, մի երկրնչիր մի խռովիր,
Աստուածային կամք ընդ քեզ հաճեալ ցանկացան,
Ծընցիս դու զՈրդին ի կուսութեանդ իսկակիր .

Միայն կամեայց սուրբ կուսան,

Եւ տիեզերք փրկեցան :

Խոնարհեայց գրչուիս նազելի ' լանջարդ մաքուր,
Արկ զակն ի խոնարհ ամբարձ ըզսիրտ քան զերկին,
Հողախաան յարտօսը հարեալ զշըրթունս քո ի հուր՝

Ասա երկնից 'նուիրակին՝

« Ինձ ըստ կամս Տեառն եղիցին » :

Ընդ կամարագեղ խոնարհութիւն քո սուրբ կոյս՝
Ահա սահեալ էջ ի ծոցդ անկաւ բարձրեալ Բանն,
Սըրտիդ թընդեալ՝ հան ըղջիթս ի վեր գերագոյս

Պատեաց զքնութիւնն Կահան

Ու ի նոյն Մարմիս եղև բանն :

Ամբարձ ի վեր զաչս եւ լանջ՝ տաճար տիրակիր,
Կամք քո զկամս լըցին եւ բանք ըզբան բարձրելոյն .
Խոնարհեցուցեր զերկինս, բարձեր դու զերկիր,

Բարձան անկէ՞ք մօր նախնոյն ,

Եւ մահացուն ցրնդի թոյն :

Ուրախ լեր բերկրեալդ արգ եւ տուր խրախ աւեախ
 Եւ ի լեռնակողմն , էջ ի հովիտս անդր Յուդայ ,
 Մասն յաստուածաարուի ընծա հրնչեցո՞ ձայն
 Թէ բացա՛ւ դուռն Եդեմայ (լսելիս ,
 Թէ բարձաւ լուծն Ադամայ :

Հրնչեցո զտուրք ծոցդ աստուածաձայն թրմբեկուհի ,
 Կայթեա՛ մեծացո՞ զՏէր զամբարձիչ խոնարհաց ,
 Խաղա՛ խաղացո՞ զհեա զգերծեալս նոր աշխարհի ,
 Անց պատառեա զծով մեղաց

Եւ հան յերկիր աւետեաց :

Բարձր եւ թուխ կոհակքն ահա ելին զիզացան ,
 Յաջմէ մահ՛ եւ մեղք ձախմէ սրնդեալ եւ պաղին ,
 Դարանակալն օձ նուրբ ներբանիդ կայ կոխան ,
 Խայտա՛ ի ծոց դու ծովին ,

Մարգք ընդ օտիւքըզ ծաղկին :

Երանի՛ քեզ կոյս ի բարձրելոյն բարձրացեալ
 Անբաւին տարող ի խուն ծոցի մեծ ծըրար ,
 Յամայր երանի՛ քեզ հարսնուհի սրբափայլ .
 Թ՛ էր կորրնչել երկնի հնար՝

Ի քէն հաստիւր բիւր աշխարհ :

Ուրախ լեր բերկրեալ , յաւիտենից Տէրն է՛ նդ քեզ ,
 Չերկինս նա եթող , չթողու զքեզ խո՛րք հանդրս-
 տեան .

Խրախասցո՞ւք եւ մէք զի եղիցիս եւ ընդ մեզ .

Եւ հրնչեցուք յաւիտեան

Չաւետս անձառ բերկրութեան :

ՅԱՐՏԱՍՈՒՍ ԿՈՒՍԻՆ

Մոց ծովակին շափելուայ՝
 Ընդ որ յառեալ եւ սրբանիս ,
 Ասա՛ զուարթուն իմ սրբախ ,
 Ընդէր յափանց իւր զըմբուխս
 Մարդարտաց զոյգըս պանդուխտ
 Ի կարմրիկ դաշտարն տեղայ :

Ոչ այնպէս ջինջ այնպէս գիրգ
 Արշալըրչոց կայ ցօղիկ
 Ի շուշանին նուրբ ծրղիկ ,
 Կամ ի վարդին ծիրանի
 Մինչ այգն աւուր ծընանի ,
 Արպէս այդ հատք երկկարգեք :

Ոչոռն ոչոռն ասա՛ Էր
 Վիժեալ կայլիցն արտասոււայ
 Ի սիրակաթ կոյս աչայ
 Մինչեւ գիմացն ի սաորոտ ,
 Անդ տատանին երերկոտ
 Աստեղց հանգոյն ի յեթեր :

Բրբացն հանգէտ սրբատուչ
 Թըւի զգայուն մէն մի շիթ .
 Բրբացն հանգէտ անբըթիթ
 Զիս նրկատէն այնք պայծառ ,
 Քաղէն զոգւոյս տուրեւառ
 Եւ խոռովի սիրտ , խոռովի շունչ :

Ո՛հ , գիտացի , աւանդ զիս .
 Վասն իմ են այդ արտասուք

Բուժեւ զհոգւոյս իմ պասուք .
 Այլ յաննըւէր ի սրբաէս
 Խիթալով՝ հան հախեալ կէս ,
 Չիշխեն հաթեւ, չիշխեն յիս :
 Մի Մարիամ, մի ու մայր .
 Երկիր եմ կորդ քսամնափուշ,
 Այլ ի կայլից քոց քնքուշ
 Փթըթեցին յիս վարդք քրքում,
 Բերկրեցի սիրաս այս տրտում
 Տողեալ ի քէն սիրաբար :

Ի ՅԱԻՍ ՏԻՐԱՄՕՐՆ

Ի ԲԵՌԻԿԵԱՆ ԼԵՐԻՆ՝¹

Ո՛վ քաղցրաձայն սուրբ պրղընձիք
 Որ Մարեմայ յանուն անձառ
 Ոլորտացեալք յօգոց դաւառ
 Բլտոց ի բլուրբա ծաւալիք,
 Թափեալ ըզսիրաս՝ որ քաղցրաքուն
 Հուպ Տիրամօրն հըսկէր ի ծոց՝
 Ի յանրըջոց գիշերայնոց,
 Ի սուրբ վարէք տաճար նորուն •
 Իցիւ այգուն այգուն այգալէս
 Հնչէիք միշտ յունկըն սրտիս,
 Զ՛ ի նուիրականն յանվիշտ տեղիս
 Գայր բուժել զանձըն վըշտատես,
 Որ արդ նուաղեալ եւ չունի ժոյժ •
 Լըռեն այսօր մրմունջքն եւ ձայն,
 Զի զսիրտ քո մայր ետես յարեան
 Եօթնապիսակ վիրաց քընքոյշ :
 Ը իջո՛ զուարթուն զհոգւոյս պատրոյգ
 Զի տեսողիս զսիրան այն փափուկ
 Գըրեա թ՛ առ ցաւսըն խուսափուկ՝
 Մահուն միայն մընայ խարոյկ :

¹ Ի Վինգենտիա (Վիլնիցա) :

Պատառեաց լանջ, եւ սիրտ փախիւր
 Անդրը քան զմահ անդրը քան զսէր...
 Այլ եցէ վայր՝ զոյր այսքան վէր
 Ոչ բոլորեալ ունիցի զծիր :
 Դարձիր դարձիր այ հէգ եւ կաց,
 Ան անքըթիթ հայեաց լըռիկ .
 Զի մօր սրբաի վէրք գեղեցիկ
 է անփախուստ անգիմակաց :
 Ո՛վ որ զԱստուած ի քեզ տարար,
 Աներբ ժամուց տարրեալ սրտակեր,
 Ծոց երանեալ, մարթ քեզ իբր էր
 Խընդից փոխան ցաւոց գոլ վայր :
 Ն՝ աւանիկ չիք մասն անգ առողջ
 Եւ չիք հիւանդ, չեն գէմք կրկին .
 Այլ միատարր է ծով վըշտին
 Կապուտակեալ ալեօք սմբողջ,
 Յոր հոմաձայն քաղցր եւ արխուր
 Եօթնավրտակ թախծանաց ուխք՝
 Դարուց ի դար գան սրտաբուխք
 Սողոսկելով սիրափրրփուր .
 Ծաւալանայ ինքըն լըռիկ
 Զի մօր է սիրտ տեղիտալի .
 Եւ վարելով ալին զալի
 Չասեն ափունք, թէ սահման չիք :
 Ո՛վ մայր սիրոյ մայր խնդութեան,
 Ո՞ւ՞ ա՞ծ զաչօքդ այդ արտասուք,
 Ո՞ր զքո՞ ի դառն համակեաց սուգ
 Ըզսիրա՞ ցաւօք գերովկիան,
 Ուստի խաչին միայն սեաւ ժայռ
 Վերամբառնայ գըլսոյդ հանդիսա,

Զ' ինքնին ի քոյդ վըշտակո՞ծ սիրա
 Յօղես սիրուն յաչացդ ի ծայր .
 Ո՞ր բաւեսցէ գիտել անդէն
 Մառախլապատ ըզԳողգոթայն , .
 ԶՈրդւոյդ եւ քո զաղէտս համայն ,
 Եւ զոր աշխարհս անդուլ նիւթէն :
 Ո՞վ դու աման շուրջ մեղրունակ՝
 Յոր անիծեալ դարձոյց երկիրս
 Ըզգառնութիւնս իւր ծանրակիրս ,
 Զի՞նչ արասցուք քեզ միայնակ :
 Վայ մեղանացրս ժանտաժուտ
 Որ շնորհակաթ ի ծոցդ հեղին
 Զարդարադատ զիւրեանց բաժին՝
 Զի մի՞ գեհեանս անկցին վախուտ : . . .
 Այլ ո՞վ հրաշքս եւ սիրոյդ՝ Մայր ,
 Որ մեղուաբար ըզթոյնս ի մէնջ
 Քաղեալ ի սիրտ անգր որդեառենչ՝
 Յախորժ փոխէ խորիսխ յամայր .
 Եւ սիրաք յօժար անդըր բերին
 Կարօտք ցաւոցդ ի կայլակէն ,
 Անդ քաղցր է բնուն , բաց յանուանէն ,
 Նա՛ քաղցր եւ այն , զի է քոյին :
 Ե՛ս իսկ , ա՛հ , ես իսկ հասեալ դամ
 Զհետ ձրգելով սիրա՛ զոր սիրով
 Շահել թէ ոչ՝ գոնեայ ցաւով
 Սասցիս քեզ այսօր Մարիամ :
 Երկրրպագեմ՝ ձեզ , վէրք անմահ
 Որ ծոց ի մօրս իմ ճարակիք .
 Երանութեան իմոյ տեղիք ,
 Լէրուք ճեմոց ինձ եւ ի գահ :

Երկրորդագեղ ձեզ եօթնալոյս
 Ղամբարք ծոցոյն աստուածակիր
 Արտասուաղէղք , շողեալ յերկիր ,
 Կատարք յուսոյ ծովածփելոյս .
 Երկրորդագու գայ սիրտս հեռուս
 Ո՛ր անգաստանք ցաւոյ իմ մօր ,
 Սիրոյ ածեալ սերմանըս նոր
 Յոր հերկեցի մեղօքս հարուստ :
 Կա եւ ողջոյն զանգեալ յարասոր
 Եւ տարրացեալ սիրոյ ի հուր՝
 Սիրտ իմ հեղցի՝ սիրան այն մաքուր
 Ի սպեղանի փոխեալ անուր :

Ի ՆԻՆՁ ԿՈՒՍԻՆ

Լուս լիցի ծով, երկինք ու երկիր լուսեացեն .
 Հողմաւիք եւ հաւք՝ ի մայրս ի ձորս հանգիցեն :
 Քող առցէ վարդ յիւրըն շիկնեալ կարմիր ծոց ,
 Քող առցէ տիւ , քող եւ աստեղք հեղաբոց ,
 Համայն բնութիւն՝ թէ սեաւ ունի վարագոյր
 Աքողեսցի այսօր ընդ անդարձ կորուսան իւր ,
 Զի դըշխոյլին անմահարար շունչ քաղցրիկ
 Խոյանս ի բուն գաւառն առեալ՝ ըզմեղ լիք :
 Իմ զուգակիր դիպեալ հրաշից եւ ցաւոց՝
 Սիրտ ի թընդի , շունչ ի բերան , ակն ի կոծ ,
 Զի թաստանին սիրեմ ճեմիլ ի դըրախա՝
 Ուր նախ Անմահն ըզմահու զգաց դառնն բաղդ
 Եւ առնթեր լուրջ հովանեացն արգ նըմին .
 Մայր իւր զհանգիսարն մեծ հանգեաւ ի վիմին .
 Անբիծ շուշանն ի շաղ շնորհաց աճեցուն .
 Անդ անարխեղձ՝ այլ ս՛հ , յաչաց կայ թաքուն : . .
 Եւ զխորդ լիրբ եւ դաւնութիւն կենաց՝ մահ ,
 Զխորդ իշխեր ձրգել ըզգէնս քո անահ՝
 Ուր հայր քոյին մեղք չըկարաց ձրգել գիծ ,
 Այնչափ հոգին սրայծառ , մարմինն էր անբիծ .
 Աստուածութեանն սրպէս տաճար կենդանի
 Ոչ խորտակէ զորմունս շիրմին տապանի . (մաց
 Յուրա կափարիչն այն ցուրտ արգանդն այն վե-
 րջնա՞ ծածկէ որ զանսահմանին ծածկեաց : . . .

Մի ցայդ վայր ո՛վ մահ, առ զմանկաղ քո եւ երթ.
 Ե՛րթ ի տարտար, անդ ողբա զգէնս չարակերս.
 Տես մի գուցէ յամբառնալ ձեռն ի վրքին
 Կասարձքդ ի քէն խաղառ ի բաց կաստեացին,
 Եւ հրեշտակաց կախեալ յերկնից ի կամար,
 Որսքըդ յերկրի ազատեսցուք մէք յամայր:
 Չիք նեա՝ գիտեմ՝ ազգու լանջացն այն մարութի
 Որ հար վանեաց ըզգըժոխոց նիդս ամուր.
 Սակայն ըզնոյն նա զմահացուաց նընջէ քուն
 Որ զեղեմին եբաց ըզհետս անվարուն: . . .
 Զի՛նչ են այս հրաշք. պատմեցէք դուք ինձ եր-
 կինք,

Որ խոնարհեալ զուարթնօք ի վէմըն հայիք.
 Մի՛ եւ սըմա՝ մեղաց՝ զանապարտ ուսուլքն իւր
 Իբր Յիսուսին՝ արկան բեռինք մեր տըխուր. —
 Ո՛չ. զամենայն բարձ Յիսուս, նա զմահ եհար.
 Իսկ մեռանել Մարիամու իբր հընար:
 Աստուածախօս հողիք, լո՛ւռ կայք, ո՛չ գիտէք,
 Ու ի լարս անմահ՝ մահու հանդիստ թոթովէք.
 Լո՛ւռ լիցի ծով, երկինք ու երկիր լուեսցեն,
 Հողմունք եւ հաւք ի մայրս ի ձորս հանդիցեն.
 Եւ դուք զուարթունք լո՛ւռ լիք. թողէք իմ սըր-
 Տրուփեալ ի վէմա՝ հարցաբանել զխակուհիս: (տիս

Քաղցրասցի՛ քուն քո թեթեւ

Ո՛ր որ ի ծոց տապանիս՝

Իբրեւ հըրոյ հայրն արեւ

Ծայրս ամփոփեալ ծիրանիս,

Ծածկեալ յաչաց հողէից

Կաս հայելի անմահից.

Քաղցրասցի՛ր քուն սուրբ սրբախիզ
 Որ եւ ի նինջ խւր արթուն՝
 Ձերկրիա երկնիւք ի մի թինդ
 Հրնչեցուցեալ զէս համբուն ,
 Լար քաղցրութեան կայ միակ
 Տիեզերաց բովանդակ :

Քաղցրասցի՛ր քուն քո ո՛վ կոյս ,
 Ձոր ցողավար ամառոյն տէր
 Իբր ի շուշան դեռաբոյս
 Խաղաղական յիւր ծոցոյն
 Հոսեալ տարափ առ տարափ՝
 Ի քեզ հայի սիրատարի :

Քո՛ւն քաղցրիկ , քաղցր եւ ցօղիկ ,
 Ձոյր անմահից ցանկայ սլար
 Ըմպել ըզլիթ մի փոքրիկ
 Ընդ մահ գալով բիւր հաղար :
 Քանզի հեղեալ ի քեզ կայ
 Անդորրութիւնն յարակայ :

Ոչ ծածանեալ ծով ծրփոտ
 Համբոյր շրթամք սրղոխին
 Ի վարդամասն առաւօտ
 Կամ յակնարկել փայլածուին ,
 Երբ ի բիւրեղ փօխէ մեզ
 Ըզսարսուասէրն տապարէզ ,

Ի ոչ անտառին հովանի
 Յորժամ զեփիւռն առեալ հիւ
 Ըզաերեւովք տատանի
 Խոնջեալ թեւոցն ի կայախ ,
 Ու ամէն նրնջէ ծառ , սաղարթ ,
 Չեն այսգունակ քեզ հանդարտ :

Հանդէտ անհողմին նաւուն

Ի միջածուին ովկիան՝

Կառեալ կան բիբբդ եռանդուն

Յարծաթափայլ շափիւղայն ,

Յոր խիտ ըստուեր սեւորակ

Տեղան յունիցըդ կամարք •

Գաշախի հընձոց քոյդ ճակատ

Կռածոյ վարսիւքըն գանդուր ,

Տիպ որայից բարդ ի բարդ

Կայ ծաւալեալ ջինջ մաքուր •

Վարդայատակ սրահք երկու

Այտք քո թըւին սիրարկու •

Հարսին ի տիպ երգերգոյն

Ի կարմրալարըդ շքրթունա

Հըսկէ համեստ լըութիւն ,

Եւ փակ արկեալ քո զմատունա ,

Աստուածասուն ոչ շարժին

Լանջքըդ շընչով երկնային : • •

Իցէ թէ սիրտ իմ ցաւած , • • •

Այլ իշխեցինց զայն ասել •

Իցէ ո՛վ մայր , թէ յանկարծ

Ի վէմդ առներ մուտ եւ ել ,

Եւ ի միջոյ առաքանիդ

Գողանայր խուն մի հանդիստ :

Քանդի առ ի՞նչ դու ի մահ

Զանմահութիւն նընջեցեր ,

Բայց ի գործել զիս անահ

Առ դամբանին այն հրաւեր •

Չեւ ըզմահուն տըւեալ դաս

Թըւեր քեզ վարք քո սրակաս :

Սեր՝ քո կեանք , քո շունչ համեղ ,
 Նոյն եւ ի մահ քեզ յորդոր •
 Ի ծոց մահուն խակ ասեղ
 Հեռազօտեալ դու սեր նոր՝
 Կրթուցեր զաջն ապառուս
 Ի խոնարհել գրչխին քում •

Աստուածաշէն առապաստ
 Երկնանրման քո մարմնոյն
 Առ սերն յառեալ կայր պատրաստ •
 Գու՝ « Նրմանել լաւադոյն
 Ասացեր , տեսան իմ փրկչին ,
 Զայս ուխտեցի առ խաչին •

« Ինձ աղախնոյ իմ Որդւոյս
 Քաղցր է երթալ ընդ հետս իւր •
 Ի դաշտ մահուն խակ անբոյս
 Ես տեսանեմ ծաղիկ բիւր ,
 Որք ընդ օտիւքն աստուածեան
 Յէջն ի դրժոխս՝ ծաղկեցան •

« Գուք որ ըզտերդ ի Գողգոթ
 Յանհուն ի ցաւս իւր թողէք ,
 Ըզմէ այժմիկ կայք յողոյողդ
 Մօրս ըսարասեակ սերովքէք •
 Երթայք հարցէք ըզՅիսուս ,
 Ուր է բաժին իմ լեղւոյս » : . . .

Զննչ լեղի , զննչ ցաւ , սվ մայր •
 Քաղցրութեան դու ես աղբիւր
 Խոնարհութեամբ քով անծայր •
 Զլանանս զՈրդւոյդ խակ տրխաուր •
 Ըզգաւնութեան մեր բաժակ
 Ինքն քամեաց ցրյասակ •

Ան նրմանել քաջ ինքեան
 Շնորհէ սահել քեզ ընդ մահ .
 Այլ ցաւք չրկան չամբնան ,
 Հաս խակ կրեցեր զայն դու , ահ .
 Ամմահութիւն , խինդ եւ սէր՝
 Արդ ըսպասեն քեզ յեթեր :

Ահա մահուն չեւ մտեալ
 Հունչդ ի շրթանց քոց անբիծ
 Յաստուածային կայս ելեալ
 Ծիծաղեցաւ ի յերկնից .
 Երկրաւոր կեանքդ լուծան ,
 Անանց երկնիցն ըսկրան : . . .

Քաղցրասցի՛ քուն քո մարմնոյն
 Քան ըղմանկան մօրն ի ծոց ,
 Քան զաստեղաց զիշերոյն
 Քան ըզցօղոյ ի ծաղկոց : . . .
 Ահմ, բիւր քեզ բիւր երանխ
 Որ զԱստուծոյ մայր տանխ :

Երանի՛ իմ խակ սրբախ ,
 Եւզաբերից թէ հանգոյն
 Հրակեալ խրնկօք ի լալխ՝
 Ընկալցի զնախ քո ողջոյն ,
 Յորժամ ի կեանս յամերամ՝
 Բարձցի մարմինդ Մարխամ : . . .

Լուս լիցի ծով , երկինք ուերկիր լուեսցեն ,
 Հաւք եւ հողմուճք ի մայրս ի ձորս հանգիցեն .
 Ինձ լուեսցեն յայսմ հեակ խօսք կենցաղոյս ,
 Մի՛ լուայց ձայն , նա մի աեսից եւ ըղոյս .
 Սիրա իմ միակ լրուիկ իջեալ ի վիմին
 Անդ յանդորրու լուիցէ մօրն իւր սրբախն :

Ի ՎԵՐԱՓՈՒՈՒՄՆ

ԿՈՒՍԱՄՕՐ ԱՍՏՈՒԱԾԱԾՆԻ

Հընչմունք հրաշից բաժըշտական նրևագաց
 Սըրտազարթոյց հրաւէրք հոգւոյս եւ լուցկիք
 Անձառք ձայնից, վանգիւնք քաղցունք գեղեցիկք
 Որ զըզգալեաւս հեղուն մասամբ յեղակարծ,
 Յալուց խորոց յարուցանեն զիղձըս, մայր,
 Ձկաիլ՝ ուր սուրբն երգի անուն քո յամայր :
 Սիրտ ի յերկուս արգ կայ՝ նդ երկին եւ երկիր,
 Աստ՝ ըզմարմնիդ, անդ ի սրաշտել ըզհոգիդ,
 Խունկ՝ նրմա, փունջ սրմա կապել գեղափթիթ,
 Մերձ ի յերկինս, մերձ գայ զմարմնովդ աչացս
 Թէպէտ բոլոր ըզքեզ երկնից իղձք են իմ, (հիւ.
 Այլ զաստ մընալ մարմնոյդ՝ ոչ փոքր ախորժիմ :
 Այլ այժմ՝ ունայն եւ միջաբեկ գիրկք սըրտիս
 Ձկնչ լարաթափ քընար բաղխին ըզքո կնի : . . .
 Ձի՞ դուք հրեշտակք, զի՞ սարաւորք ձեզ երկնի .
 Ընդէր զըրկէք զանմըխիթար եղկելիս .
 Թէ թեւք թուուցիկք հասարակաց մօրս իցէք,
 Ես պատուանդան ոտիցն եղէց՝ թէպէտ հէք : . . .
 Ո՛վ լոյս փառաց, յոր կորընչի, մայր, հոգիս .
 Լոյս՝ որ ի հօր ծոցոյ թափեալ մինչ ի վէմդ .
 Եւ ընդ շաւղըդ շողջողուն տեսանեմ
 Ոչ մի զուարթուն իբր անդ ուրեմն յաւեալիս,
 Այլ երկնայինքն ամէն ի շող եւ ի շաղ
 Գան թաթաւեալք եւ ցօղէն ցօղըս խաղաղ :

Թաքչի տապան քաղցր արեւուդ կենախուդ .
 Ուր ընդ Կեփայն եւ ընդ սիրոյն աշակերտ
 Վարչամակի փոխան՝ վարդից լուկ ըզթերթ
 Եւ պատմութեան ես տեսանեմ՝ սարաբոյս : . . .
 Այլ ահա զօրք երկնից հանեալ են ըզքեզ ,
 Ո՛վ բերկրութիւն , թողուս զցաւոցս ասպարեզ :
 Ո՛հ , զի՛ չըքնաղ , ո՛հ զի՛ մաքուր զի՛ պայծառ .
 Գու նորահրաշ նորափետուր կոյս հարսնեակ .
 Վէհաւէսն հայր՝ ըզքեւ անկեալ հովանեակ ,
 Խմաստք յՈրդւոյդ սփռեալ , հոգւոյն շնորհք ան-
 Եւ զօրք երկնից ըզգագաթամբդ հրաշագան (ճառ .
 Հիւսակս յեւլով վարսից քան վարդ եւ շուշան .
 Հոգիդ ի կերպ աստուածութեան եռանձնեայ
 Փարեալ զմարմնովք՝ յեղու ի տարր հոգեղէն ,
 Փայլ ըզփայլի տաս քան ճաճանչ յեթերէն .
 Երկինք բիւրեղ աստեղց , մարմինդ՝ հոգւոյդ կայ .
 Յօդոյս ծայրից ծիծաղախիտ ծաւալիս ,
 Այդ անաղօս՝ յաւիտենից օր ծնանիս :
 Քո սուրբ ճակատ վեհին հովիտ հաճոյից ,
 Քո երկնածիր գիտակ համայն լուսասփիւռ
 Քան ճառագայթ արեգականս է համբոյր ,
 Սպիտակարան անտղակաճառ քան զերկնից .
 Քո կապուտակ պատմութեանի խորշք թրթռուն՝
 Նոր թերթս երկնից յերկինս ի վեր յաւերուն :
 Աչքս բանաս դու հրաշագեղս աննրման ,
 Եւ մահացուաց եւ անմահից սխրալիս .
 Բիբքս շարժես սիրահողովս եւ հրալիս ,
 Երկինք կայտուն եւ տիեզերք թինդրս տան .
 Խարտեաշ զուարթնոցն երամ ըզքեւ պատ առնու
 Զինչ շրջանակ ոսկի , զինչ բակ արեւու :

Յուշիկ գրն՝ այն սաստուածակիր տաալանակ

Ամենուրեք զն հեղուցու զընտրհա իւր .

Եւ անդ ուր օղք սպառեալ՝ եթերք հոսեն հուր ,

Խուն մի հանգիստ տըւեալ կուսին առ բանակ ,

Ամպ յամպոյ կաթն յաչաց ցողեալ սիրալիր՝

Յանմեկնեւն հայի խնամոց վայրն՝ յերկիր .

Եւ այնչափ ցողք քամիք տեղան ի ժամուն

Ծիւք եւ ծըղիք շնորհաց սփռին ի ծոցէն ,

Զի զգայ երկիր զիւրն անվըկանդ ապաւէն .

Որ եւ յերկնուստ կարկառեալ թեւըս փայլուն ,

Տանել թըւի զկայս մահացուաց յայն սահման՝

Ուր վասն իւր գահք յաւիտենից կաղմեցան : . . .

Եւ ահա բարձր հաստատութիւնքն շարժին ,

Եւ ահա դրուներն վերանան աննիաղ .

Արանակերպ հասեալ կայ Աոյսն հեղանաղ .

Եւ յանդիման իւր գրտանէ առաջին

Զայն զոր յերկրի գերագրգուեացն ըզՅիսուս .

Փարին յիրար իբրեւ ճաճանչք միառոյս :

Նա էնն Աստուած , սա մայր ինքեան Աստուծոյ .

Ի պարս հոգեաց՝ սոցա միայն է մարմին ,

Յոր սրխրացեալ գիտէն եւ հայր եւ հոգին ,

Այնքան կարէր տանել փառաց մասն հողոյ .

« Երկինք , դոչէ Երրորդութիւն , լուարձեք .

Սա է դրշխոյ , սըմա սպասեակըս լերուք :

Սա ինձ դրսարիկ հօրս անմահից անմահի .

Սա Մայր Բանիս անըսկըբան հօր Որգւոյս .

Սա փառակցիս ինձ հարսնացեալ է հոգւոյս .

Սա կուսութիւն յերկինս հանուր եւ յերկրի ,

Մէք՝ Աստուած , սա՝ մեղ Աստուծոյ մերձաւոր ,

Եւ զօրութեանցս ահեղ՝ լուծ հեղ եւ հըզօր :

Ողջ լեր վեհեցրս վերառեալ Իսկուրհի » :
 Եւ հրեշտակք՝ « Ողջ լեր, ասեն, մեծ գրչեսց » :
 Եւ երկինք. « Ողջ լեր, հրամանաց մընամք քոյ » :
 Եւ երկիր. « Ողջ լեր օժանդակդ, աշխարհի » :
 Իսկ Տիրուհին. « Որ էնդ օրհնեալ Տէր յամայր .
 Արարածք, ողջ լիք, ես հանուրց եղէ Մայր » :

ՊԱՀՊԱՆԻՉ ՈՐԴԵԳՐԱՅ

Վաղարին լարք , խուսափէ քնար ի գրրկաց
 Եւ սիրտ նըւաղի ,
 Յորժամ ըզքեղ իշխէ հընչէլ ամօթխած ,
 Ո՛վ մայր քաղցրաղի •

Մայր , ո՛հ , մայր , եւ յառաջ իբըր խաղալ
 Թէ ոչ պընդէս զիս ,
 Զիս՝ յոյր ճակատ ծըղի գըթոյդ կարկառեալ
 Գըրեաց յՈրդեգիրս :

Չէր ի չըրթունս իմ ի մատաղ եւ թոթով
 Հէշտ այնպէս կոչ մօր՝
 Յորժամ գըրկացն ի քաղցր աննոյր զիս գորով
 Կամ ածէր յորոր ,

Եւ ոչ սնընդեանս ճերմակ աղբիւրքն անփրփուր
 Այնքան ինձ քաղցրիկք ,
 Եւ ոչ տըխեղծ տխոցս այնքան կենսատուր
 Էր նա զօրավիդ ,

Որքան ինձ այժմըդ մայր երկնից եւ դժխոյ ,
 Սիրով սիրարկու •

Ոյր եւ անուռն եւ իմաստ գեր ի վերոյ
 Զգացման եւ յալթկու :

Ո՛հ . . . այլ մի՛ զքեղ խոցեն արդեօք հառաչանք՝
 Որով լի եմք մեք •

Ներեա՛ , թոյլ տուր , զի չիք մեր այլ ըսփովանք ,
 Չիք այլ դիւր ումեք :

Հառաչանօք ուսաք կարգալ զայդ սնուն՝
 Զքաղցրագոյնն յանուանս .
 Եւ հանապաղ կռուեալ ի կիրրս մահուն
 Գովաւ կեալ նոր կեանս :
 Հալածականք յաշխարհէ յեղը ելեալ սուլ՝
 Մեզ դեռ սպառնայ շխարհ ,
 Խուն տախտակիս խանդան ալիք բռնամուղ ,
 Երկինս է խաւար .
 Ի յելեւէջս ոգւոց մերոց սիրաք հասան ,
 Մերձեցաք ի մահ .
 Մի շունչ է մեզ , ս՛վ Որդեգրացրս Պաշտպան ,
 Փութայի՛ր մեզ , ա՛հ :
 Ծղփասցի ծով , մրրրկեսցին մեդք եւ մըթարք
 Զի սանանեն աստեղ .
 Թէ եւ անդունդք կըլցեն ըզմեզ թէ սանդարք ,
 Գու մեր յուսոյ տեղ .
 Գութ քո խորին է քան զանդունդս ու անյատակ .
 Գէմք՝ քարկ քան զարեւ ,
 Բազուկք երկայն քան զճառագայթս ընդարձակ
 Գալ փարեւ ըզմեւք :
 Ոչ յառաւօտս ոչ ընդ երեկ վարդենի
 Արեւակ պայծառ ,
 Եւ ոչ ի շանթելն ի միջակէտ անդր երկնի
 Այնքան է փարփառ ,
 Որքան ի թուխ թիկանց մրրրկաց գալն ի դուրս
 Յըստակ լուսակէզ .
 Այնքան յաւէտ երբ զմեր վանես դու մըրուրս
 Զըքնաղ թըւիս մեզ :
 Արդ երեւեաց , արդ փայլակեաց , արդ ակն արկ
 Եւ շատ է մեզ այն .

- Ի խուն հայեացո՞ւ ամէն քո կան դիւր ծըրարք ,
 Կաս դու ինքն համայն :
- Որդիս անթիւս ստացեալ յերկինս քան զաստեղս
 Եւ զերկնիցն իսկ Տէր ,
 Յիշեա զի զհէգս յերկրի , ու անգամ զբազմամեղս՝
 Յորդեգիրս սուեր .
- Ոչ փառք բարձանց զբարձրեալն ի քեզ իջուցին ,
 Այլ վիշտք մահացուք .
 Հաճեաց... գիտեմ հաճիս թէ զսիրտ ի թախծին
 Առ քեզ ամբարձցուք :
- Անցաւ զԱստուած ծընար , ու անցաւ նա չեկեաց ,
 Յաւեաց քեզ ընդ այն .
 Յաւօք ծընարք . ապա սիրոյդ անձկայրեաց
 Գըրաւ եմք համայն :
- Գըլթոյ՝ որ զգահ եւ զգանձս ի քեզ զետեղեաց
 Իցէ՞ վայր հեշտի
 Քան վըշտահար սիրտ զըրկելոց իւր որդեաց
 Ի ցաւոցս հովտի .
- Ճշմարտիցի՞ եւ քոյդ անուն ն՞վ Պաշտպան
 Այնպէս քաջ կըշխո՞ւ
 Քան մինչ փայլէ՞ յորս ենն ի քեզ ապաստան՝
 Ձեանըդ շնորհաձիր :
- Յորոտալ խիստ տարերց հարեալք ի գեալին՝
 Կոխեաց ըզմեզ մարդ .
 Անց եւ դու ն՞վ հեղաձեմ յոյս մեր սրալին ,
 Եւ կանգնեացուք արդ :
- Զըզուէ երկիր , անգամ զովոյք կան յուրաստ ,
 Այլ դու ես մեր մայր .
 Ապախա լիցի բնաւ , միայն դիրի քո պատրաստ
 Բացցի մեզ յամայր .

Եւ յամենայնց թէ զմեզ հրամանք ինչ կամ պարտ
 թողցեն կողոպուտ ,

Զորդեգրութիւնս միայն բարձցուք անաղարտ
 իսպառ անկասպուտ :

Եւ թէ ցաւիմք եւ լամք՝ դու զքաղցրըդ ժրպիս
 հար յարաստուս մեր ,

Եւ հաշտութեան ծընցեն ծխածանս լուսախիս
 Յաւքս այս եւ քո սէր :

ԿՈՒՍԱԿԱՆ


S O N U. 4 U. 6

THE UNIVERSITY OF CHICAGO
LIBRARY
540 EAST 57TH STREET
CHICAGO, ILLINOIS 60637
TEL: 773-936-3300
WWW.CHICAGO.EDU

2003



Տ Օ Ն Ա Կ Ա Ն



Ի ՆԱՀԱՏԱԿՍ ՔՐԻՍՏՈՍԻ

Ի դիտոց լերանց առէք զօծելոյն նըւագ՝ սիրտք սրբոց ,

Որք ի բըլուր մահուն յառիք անընդոստ .

Շիջանին արփիք , վերաչընչեցէք դուք ըղսիրոյն բոց .

Բոց հատանէ նորոց կենաց ծառոյն ոստ .

Գեա ծիրանի աղբերացեալ քառավտակ

Ի դիտակէն բարձուէ հոսէ հրակայլակ .

Մահ հարկանէ կենաց շուք

Վերածնանին մահացուք :

Չայն տուք աւետեաց , գերեգարձք են ձեզ որդիք այլազգեաց .

Գան թաթաւեալք եւ ցողացայտ կարմրորակ Յափանց Յորդանու մինչեւ ի Գանգէս , ի ծագս աշխարհաց ,

Խաղան փրկչին վերամարտիկ նահատակք .

Զխարդ հարեալ զահ եւ ըզմահ առաթուր
 Կարմիր մանեակ զուլամբ մընչէն սիրասուր .
 Ո՛վ սրտանեակք երկնահորդք
 Ո՛վ նազելի օրիորդք :

Սէր կենարարին վառէ զկամեցողս ի զէն երկնազէն .
 Ի Յիսուսէ պընդի արխեղծ ու ալեւոյթ .
 Հանթ մանուածաւալ խաղայ յերակունս ,
 սիրտք՝ երկնի արօփենն :
 Չիք պանծալի սպաս քան երկնից լինել փոյթ .
 Փառք են մանկանց ձօնել առւողին սիրա մա-
 տալ ,
 Փառք են քաջաց քրիստոնեայ մահ անզըմբաղ .
 Հոնպա առւողին տայցի սէր
 Ո՛վ նահատակք տիրասէր :

Ի ՆՈՅՆՍ

Հողի սիրատանջ
 Ի մարտ աննահանջ
 Յօժեւոյն հանդէս
 Երազլնթաց
 Ի գոռ ասպարէս
 Յարարս քաջաց
 Իջանէ ի գործ
 Յասէ անփորձ :
 Քարշեալ սրտաթուռ
 Քառաթեւ մըկուռ
 Վազէ ի ճակատ
 Հըսկայ յոխորտ •
 Քրիստոսեան հըրատ
 Յորայ ի սիրտ յորդ •
 Թօթափէ յաչաց
 Հանթ կայծակաց :
 Անգընդոց փաղանգք
 Բազմաբիւր վահանք
 Մըղեղ են յարդի
 Քաջին ընդդէմ •
 Յոսոխս իւր պընդի
 Պէս բոց ճոխաճեմ ,
 Վանէ զապըմըն կուռ
 Յիր թաքթաքուր •

Ի շեղջ պարտութեան
 Զինուց գիւական
 Յակառն երկնաբերձ
 ԶՅիսուսի դրօշ
 Կանգնէ մերձ ընդ մերձ .
 Եւ իւր ապարօշ
 Մարտին մրցանակ
 Ընարէ զփուշ թագ :
 Որ ի թրուիչ սուր
 Ընդ հուր եւ ընդ սուր
 Մարտակից փրկչին
 Չըգայ յագոն ,
 Չիք սիրտ ի լանջին
 Հուր սիրոյ ըմբոն .
 Յուսող երկնապիշ
 Յաղթէ ըմբիշ :

Ի ՅԻՇԱՏԱԿԻ

ԱՄԵՆ ԱՅՆ ՍՐԲՈՅ

Լուայ ձայն մեծ բազմութեան յերկինս՝
ասելով Ալէլուիա :

ՅԱՅՏՆ . ԺԹ .

Նրման ծերոց խարխափելոց գրանց ի դուրս
Ձոյր արտասուք լոկ լընուն զաչըս թափուրս ,
Ի մենաւոր լուեալ խըղէն ձայն խրախից
Ըզբազմելոցն ի տաճարի փափկալից ,
Հառաչելով կարկառէ ձեռն ի քընար ,
Եւ էջ , ասէ , ընկեր կուրիս իմ չըւառ ,
Ե՛կ երթիցուք , թէպէտ ախորժ թէ արխուր
Ձայն արկանել առ տաճարաւն այն ամուր ,
Գուցէ հարեալ վանգիս՝ ունկան գըթասէր՝
Չարձակեսցէ անվարձ զողորմ վաստակ մեր :
Հանգոյն եւ ես ի միգամած կենցաղոյս
Որ հազիւ հազ ներէ հայել յերկնից կոյս ,
Յանկարծ սրբութեա ի վեր վազեմ , մայր Սիօն ,
Չերկնագումար լուեալ որդւոց քոյին տօն .
Որոց լըքեալ ըզհողեղէնս այս անարգ
Ի լուսաճեմն արգ յանմահից բազմին յարկ :
Ո՛հ , թէ եւ իմ ի զըպրութեան անդ կենաց
Իցէ գրրեալ անուն եւ բաստ կայանաց ,
Թէ երկրաւորս այս չէ տաղտուկ խուն բարբառ
Որոց լըսեն զանհատական սիրոյն ճառ ,

Թէ նոք երջանկաց հաղորդութեան գոյ բաժին ,
 Որոց ի ստուերըս դեռ մահու պանդրխտին ,
 Թայլ արա , մայր , քնարաւ սրբախա վերամբարձ
 Հարցաբանել զողջոյն զանմահն իմ եղբարց :

Ո՛վ վեհավայր երկնից խորան
 Երանութեանց ասպարէզ ,
 Բացիր սրբախա կայ յերեւան ,
 Քանզի անմարթ չեք ինչ քեզ .
 Ո՛ւր են սրբոցն այն դասակք
 Մեզ եւ զուարթնոց հարազատք .

Որք իբր առ հողմն առաւօտին
 Ի ցողագին շուշանաց
 Եւ ի վառից թերթից վարդին
 Եւ յանուշից ծաղկոցաց՝
 Ճամբակ խընկոց բարդ ի բարդ
 Ծառալացեալ յոք հանդարա ,

Կամ իբր առ փող մարտայարդար
 Ի զօրասկտըն վըստահ
 Գէտակընկալ մարտկաց գումար
 Ի յաղթութիւն կամ ի մահ ,
 Ողջոյն արւեալ կենցաղոյս
 Առ անձանօթն ելին յոյս .

Կամ թէ պանդուխտ տարաշխարհիկ
 Ընդ բիւր անցեալ վիշտ եւ ծուփ
 Զ յեալին հանգիստ ի հօրն գերկ
 Գայ դիտելով հուպ ընդ հուպ ,
 Եւ անդր ի ծոց կաթոգին
 Զըգէ զխարխախն անակիին .

Այսպէս առ ձայնն երկնահրաւեր
 Ակընկաւոյցք խորագլխած
 Ի մի խըմբեալ յուսալից սէր ,
 Հրաժեշտք հնարից մահացուաց ,
 Յազաանն ի սէր անձնատուր
 Ելին յաշխարհն անարխուր •
 Ուր անմահից եւ մահացուաց
 Բազմեալ յաթոռ հինաւուրց
 Հաստիչն հրդօր եւ հայր Աստուած ,
 Անբուն աչօք յառեալ շուրջ՝
 « Սրբբուծեամբ զիմ պատեցէք
 Ասէ , զգահոյս , ո՛վ սրովբէք » :
 Իբր աղաւնիք՝ աչք ի բարձունս
 Հողիքն ի սիրտ մընչեցին •
 Զվանդակ լանջաց ի թեւս թըրթուունս
 Հարեալ՝ սիրով մաշեցին •
 Գիշերաւարտ աստեղաց
 Հարցանէին զկայս իւրեանց •
 Այն ինչ զըստուերքըս մերկացան ,
 Այն ինչ ընդ մահ վազեցին ,
 Այն ինչ վառեալ աչքըն բացան ,
 Ո՛հ , ըզքեզ Տէր հուստ տեսին •
 Տեսին , եւ ոչ եւս յիշեն
 Ըզտիւզերքս համօրէն :
 Չանկաւ ի սիրտ նոցին այն սէր ,
 Որ ընդ խաբեան կենցաղոյս
 Առատուերագիրըն պատկեր՝
 Իբր ընդ մնայունն ինչ ընդ լոյս ,
 Զայնքանս աննէ սրբտակաթ •
 Ո՛վ մահացուաց խոր թակարդ :

Որպէս տաղտուկ ցրրախն ձմերոց
 Լըքին զերկրիս օթեւան ,
 Ելեալ սարտեան ի փրշոց
 Ծաղկունք անփուշ անծորան .
 Հոտ բուրեցաւ անուշից
 Տարափք հեղան ցօղալից :

Ոչ ոք ընդ կրունկըն կարկառէր ,
 Ոչ ոք բառնայր ինչ աստուստ .
 Եւ թէ պըշնոյր ոք՝ ազգ առնէր
 Սիրեցելոցն ի հեռուստ՝
 Որք պանդրխտինս ի խոնարհ ,
 Թէ նդ այս եկայք ճանապարհ :
 Յերանութեանն յաւխտենից
 Արդ ի վայելս անկասկած՝
 Խումք արարեալ հոգիքն անբիծ
 Հրձուեալք երգովք սո. Աստուած ,
 Իբրեւ սափորք տաճարին
 Սեռն սիրով զեղանին :

Ո՛վ, զի մեծ , զի հոծ ամբոխից անդ ժողով
 Որք ի մի ծոց կուտեալ կապին մի զմիով .
 Ոչ այնպէս կուռ կազմեալ փաղանդ եկք ընդ օդ
 Ըզհարաւոյ դիտելով շունչ ջերմահոտ
 Զանազանեալ պարուք յայգու դարնայնոյ
 Աւետաբերք մարդաց , մայրից եւ անդոյ՝
 Դեռափրթիթ ծառոց շարժուն ի դադար
 Իջեւանի նըւագաձայն հաւուց պար .
 Ոչ այնպէս խիտ զըսկանդիւեանն ըզխարակ
 Ծովայածիկ պատէ բաղից գումարտակ ,

Եւ ոչ սաստիկ այնչափ ի բարձր լերանց
 Ուղիսինահոս դրդէն հոսանք հեղեղաց ,
 Գետս յարուցեալ յովկիական ծոց յաւէժ
 Յորձանտախառն ալեօք խուժել ծովավէժ ,
 Ի բիւրեղեաց փրջեալ բեկորս բաղմաբիւր
 Ծօծան ճապաղ ծաւալ փրփուր առ փրփուր •
 Որպէս սրբոցըն խիտ կաճառք ի Սաղէմ
 Յանտես ծագաց երկրէ հասեալք տարադէմ :
 Անկեցուն մի շունչ մի երգ մի բարբառ ,
 Զանժամանակն օրհնելով տէր եւ սպառձառ •
 Ըսկիզբն աւարտ երգոց անձառ ալէլու
 Որ անմահից կենաց ոգի է ազգու •
 Եւ բովանդակն արքայութիւն ի մի թինդ
 Ի մի քրնար սիրահարուստ աղէպինդ :

Ո՛ղջ լերուք , ո՛ղջ ինձ լերուք
 Ո՛վ ցանկալի հողիք սուրբք ,
 Յորոց երբեմն երկինք զուրկ
 Երեւէին տիպք թափուրք՝
 Մնալով սրբախց ձեր ամբիժ
 Աւ աստուածեան իբր առ դիժ :
 Ելցէ հասցէ ձեզ ողջոյն
 Որ ի սրբտէս երերուն
 Եւ յերկրամած քրնարէս
 Չիշխէ թեւել արծուապէս •
 Ո՛ղջ լիք ողջ լիք խրմբովին
 Յաւերթութեամբ Անմահին :

Ո՛ղջ լեր Սիոն , ազատ քաղաքդ Աստուծոյ ,
 Զոր ոչ արտօսրբ խռովեաց ոչ ձայն կոծոյ •

Ողջ լեր սրբոց ակրնկալիք մեր միակ ,
 Վասն որոյ կեամքս եւ մեռանիմք համարձակ :
 Եւ դու արժան տան այնպիսւոյ գրչիւոյ մեծ
 Որ զինքն ըղՏէր բարձեր զբարձողն զաստեղց ,
 Որ զերկնի խինդ , զերկրի յոյս , զահ գրժոխոց
 Յամենարաւդ ունիս ծրարեալ ի սուրբ ծոց ,
 Եւ խոնարհեալ յաստուածամերձ գահոյից
 Ընդ տիեզերս պատիս աչօք գրթալից ,
 Ո՛վ եղեւոց ու անեղին դու մայր անձառ ,
 Ողջ լեր ողջ լեր Մարիամ , ողջ լեր խապառ :
 Ողջ լեր հայրդ Ադամ զուգակցաւդ հանդերձ
 Սրբեալ զարտասուս յաչաց լուսայեղց ,
 Մատիք աներկիւղ առ կենացն ուղեչ
 Ոչ եւս քրովբէիւք հրազինեալ պաանեչ ,
 Այլ ինքնահրաւեր ձօնելով պրտուղ
 Լի օշարակաւ կենաց հոգեբուխ :
 Ողջ լեր նախկին զոհդ առաքինութեան
 Ի վարդափրթիթ քում նրնջեալ յարեան ,
 Եւ նախդ ընդ մահուն խաղացեալ ընդ դրունս ,
 Որ զուարթնոց իսկ ած արտօսը ի յաչկունս ,
 Երբ ընդ դողդոջուն մրնչմամբ հովանեաց
 Անլուսից դիպեալ քոյ ականողեաց ,
 Եւ շուշանափայլ լանջացրդ կապոյտ
 Եւ արենաթուրմ վարսագեղ դիխոյդ ,
 Ամենայն շնչովքն ըղքեզ՝ քաղցր Աբել՝
 Յանյարիւր քրնոյդ չուժեցին թափել ,
 Եւ անմեղութեանդ կային պաշտօնեայ
 Յունայնութեան լուս բանախցն Ոլիւմբեայ :
 Ողջ լեր հաւատոց հայրդ աստուածատունկ ,
 Դադարք ընտրելոց ծաղկամբք լիախունկ .

Քահանայապետ աղեաց քոց սիրուն
 Ի ծուխ խարուկին անկեալ բաբախուն ,
 Յոր հայրն հանուրց զիւր տեսեալ Միածինն
 Յանասանն դահուն վաղեաց սրբոագին ,
 « Կացէք ո՛ հնազանդք , զո՛հ առ այդ սուսեր
 Ինձ լոկ Աստուծոյս պատրաստել մարթ էր » :

Ողջ լեր սրտանեակ դու անախտակիր
 Զվարրս հրեշտակաց իջուցեալ յերկիր •
 Որ սանձեցեր զսէր եւ զնախանձ անյաղթ
 Ըզյաղթկուս մահու եւ ջուրց անվրկանդ •
 Այգքան մեծ է սէր եւ ահ բարձրելոյն
 Ի փափուկ մանկան սիրտ եղեալ ըզբոյն :

Ողջ լերուք կաճառք սուրբք հնացեալ ալեաց
 Ընդ պանդուխտ կողերբք ջերմ արմաւենեաց ,
 Ոյք յիշատակաւ կայիցն երջանիկ
 Սրգախառն յուսով դաւուրս ձրգէիք :

Ողջ լեր երկնադէտ հաւգ անապատի
 Տըքնող ըստուերաց , խորամուխ սրբախի •
 Որ ըզնաբատեան դաշտից ամլութիւն
 Բիւր համբերութեամբք լոցեր ծաղկադոյն :

Եւ դու առաջնորդ աղին խըստամբակ ,
 Որ ըզծով ի սաան , ըզվէմ յանապակ ,
 Ըզցող ի մաննա եւ զանձրեւ ի հաց
 Եւ ի լոր փոխեր ըզփեաուրս մրրրկաց ,
 Մեծըգ տեսողաց եւ դպրութեանց հայր
 Ողջ լեր օծելովդ եղբարբ իւղածայր :

Եւ դու ի հօտէ ամբարձեալ ի գահ
 Անարի սկայից նահատակ անահ ,
 Որ եղեալ ըզսիրտ ի սաղմոսարան
 Երգովք մրցեցար ընդ երկինա անդամ ,

Ի հեղ հանդրրուանս , ի ճակատրս գոռ
 Ձստուած իջուցեալ յայգուէ ցայգըն խոր :
 Ո՞ղ լերուք ո՞վ վեհք գաղտնեաց յայտարար
 Եւ աստուածամուխ արծուիք երկնապար •
 Որ զանմահին բան եւ շունչ հրաբորբոք
 Ի տառ մահացու յօղեցէք ողոր :
 Քաղաքավարեալք դուք աստուածագիծ
 Անգիր օրինօք ի սիրտ ձեր անբիծ •
 Եւ դուք որ գրաւոր ըստացայք պատուէր ,
 Եւ զեկեղեցի յանապատն անբեր
 Ձեզ նըշգեհակից ընդ տապանակին՝
 Մինչեւ ի Սողեմ տարայք անմեկին ,
 Եւ յոսկեթեւից քրօբէիցն ի լանջ
 Հետազօտէիք զհաշտութեան ճաճանչ :
 Եւ դու յաւէտ ո՞ղ լեր մեծ ժողովուրդ
 Նոր եկեղեցոյ սընեալ ի խորհուրդ •
 Ոյր՝ իւրօին Աստուած քայռ ներկեալ արեամբ
 Արկ ի պարանոց սիրոյ օղալամբ ,
 Ընդ աղխեալն Եդեմ զոր եբաց խաչիւ
 Հորդել ճանապարհ դիւրին եւ հեշտիւ :
 Ող լեր դու շողկապ օրինաց կրկին
 Ազատ պարերգուդ ի բանտ արգանդին ,
 Կարապ Յորդանու , տատրակ մենասէր ,
 Արեւուն կենաց հրեշտակ լուսաբեր ,
 Որ ափով ջընջեալ զԱնմահին ճակատ
 Ընդ լուսացընցուղ հերացն առագաստ՝
 Բիբ աչաց ի բիբ պարկեշտ ի ժրպիտ
 Ընթերցար ըզկերս սիրոյ Յիսուսիդ :
 Եւ դուք որ ընդ կեանս իբրեւ լոյս ի ջուրս
 Ժըմօտելով սահեալ հարէք ըզփետուրս

Զառ ի հրեշտակաց ձեզ արեւալս յանօթ ,
 Մանկո՛ւնք երջանիկք , կենաց առաւօտ ,
 Ըզկաթն եւ զարիւն , ըզմարս եւ ըզլոյս ,
 Զըգեալ շունչս երկու՝ թողէք առ Յիսուս :
 Եւ դու որ առ նոյն՝ նախ ի հրասարակ
 Ըզկենացդ առ խաչ հեղեր ըզբաժակ ,
 Քարավրէժ կոծմամբ երկնից արեւալ թունդ ,
 Կարմրաթեւ հոգւոյդ զուարթնոց բերեալ գունդ :
 Եւ դուք որ նորին զհետ ի գանս ու ի գելս
 Իբր ի բուրաստանս ճեմեալ օսկեթելս ,
 Ըզլեկայականն առեալ բրաբիոն
 Յաղթողք ի մահու ելէք ի Սիօն :
 Ողջ լերուք եւ դուք փրկչին սիրասուն
 Աշակերտակցօք եւ կանանց դասուն ,
 Որ ընդ լուսակոխ Տեառն ընդ գարշապար
 Անխոնջ ընթացիւք գնայիք հեղաբար •
 Որք արկեալ ուսկանս ամենայն ազանց
 Ի գերաշխարհիկն արկէք սիրոյ ցանց •
 Ողջ լիք ըսա սոցունց երթեալքդ անմոլար
 Հարց , վարդապետաց աստուածախումբ պար •
 Գրիգորք լուսատուք , Յովհանք օսկէխօս ,
 Ներսէսք եւ Սահակք , Բարսեղք եւ Ամբրոս •
 Որ զսանդարամետս ի բանից օտարափ
 Ըզհերձիւք զինեալն՝ եղէք զինաթափ :
 Եւ դուք անտոմնեան ճետք , անօթք հոգւոյն ,
 Անըզբաղ կենօք երկնայնոց հանդոյն ,
 Որ զվերինն անդորր կոչեալ յամայնս
 Ի քարանձաւաց ու աղբերց հովանիս՝
 Միայն ընդ միայն խօսէիք ընդ սէր
 Փոքու խարոցաւ ընդ մահ էւ եթեր •

Եւ որք մեղուօրէն գործակիցք ի վանս
 Հաւատար վարձուք եւ յերկնից խորանս :
 Եւ դուք նազելիք փափկութիւնք երկրի
 Կարծեցեալ զուարթունք ի մահուս վայրի ,
 Ոսկեծղի տաճարք գեղոյ եւ շնորհաց
 Երկնից տարփացեալ խուսքք օրիորդաց ,
 Որ զակնախրափղ բարեաց բիւր վայել
 Զոր ձեզ խոստանայր աշխարհս ընծայել՝
 Տարեալ ծածկեցէք յամուր կուսաստան
 Աշխարհիս յուսոյ անյուշ արգելան .
 Եւ որք դիմագրաւ ի կրկէս մահուն
 Ըզմահ սարաուցէք , կոյսք վըկայք սիրուն :
 Ողջոյն եւ ձեզ շունչք քաղցունք , կոյս հոգիք
 Լաւութեանց քանդակք սրբապօրծ մանկիկք ,
 Որք յանցս համառօտ ընդ լալեացս հովիտ
 Ծաղկունս հիւսեցէք լոկ գեղափրթիթ :
 Այլ եւ ձեզ ողջոյն , ողջոյն եւ համբոյր
 Տըրամալից սըրտիս հատորք անարխուր ,
 Որք ընդ իս ի նոյն սընայք գիրկ ջերմին
 Ըզմիոյ մօր կաթն արբաք յորրանին ,
 Այլ դուք չըզիտեմ՝ զհարդ ընդ զուարթնոց
 Դաշինըս կըուեալ հարէք վաղ ըզկոծ .
 Յայնքան սիրելեաց ճողոպրեալ թեթեւ՝
 Հարէք յարտասուս մեր զհոգւոյդ արեւ .
 Եւ դուք անծանօթք իմ արեանատուք
 Սրբոց դասակիցք , եւ դուք ողջ լերուք :

Ողջ լիք ով սուրբք համօրէն
 Զորս արդ հրեշտակք ողջունեն .
 Որք ըզնաւակդ ի տառան

Ընդ յարածուխս ովկիան
 Յետ այնքանեաց փոթորկաց
 Հարթեալ ըզգէզ կոհակաց
 Յաստղն յուսոյ լուսածեմ
 Սիրով հողմոյն ուղլեալ գէմ,
 Եւ հաւատով առեալ թինդ
 Յուզղեակ խաչին ամրապինդ,
 Պատկահամբար հասէք յայն
 Նաւահանդիսան յաւխտեան :
 Հատան երկայն արտասուք
 Ակընկալիք, ահ եւ սուգ .
 Ընդ մէն կայլակ մի արեան .
 Համբոյրս առէք աստուածեան :
 Օհ, ի կայիցդ անվըրդով
 Հայեցարուք յայս ժողով
 Տարուբերեալ եղկելիս
 Գարանակալ ընդ ալիս
 Եւ ըզգըլխովք մեր վերուստ
 Զահեցէք լոյս հարուստ .
 Շընչեցէք սիւդ բարեկամ
 Առ ձեզ բերիլ զայս երամ .
 Եւ առ որ զձեզն կոչեաց՝
 Եղբայրակից մահացուացս,
 Անդուլ լերուք բարեխօս
 Շըրթամք հոգեաց սիրահոս .
 Պատրաստեցէք մեզ կայեանս
 Բնակակրցիլ յաւխտեանս :

Յ՝ ԱՌԱՔԵԼ ԱՊԵՏՍՆ

Չայն սահանացդ արիւնըռուշտ Տիբերիս ,
 Ո՞ւմ հառաչէ ի լըռութեան գիշերիս •
 Լուսին չեանս հանգոյն գիշեր յաւիտեան
 Մինչ ի կոճեղ ձրկնորսն ավանց դալիլեան ,
 Ուսկանաւոր հանուրց զարմին Ադամայ
 Հըսկէր ընդ քաջ հեթանոսացն հօր՝ Պողայ •
 Եւ ոչ այնքան զըւարթ կանխէր յօդս արեւ ,
 Որքան ամուքս ի մահ եղեալ դէմ թեթեւ :
 Ինձ գեղեցիկք սոքա քան զուծ նախահարց
 Խայտացելոց ի խընկաբեր բըլըակաց •
 Նոքա որդւովք զերկրի սահման լըցուցին ,
 Սոքա զորդիան երկնաբընակս արարին :
 Որպէս մըշակ հասեալ յաւուրցըն վախճան
 Յերկ վաստակոցն արկանելով զհիւսս ական ,
 Նոյն եւ սոքա չկուես արձակեալ սպարայած ,
 Տեսին ըզհուեսնս հողեծ ընուեղ զաւակաց •
 Ու ի քեզ հայեացրս մի արկին սէգ քաղաք ,
 Եւ սարսեցին կապիտուլեան քո աստուածք •
 Ցասեաւ Ներոն , ցասեան հիւսարտք եւ ատեանք ,
 Մահ վըճուեցին • ո՛հ , ընդէր մահ եւ ոչ կեանք :
 Մին ըզգլուխ զոր սայր փրկչին ի կըշիս
 Մինչ ընդ գընգի մատնըչին գայրն ի գըրգիս ,
 Արդ հեղաբար ի սրատուանդան աայ խաչին ,
 Ուղղել ազատ ըզգարշապարս ընդ երկին •

Միւսն յեռանդան սիրոյն զեղեալ ցրպարպատ
 Դիմէ ձօնել զաղբիւր արեանն անընդհատ . . .
 Փրպտին հողիքն խեղոյն միմեանց պատահեալ
 Ի կիցս երկնից ճանապարհին լուսափայլ : . . .
 Ա՛ղ լեր հռովմ՝ չիցես դու այլ խորան դից ,
 Այլ դրօշակիր գագաթն անխառն կրօնից .
 Գահոյք կայսերց խորասուզին ի Տիբեր ,
 Դրդուին դրօշեալք եւ քաջ արանցրն պատկեր .
 Պետրոսեան պերճ աթոռ եւ պարճք պօղոսեան
 Պաշտօն առնուն ի ցուրտ լերանց խուժաստան .
 Յորչափ զեռան ջուրք յովկիան սարսառակ
 Ամբարձցէ նիշ խաչին գրլուխ յաղթաբեր .
 Անձանօթից ամիանց յերկիր տարաշխարհ
 Չայն աւետեաց հասցէ ոգւոց կենսարար .
 Թողցէ զանտառս երէվայրեացն օթակից՝
 Եւ գիտնագոյնրս քննեսցէ զեւն երկնից .
 Չամեհի գաշան ահօսելով կասլուտակ
 Սուրբ տաճարացն ածեալ ուխտից պատարագ ,
 Ի ծունր անկցի դէմ գրմբեթին երկնաճայր՝
 Քան զոր չամբարձ երկիր հասաչին շքեղ վայր :

Ի ՅԻՇԱՏԱԿԻ

ՍՐԲՈՅ ԱԼՈՅԻՍԵԱՅ

Սիրեմ ես զօրն երանեակ
 Որ յիշէ զիմս Ալոսեակ,
 Հրոչակելով յերկրի տօն
 Զառաքինւոյն գերբղգօն,
 Որ վէ՛հ յերկրի եւ յերկինս
 Մոգէ զվերինս եւ ներքինս :
 Աստուածութիւն եռագէմ
 Ի հոգւոջ անդ սրբաձեմ
 Պայծառափայլ զիւր տիպար
 Կրոշմեալ դիտէ սիրաբար :
 Այլ աչք եւ միտք իմ յապուշ
 Կալ գէտ զիմացն այն քնքուշ՝
 Շլացեալ հայիմ գեանակոր,
 Եւ գրտանեմ հրաշքս նոր .
 Մանուկ տիօք անաւագ
 Ծընեալ ի բաստ բարձրունակ,
 Ըջսերձութիւն եւ զաշխարհ՝
 Զամէն գրբէ արհամարհ .
 Խոնարհագոյն բընաւից
 Համարի զանձն իւր ամբիծ .
 Ոչ անհրմուտ աշխարհի,
 Այլ հրմտագոյն եթերի .
 Եւ վաճառէ զամենայն
 Ի սէր միոյ լոկ ուլան .

Յիսուսաւանդ մարդարախն ,
 Որով երկինքն հայթհայթին .
 Անու սիրով լուծ ընդ ուս
 Զոր արկն հեղոց հեզն Յիսուս .
 Երթայ նըստի մենագին
 Մըխի ' խորհուրդս երկնային ,
 Եւ բախէ զսիրտն անընդհատ
 Եւ հառաչէ սիրահատ ,
 Եւ մընչէ հեզ եւ լըռիկ
 Եւ ցօղէ դառն եւ քաղցրիկ :
 Քանզի պանդուխտ է յերկնից՝
 Համարի զայն՝ անձին բիծ .
 Եւ արտասուօք հանապաղ
 Որ ի սրբտէն սիրավաղ՝
 Կամի լուանալ զիւր աման .
 Եւ զի նա ջինջ է համայն ,
 Յանդուլ տեղոյ տարափին
 Մաշի անօսըն մարմին .
 Այլ եւ զայն ոչ գըրէ շատ .
 Ո՛վ սիրոյ հնարք անձնադատ .
 Ինքնին զինի սէր փափուկ
 Քան ըզգահի՞ճ չարաշուք .
 Առեալ խայթող խարազան
 Կոծէ զիրան սրբբազան .
 Եւ վարդակաթ ճապաղիք
 Զըքնաղ զամէն քան ծաղիկ ,
 Հոյլ հոյլ հոսէն ի լանջաց
 Եւ ի յուսոց ճըզնաղգեաց :
 Քանզի արկեալ գամ մի զաչս՝
 Տեսանէ զՏէրն իւր ի խաչ ,

« Աստուած մեռաւ ասէ 'նդ իմ',
 Եւ պատճառք՝ մեղքն ռիսերիմ՝
 Ո՛հ, պարտական եմ մեղաց,
 Եւ ընդ մահու քո Աստուած » :
 Եւ քան ըզհուակ կենաց պահ
 Կանխէ կամօք զանձն ի մահ .
 Ազգ ազգ կրտսէ զիւր մարմին
 Որ չբմեղան ինչ նրմին .
 Որչափ հեծէ նա ի ցաւս
 Հոգին ի սէր հարու ծափս .
 Եւ արտասուք ըսպիտակ
 Անբրժութեան նըշանակ
 Որպէս շուշանք շողաշար
 Ի խաղս առուաց հեզավար
 Խառնին յարիւն վարդապոյն ,
 Զոր ծընանին զըղջութիւն .
 Այլ չիք չարեաց ի նմա փուշ .
 Ամենեւին է ն' անուշ .
 Եւ երկոքեան սուրբ վըտակք
 Իբրեւ գետոց օժանդակք ,
 Մին ըսպիտակ միւս կարմիր
 Զուգեալ թափին ի յերկիր .
 Ի որքան կայլակք ի վայր գան՝
 Այնքան ծաղկունք ամբառնան
 Հիւսիլ պըսակ յերկնից ծոց
 Ի կաթոգին զըւարթնոց ,
 Որք թացեալ թեւս յայն առուէն
 Եւ առ Յիսուս ցուցանեն :
 Գըթան երկինք բովանդակ .
 Կոչէ Յիսուս զիւր որդեակ .

Եւ ոչ այնքան սիրալիք
 Խնամող հրեշտակն իջեալ ժիր
 Ձհողի մանկանն այն եբեր
 Ու ի հողեղէն ամանն յեռ ,
 Որքան զամանն այն յօժար
 Արդ բեկանե սիրահար ,
 Եւ արձակէ զհողին այն
 Ընդ որ ինքնին հրաշանայն ,
 Խոստովանեալ աննախանձ
 Ըզանն՝ ինքեան զուգասպանձ ,
 Եւ քան զիւր թեւս իսկահուր
 Ըզնա լինել սիրասուր .
 Որ եբրեւ փայլ փայլական
 Հասեալ յերկրէ բացական
 Ի մի բլթիթ յերկնի ծայր
 Ու ի բարձրագոյնն եհաս վայր .
 Ձիւրդ հողոյ տարր անարդ
 Տանէր զհողին գերայարդ .
 Ձիւրդ մանուկ մ' ապիկար
 Գոյր սրով բէկց հաւասար ,
 Եւ մշտանէր կայր անկէզ
 Յաստուածային հուր սգարտէզ : . . .

Ո՛վ բարձրամիտ մահացու
 Հասէր երբեք այս բարձու .
 Դու որ յուղեա յար զեթերս
 Եւ զանդընդոց խոր ընդերս ,
 Քանի՞ արդեօք ասակոց լոյս
 Յարեգական հասցեն յոյս .
 Ո՞րքան , առա՛ , ոլիտի հուր
 Ձայագոյն վառել սիրտ մաքուր .

Անբըծութիւն որքանի
 Կըշիւ միոյս այս լինի :
 Իսկ ես երկնից չեմ հասու
 Նըժգէհ հովախ մահացու .
 Զարմունկն եղեալ ի գեափն
 Պըշոււմ միայն ընդ երկկն .
 Եւ որոճեմ գլխատակ
 Զոր աստ թողեր Ալոսեակ .
 Եւ ի նոսին սըխրանամ
 Ճարակիմ ու ոչ յազենամ :
 Սիրեմ եւ ես սերտ ըզքեզ
 Հեափս սիրոյն յասպարեզ .
 Ո՛հ , չունիմ սիրտ քեզ արժան ,
 Այլ սերս այս չէ անարժան .
 Չեղէ այն քեզ նրման ,
 Սակայն այլոց ետու ձայն .
 Եւ բերի զքո սեղանով
 Սիրարս մատաղրս սիրով ,
 Եւ յառկայծեայն իմ պատրոյդ
 Լուցի լապտերս քաջառոյդ :
 Ես իսկ անցի նդ դաշտ եւ գեա
 Ի քո դաւառ ըղձահեա ,
 Զաստուածատուի քո գըլուխ
 Համբուրեցի սըրտաբուխ ,
 Եւ ղերկնունակ քո նըշխար
 Ետու մանկանցն իմ աւար : . . .
 Իսկ այսօր կամ տարադէմ
 Յերախանէն՝ զոր սիրեմ .
 Ծով եւ ցամաք լեառն եւ գեա
 Ընդ իս եւ իման անջըրպեա .

Եւ միայնակ քո զանուէնս
 Հընչեմ յօտարս ինձ ափուէնս . . .
 Սակայն դու մերձ կասս առ իս
 Մերձ եւ իմոցըն բերիս :
 Ե՛ն էն ի տան անդ մանկուէիք
 Ինձ եւ յաւէտ քեզ սիրուէիք ,
 Զի մերձաւորք հասակաւ
 Մերձք եւս սրբախց տեսակաւ
 Որք կատարեն ըզքո աօն
 Քո պէս ցանկան դո՛ւ ըզգօն .
 Սըփուեն սիրով քեզ ծաղկուէնս
 Ըզսրբախց կիրս անուշուէնս .
 Ուխտըս դընեն քեզ պէսպէս
 Զի հաճութեամբ հաստատես .
 Հանգիւր ի տուն՝ ուր սանք իմ ,
 Ընկալ զաղերս մըտերիմ .
 Միոյ միոյ նոցա տուր
 Զայն քո շընորհըս մաքուր՝
 Զոր բերէիրդ յամսըն յայն
 Յոր՝ րաքանչիւր արդ նոքայն :
 Իսկ ինձ որ անդր ըստ քո տիս
 Եւ սեաւս ունիմ ի սրբախս ,
 Ու այսօր հատեալ ոստ վայրի
 Ի պարտիզէս որ խամրի՝
 Արկանեմ յայն ճանապարհ
 Զոր քո սիրէ գարշապար ,
 Ինձ ի՛նչ հանցես ի պարգեւ
 Որ ճահ կըշռի արդարեւ : —
 Ինձ՝ մասն հանցես զարտասո՛ւնս .
 Պատուէ զարտօսր եւ Յիսուս .

Արդեօք եւ քոյդ սրտամուճան
 Ոչ էր այնքան հրաշազան ,
 Թէ արաստուաց մարգարիտ
 Զայն չանկանէր շիժ առ շիժ :

ՀԱՌԱԶՔ

Ի ՀԱՂՈՐԴՈՒԹԵԱՆ ՍՐԲՈՑ

Յեկեղեցւոյ նախատիպք յԱյրարատեան գաղա-
թանց
Որ զնախընծայն պատարագ խնկեաց ի հոտ նոր
ծաղկանց ,
Որ զհրաշալին միութիւնն աստուածութեան եւ
հոգւոյ
Նկարագրեաց յԱղամայ եւ յԵւային անձին ծոց .
Որ յանմեղին Աբելայ մըկըրտեցաւ վարդ-արիւն ,
Զկենսավտակն ի խաչին օրինակեալ տէրունւոյն ,
Եւ զաշխարհիս յոյս ծրփին՝ քաջայանդուգն ըս-
տանձնեալ
Զտարերց կապտէր սպառնալիս գոլով երկնից դե-
մակալ ,
Սրտահառաչ շունչ հիւսիսոյ
հոլաթեւեալ դէմ ընդ հարաւ՝
Ի ճեմ խաղայ գրախտից հոգւոյ .
Քորք իմ ու եղբարք , բացէք անձկաւ :
Ոչ վայրապար որպէս հողմն ընդ անապատ անկեն-
դան՝
Ուր յաւաղուտ մոխրատիպ խըրեալ կայ յոյս բը-
նութեան ,
Ոչ որպէս հուր շքմուլիկ հրդեհելով զօդս անծախ ,
Կամ շանթեռանդըն կայծակ տիեզերաց գոռ զբմ-
բաղ .

Ոչ ի մայրիս մըրըրկեալ մեծաշառաց փոթորիկ ,
 Կամ խաղամարտը յովկիան անդընդաքահ խեռ ա-
 լիք .

Սա ոչ այսպէս բարձրորոտ , յայանաբարբառ , հո-
 լանի .

Այլ որպէս ծուխ հեղատլաց , որպէս անձայն հո-
 վանի ,

Սրտահառաց շունչ հիւսիսոյ
 Հողաթեւեալ դէմ ընդ հարաւ ,
 Ի ճեմ խաղայ դրախտից հողւոյ .

Քորք իմ ու եղբարք , բացէք անձկաւ :

Մըղունն առեալ ի ներքուստ հողւոյ հառաչս հրա-
 փեռուր՝

Վարեալ վարդի անարդել ընդ տիեզերս ընդհա-
 նուր .

Ոչ ծաւարմունք վայրաց , ոչ խոնաւ նըմին ասպա-
 րէզ ,

Երկրասպարիսպ ոչ բրդունք լերանց սրահանգք ձիւ-
 նադէզ ,

Ոչ խիլ եւ խրամ սահմանաց , ոչ բռնութիւն զի-
 նազգեաց ,

Ոչ կար ձեռին , ոչ սրտի կամք զօրեն կալ դիմա-
 կաց .

Այլ ընդ երկինս եւ երկիր դիմագրաւեալ նահա-
 տակ

Քան ըզգիմեալն յարեւմուտս արեւելից փայլատակ

Սրտահառաց շունչ հիւսիսոյ
 Հողաթեւեալ դէմ ընդ հարաւ
 Ի ճեմ խաղայ դրախտից հողւոյ .

Քորք իմ ու եղբարք , բացէք անձկաւ :

Զի զանդիտես, արդ արի, արդ հառաչես սիրտ
ցաւած,

Թէ ոչ անմեղ՝ այլ սահման անասման ետ քեզ
Աստուած.

Զամէն բարբառ հեղամուռնչ ելեալ ընդ ցելս սե-
նեկիդ՝

Երկինք կրկնեն ի վերուստ, կրկնէ լալեացս այս
հովիտ.

Գու քան զեթեր ծաւալուն երթաս սիսիս ըզհա-
նուրբք

Որք յանմահիցն անդ խորանս ու որք ի տաճարս
աստ են սուրբք.

Այս սքանչելիք են խաչին, այս գործ սիրոյն Յի-
սուսի,

Իւ մեղապարտն յուսագնեալ՝ յեկեղեցիս խուս-
խուսի.

Սրտահառաչ շունչ հիւսիսոյ

հողաթեւեալ դէմ ընդ հարաւ

խաղայ ի ճեմ դրախտից հոգւոյ.

Քորք իմ ու եղբարք, բացէք անձկաւ :

Ո՛վ զօդք յերկրի, զօդք յերկինս՝ հաղորդութիւն
դու սրբոց,

Ե՛կ լից ըզսիրտս այս յուսով, անշիջական վառեա
բոց.

Ասա՛, քանի՛ բիւրբ են ինձ հաւստացեալ հարա-
զատք

Ընդ որս ծածուկ կապանօք կապիմք ի սիրտ ան-
անջատք :

Եկայք եղբարք իմ եւ քորք ինձ անձանօթք երե-
սօք

Միտարբառ մնչեցուք առ որ դիտէն զիս միշտ
ձեօք ,

Առ ում սեղանն ի հեռուստ ընդ աղաւնեաց երա-
մուց՝

Ազոռաւացեալ եւ այս սիրտ թեւակոխէ գալ ի
բուծ ,

Սրտահառաջ շունչ հիւսիսոյ

Հողաթեւեալ դէմ ընդ հարաւ ,

Խաղայ ի ճեմ գրախափոց հոգւոյ .

Քորք իմ ու եղբարք , բացէք անձկաւ :

Իբր ի գրբոյն ճախճախուտ զքարահարկառն հեր-
ձեալ պորտ՝

Հառաչանացս այս բոց գէջ դիմէ աղատ ընդ ո-
ւորտ .

Կայծ ընդ կայծից հրաձուլեալ յօդասարիկն ընդ
շաւիղ՝

Իբր ի ծղօտէ վտռեալ պրակ՝ ստեղնածըգի վեր ու-
ղիղ ,

Քերէ զչբրթամք այս հառաչ՝ մրտախոհին մենա-
ւոր ,

Յերիտասարդ եւ կուսին խառնի՝ մաղթանքս հրա-
ւոր .

Յօղէ ընդ ջերմն արտասուս որբոց ու այրեաց լը-
ռեւեայն ,

Եւ յայլ աշխարհ բանտերոցն հնչի հեծ խոր եւ
երկայն .

Սրտահառաջ շունչ հիւսիսոյ

Հողաթեւեալ դէմ ընդ հարաւ ,

Խաղայ ի ճեմ գրախափոց հոգւոյ .

Քորք իմ ու եղբարք , բացէք անձկաւ :

Ոչ եւս օտարք ոչ եւս խորթք , այլ համահարք
համամարք

Յկեղեցւոյ եմք որդիք եւ ի Յիսուս գոլ եղբարք •
Հայ եւ Սըկիւթ եւ Հելլեն , Սարմատ , Տեւոտն եւ
Հնդիկ

Միով ըստեամբ դիեցաք՝ միջնաշխարհիկն եւ խու
ժիկ •

Մի խօսք , մի ձայն եւ շունչ նոյն • համախափազ
համակամք ,

Ամենեքին ընդ Աստուած եւ ընդ իրեար բարեկամք •

Ամենեքին ըղմիոյն , զամենեցուն խնդրէ մին ,

Յամէն բոսկէս ամենայնք եւ աղօթեն ու աղօթին •

Սրտահառաչ շունչ հիւսիսոյ

Հոլածեւեալ դէմ ընդ հարաւ ,

Խաղայ ի ճեմ դրախտից հոգւոյ •

Քորք իմ ու եղբարք , բացէք անձկաւ :

Ո՛վ աստուածեան տուն հրաշից , հառաչս ի քեզ
անըսպառ

Հանապազօր մաղթանօք սրբոց՝ կացցէ դարուց
դար ,

Որպէս անանցն այն լապտեր՝ հսկեալ հանդէս
դաբիրայն ,

Զոր հուսկ փողոյն շիջուցէ աշխարհաւեր շունչ
միայն :

Ո՛վ , ո՞րքան աստ թաղծուծիւնք ընդ բերկրութիւ
նըս զուգին

Դիւամոլոր ո՞րքան սիրտք՝ հուպ՝ ընդ հրեշտակս
հոգեկցին :

Ոչ որ աղքատ աստանօր , անօգնական չիք ուրէք ,
Եւ անառողջ ոչ կարէ յետադարձիլ՝ հիւանդ հէգ :

Արտահառաջ շունչ հիւսիսոյ
 Հողաթեւեալ դէմ ընդ հարաւ,
 Խաղայ ի ճեմ դրախտից հողւոյ .
 Քորք իմ ու եղբարք, բացէք անձկաւ :
 Ահաւասիկ այս մի սիրտ յեկեղեցիս համօրէն .
 Աղօթեցէք ո մտանէք՝ վասն իմ՝ ընդ դրունս
 սրբաշէն :
 Աղգք եւ ազինք ամենայն, եկայք մտցուք ի սուշա
 յայս,
 Օ՛ն անդր աստուած թեւեսցուք ի յօթեւանան
 յարակայս .
 Ոչ աստ հսկէ հուր հրեշտակ երանութեանցն Ե-
 դեմայ,
 Այլ յաննախանձ վայելս՝ հետք հորդին որդւոց
 Ադամայ .
 Աստ զեող առեալ կան հաւատք, յոյս թեւածէ
 ժիր նուիրակ,
 Եւ սէրն անխանջ՝ խարուկէ զաստուածային պա-
 տարագ :

Արտահառաջ շունչ հիւսիսի
 Հողաթեւեալ դէմ ընդ հարաւ,
 Ե՛րթ յերախանդս Յիսուսի
 Ե՛րթ հաղորդեաց ընդ սուրբս անձկաւ :

ՉՍ.ՆԳՍ.ԿՔ ԵԿԵՂ.ԵՑԻՈՅ

Չանդակացն հարուչ ի դանչ
 Տրովեալ բախի սիրա իմ ընդ լանջ .
 Չայն Քրիստոսի հարսնահրաւէր
 Չողիս մանկանցն ուղղէ ի վեր :
 Առագասա երկնից յերկրի
 Յաստուածակոփ հիմեալ քարի ,
 Անբրծութեան կոյս տաղաւար
 Եկեղեցի սուրբ եւ պայծառ .
 Հին հաղբիւքըն բանսարկու
 Վարատելոցս յովիտ մահու
 Հիդոյն Եւայ որբոցն որդեաց
 Դու ճշմարիտ մայր մեզ շնորհաց .
 Ի մեղաց մէջ եւ մահուն
 Դու կառուցեր զանաղա քո տուն .
 Ըզմին քաւես , միւսոյն սաստես
 Չորդիսդ յերկին սուրբս աւանդես .
 Քանզ' ինքնին քո վէճ փեայ
 Յաւիտենից իշխող արքայ ,
 Յանապական քում սեղանի
 Անմահութեամբ միշտ զենանի .
 Ըզմարմին կեր տայ մանկանց
 Չարիւնն արբումն եւ դեղ կենաց ,
 Ընդ սիրա խառնի 'բրեւ հուր ի հուր
 Ըզսէր սրբուէ յողիս հանուր :
 Մեղաւորք անմեղք դառնան
 Մահկանացուք անմահանան .

Սեան՝ արտասուօք լինի սպիտակ ,
 Հողոյ բնակիչ պարէ 'նդ հրեշտակ .
 Անդ ամէն խրմբի հասակ
 Զերանելեաց կազմեալ դասակ ,
 Միոյ փրկչին իւր սիրարկու
 Եւ միոյ տեառն երկրրապառու .
 Անդ կըքեալ գրլուխք ծերոց
 Ամբառնան աչքս յուսակոծ ,
 Մարդէն մանկունք ծրղիս ի վեր
 Ծունրր կրկնեալ մարցն առնթեր .
 Քահանայ ի սէր ու երկեղ
 Անդ մշտանէ ի բեմն ահեղ .
 Պաշտէ խորհուրդ անձառելի
 Յայտնէ զԱստուած շոշափելի .
 Սարկաւազն ըզսեղանով
 Արծաթ առեալ շուրջ բուրվառով
 Խրնկէ զմաղթանս սրբբոցն յերկին
 Ու երկինք ու երկիր ի մի զուգին :
 Զըզականն անդ արտասուս
 Ծաւալանայ ցողոյ հանդոյնս .
 Եւ հոս սիրոյն անմահարար
 Հուր հատանէ յանձանց խոնարհ :
 Զանգակացն ի մէն դանդիւն
 Երկնից յուսոյ հրնչի վանդիւն .
 Եւ սիրտ յիշեալ զի նրժդէհ է
 Գամու դամու վեր հառաչէ :

ՕՐՀՆԵՍ.Լ Է ԱՍՏՈՒԱԾ

Օրհնեալ է Աստուած .

Յանհուն եթերաց

Յանծայր դաւառաց

Անուշակ վայրաց .

Ի բլլոց փառաց

Մըշտընջենակաց՝

Յըխորս սանգարաց

Վըհից խաւարաց

Ալուցն յատակաց

Ոչընչի դրացեաց ,

Օրհնեալ է Աստուած :

Յանարիւն զօրաց

Հուլից հրեղինաց ,

Եւ յաննիւթ քնարաց

Բիւրուց հազարաց

Հոմաշունչ սրընդաց

Չանազան նուագաց

Չայնից անսպառաց ,

Օրհնեալ է Աստուած :

Եւ ի նախն հաստուած

Խաւարահալած՝

Լոյս համատարած ,

Ու ի բոց աստեղաց

Ի գէս վարամանց ,

Յարեւուն վառած

Զահ հասարակաց •
 Եւ յեղբերս մահկաց
 Լուսնին հեղագնաց
 Գեղոյն գիշերաց ,
 Օրհնեալ է Աստուած :

Եւ յամօրախաղաց
 Գողոզ կատարաց
 Ի լերանց բըրբաց ,
 Կըշտից կոհակաց ,
 Ժայռից խոժոռաց ,
 Եւ յանապատաց
 Արձակ տարերաց ,
 Խանձարրոց մըրըրկաց
 Խորշից խորշակաց ,
 Օրհնեալ է Աստուած :

Եւ յօղոց բարեաց ,
 Ի հովոյ հովաաց ,
 Ի Թեւս անտառաց
 Հովանաւորաց :
 Յանդոց սարարտաց
 Ծածանուտ հասկաց ,
 Ի սիզոյ մարգաց
 Ի խոտոց վայրեաց ,
 Ի հոտոց դաշտաց
 Համասպրամ ծաղկաց
 Յերփն երփն երանգաց ,
 Եւ քաղցր ի բուրած
 Շողեալ շուշանաց ,
 Վառեալ վարդեկաց ,
 Մեղմ մանուշակաց ,

Փափուկ ելակաց ,
 Հրագոյն բոսորաց
 Արեանց աղբերաց ,
 Ոսկի գընտակաց
 Կողերց պարտիզաց
 Ծոպ ծոպ ծածանած
 Ի ծոց սաղարթաց
 Կարմիր խընձորաց՝
 Ճաստուկ դխտակաց
 Հուլիցն օգագնաց
 Եւ ոստանըստաց ,
 Տերեւեալ տնակաց
 Բունից փարեղեաց
 Ազաա պալատաց
 Չագուց գրգուելեաց
 Պարուց թաաերաց ,
 Օրհնեալ է Աստուած :
 Եւ յուլիս հեղեղաց
 Ի ձայն սահանաց
 Յորդոր աղբերաց
 Կարկաջուն առուաց ,
 Գետոց հեղագնաց ,
 Գունդ գունդ սահանաց
 Քարավաղ վտակաց
 Փրփրադէզ վիճմանց ,
 Նըմանեալ գառանց
 Չինափայլ գեղմանց ,
 Կամ բարդ բարդ գիղմանց ,
 Ծըխոց ծաւաղմանց
 Ի ծաղրս լերանց՝

Ի յայդրս ծաղկանց
 Առուրցրն փայլմանց
 Կորահաս դարնանց ,
 Օրհնեալ է Աստուած :
 Եւ ի ծուփս ալեաց
 Ծայրից կոհակաց
 Անդուլ երեբաց
 Լոյծ ասարիզաց ,
 Կապոյտ կուտակաց .
 Եւ յերթըս նաւաց
 Յանհետրս շաւղաց
 Համապիլու հովտաց
 Համանիւթ դաշտաց
 Յանապատրն թաց ,
 Յանմոլար ընթաց
 Ընդ նիւս մրկանաց
 Ի թիւ սահագնաց ,
 Սպիտակատարած
 Թեւոցն ի սարգուած
 Հողմովք գոյ առած ,
 Եւ շուրջ շուրջ սատած
 Փրփրօք զիզամած .
 Կամ թեւք ամփոփած
 Եւ ոտս արձակած ,
 Ի խաղ անուադարձ
 Տըւեալ գոյթ աքեաց
 Պողովատաղգեաց ,
 Շողուլ շարթեւեաց
 Հրրով հրբեւեաց
 Մըխով մրդեւեաց ,

Յեւեւեջ անկաց ,
 Յանգուլ պատառուած
 Եւ յանգուլ կարուած
 Տրոփեալ տարերաց .
 Եւ իբր ի սրնկաց
 Ի ծայրից ծխանաց
 Ծուխըն ծառացած ,
 Մերթ յամպրս բազմած ,
 Մերթ հանգոյն հերաց
 Հըսկահասակաց
 Վարսահոծ վըհկաց
 Հոյլ հոյլ հոպոպեաց
 Զուսովք ծըփելեաց ,
 Հեա ընդ հեա հիւսուած ,
 Գանգրապեղ կըռած
 Թըխաթոյր ծոպաց ,
 Եւ օղածընաց
 Կըմանեալ ուրուաց
 Վ իշապամանուած .
 Այսքանեաւ սարած
 Ի կերպ յաղթազգեաց
 Կաւուն նաղանաց ,
 Դիմեալ տարազնաց
 Յերկիր հեռակաց ,
 Յափունս անմոռաց ,
 Ի քընին իրաց
 Ի խոյզ վաճառաց ,
 Ի համբաւ բարեաց
 Ի տես սիրելեաց ,
 Օրհնեալ է Աստուած :

Աւ ի հիւս այերաց
 Թլուչուն տարերաց ,
 Յապչոպ օղայած ,
 Ի խուճբա ամպրոպաց
 Մերթ գալարողաց
 Եւ մերթ պարզողաց ,
 Ի թուխրս դիմաց
 Երկնից եզերաց ,
 Ի խաան աղմրկաց
 Յամբոցըն հարուած ,
 Ի մանչիւն մրրկաց
 Ի բուք փոթորկաց ,
 Յըմոստ որոտմանց
 Փոյթ փոյթ փայլականց ,
 Ի յանկարծագանչ
 Շանթիս կայծականց
 Հրաձիգ խանձողաց ,
 Ի տեղ կարկրաց
 Խոշտանդիչ դաշտաց ,
 Եւ յուխս անձրեւաց
 Հեղեղարուցաց ,
 Ի խուճբս վտակաց
 Ի շառաչս ալեաց ,
 Ի շրճիւն խրճաց ,
 Ի կոփիւն վիմաց .
 Ի կոծիւն մայրեաց ,
 Ի վագիւն եղանց ,
 Խուճապ դազանաց ,
 Ի դանդիւն գողած
 Խոր արձաղանդաց

Չորոց եւ հովտաց
 Յահէղից [Թեղամանց ,
 Օրհնեալ է Աստուած :
 Եւ ի շրնչողաց
 Բիւրուց կենդանեաց ,
 Ի ձայն խօսնակաց
 Հաւուց գիշերաց ,
 Եւ յերգ ծիծեռաց
 Յայգուն ի բացուած
 Արդաճեմ դրրաց ,
 Ի հեղ աղաւնեաց
 Առւուս սիրարկուաց ,
 Աւ ի մունչ ողբասաց
 Հանդարտ տատրակաց ,
 Ի կերպ կարասաց
 Փետրոց լուսազգեաց ,
 Ի պէսպէս ճամկաց
 Սօս սիրամարդաց *
 Ի հօսս ոչխարաց
 Յանդեայս պաճարաց ,
 Յերէոց վայրեաց
 Աւ ի խուռն ամեհեաց ,
 Յառիւծոց սիգաց
 Յանգեղց եւ յարծուեաց ,
 Եւ ի նրհանդաց
 Խորոց ու անձաւաց
 Զեւնոց ճիւղաց
 Ախից վեշապաց ,
 Օրհնեալ է Աստուած :
 Եւ ի վեհէն այսց

Մարդկային ազգաց ,
 Ի սարնդիեցաց
 Տղայոց անմեղաց ,
 Յաղարծի դիմաց
 Եւ հնացեալ ալեաց ,
 Յառոյդ պատանեաց
 Եւ յօրիորդաց ,
 Յամուլից զիւզաց ,
 Ի հարց եւ յորդեաց ,
 Ի հեղ հայեցուած
 Աչացըն ծաւեաց ,
 Ի ճասուկ ծըղեաց
 Վայելուչ շարժուած ,
 Ի ձիգըս ձեռաց
 Յարուեստ ճարտարաց ,
 Ի թինդ եւ յընթաց
 Ժիր գարշապարաց ,
 Ի շունչ կենսազգեաց
 Եւ շարժ երկթերթեաց
 Շըրթանց վարդենեաց ,
 Ի շըրջման լեզուաց
 Թարգմանից մըտաց
 Հաղորդիչ կամաց ,
 Ի հանճարոյ սլաց
 Յերգս երգահանաց
 Բան բանաստեղծաց ,
 Ի գով գուսանաց
 Եւ հնչման գործեաց
 Օրհնեալ է Աստուած :
 Եւ յամէն գարձուած

Սըրախ նըրբազգած ,
 Ի խընդից հարուած
 Եւ յազգման ցաւած ,
 Ի հեշտըս շնորհաց
 Յանձուկըս վըշտաց ,
 Յայտըս խընդամած
 Եւ յարտօսը աչաց ,
 Յոգւոց խոնարհաց
 Յաղօթըս տնանկաց
 Որբոց եւ այրեաց ,
 Ի վըստահ հայցուած
 Որոց խնդրեն ըզհաց
 Ի հօրէն գըթած ,
 Հայցմամբ բախողաց
 Ժըտելով տէր՝ բաց
 Ըզգըրուես պարգեւաց ,
 Եւ հեզահայեաց
 Ի կերպս ամօթլեած
 Պատկառուի դիմաց՝
 Անբարբառ կամաց ,
 Օրհնեալ է Աստուած :
 Յամէն դէպք կենաց ,
 Ի ծնունդս համազգեաց
 Ի մահ նըմանեաց ,
 Մէջ յիշատակաց
 Վրկին հայրենեաց ,
 Ի սնար գամբանաց
 Ու ի գահոյս յարկաց ,
 Ի հրաշքս բազնաց
 Սըրբոց տաճարաց

Խորհրդոց մեծաց
 Երկնախառն իրաց ,
 Ի նախն իմացուած
 Ու ի հուսկ ըզգացուած
 Այսքան հանդիսաց ,
 Յեւանեւն յաստեաց
 Ի մուսա անտեաց ,
 Յեզր ամանակաց
 Յանդուհոս յախտեանց ,
 Հանուրց ի սկրսուած
 Եւ ի կատարած՝
 Յանձառն զանգուած
 Անմահից յօղուած՝
 Սէր համատարած ,
 Եւ ի բանակաց
 'Նովաւ զմայլելեաց՝
 Որք ի հողածնաց
 Եւ որք յաննիւթաց ,
 Եւ ի գերազանց
 Հանուրցն էակաց
 Կուսէն կուսանաց
 Որ ծընաւ զԱստուած ,
 Օրհնեալ է Աստուած :
 Եւ յեռահիւտուած
 Միաբուն պարզուած
 Յիւրուրոյն անձանց
 Անձառն լեզուաց
 Անհասըն մըտաց ,
 Չոր ինք լոկ գիտաց ,
 Ինքն ինքեամբ բաւած ,
 Օրհնեալ է Աստուած :

ՏԷՐՈՒՆԻ

ՅԱՆԿ

Նախերգան	5
ԽՕՍԲ ԸՆԴ ԱՍՏՈՒԾՈՅ	
Տէր, եթէ զշրթունս իմ բանաս	9
Առաջին ձայն սրտի մեղապարտի	11
Ուր էս	14
Վերադարձ առ Աստուած	17
Առ Աստուած	21
Առ Յիսուս	25
Դարձեալ ընդ Յիսուսի	27
— — —	29
— — —	35
Առ Յիսուս ի մատրան	37
Առ օթակիցն իմ Յիսուս	42
Առ խաչեալն Յիսուս	49
Առ խաչն սուրբ	52
Առ սուրբ սիրան Յիսուսի	54
Իզճք հոգւոյ	55
Օրհնութիւն տիեզերական սիրոյն Աստուծոյ	59
Աղերս ծերոյ	67
Մաղթանք մահու	70
Պատրաստութիւն յօրհաս	73
Ուղմոս Ծ	85
Աղօթք Մանասէի	88
Խեչակ սրտի	91
Միայն ի խաչի հանգիստ	92
Երկու վաշտքն երկնախումբք	93

Երանութիւնք Քրիստոսի	96
Հոգիս յօժար է	97
Մի լար	100
Եղիցին կամք քո	102
Սիրեցից զքեզ տէր	104
Հոգի եւ սիրտ համաձայնք	107
ՏՆՕՐԻՆ ԱԿԱՆՔ	
Ի մտերն Յիսուսի	111
Ի ծնունդ Յիսուսի	113
Ի յայտնութիւն Տեառն	126
Յաստղն արեւելից	130
Ի Յիսուս եւ ի մանկունս Բեթղեհեմի	132
Ի Յիսուս պատանի	134
Յայլակերպութիւն Տեառն	137
Ի կաղանդս մարտի	139
Ի յարութիւն Ղազարու	141
Յօր բարերանութեան	145
Յոանչուայն	149
Ի վերնատունն	151
Անձնանուէր ընթրիք Յիսուսի	153
Ի Գեթսեմանի	156
Մահ Անմահին	163
Հայեցցին ի նա յոր խոցեցինն	167
Բախէին զկուրծս եւ դառնային	171
Ի տապան Յիսուսի	173
Առ հրեշտակն որ նստէր ի վիմին	177
Յարեաւ . չէ աստ	180
Աւետիք յարութեան Քրիստոսի	181
Քրիստոս յարեաւ ի մեռելոց	182
Օրհներգ սիրոյ յարութեան Յիսուսի	185
Ի համբարձումն Տեառն	188
Առ Հոգին սուրբ	192
Ի տօն մարմնոյ եւ արեան Յիսուսի	194
ԿՈՒՍԱԿԱՆ	
Ողջ լեր թագուհի	201
Յանարատ յղութիւն եւ ի ծնունդ կուսին	205
Յանուն Տիրամօր	207
Յընծայումն կուսին	211

Աւետուհի	214
Յարտասուս կուսին	217
Ի ցաւս Տիրամօրն	219
Ի նինջ կուսին	223
Ի վերախոխուհի	229
Պահպանիչ Որդեգրաց	233
ՏՕՆԱԿԱՆՔ		
Ի նահատակս Քրիստոսի	239
Ի նոյնս	244
Ի յիշատակի ամենայն սրբոց	245
Յառաքելապետան	254
Ի յիշատակի սրբոց Աւրիսեայ	246
Հառաչք Ի հաղորդութիւն սրբոց	263
Զանգակք եկեղեցւոյ	269
Օրհնեալ է Աստուած	274

Էջ.	տող	Սխալ	Ուղիղ
21	2	Հասանին	Հասանեն
64	29	անկած	անկոծ
119	10	Զի բոցաշունչ	Զի բոցաշունչ

